



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


23356

990

398.5

2-16

1892



2010

ԾԻԾԱՂԻ ՏՈՊՐԱԿ

398.5 ԱՆԵԿԴՈՏՆԵՐ
Է-16

ՀԱՅ ԵՒ ՕՏԱՐՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ

ԴՊԻՐ Ս. Տ. Ս. ԾԱՀԱԶԻԶԵԱՆ

Թ Ի Ֆ Լ Ի Ձ.

Տպարան Մոմսես Վարդանեանի.
Типографія М. Вартанянца. Гановская ул. д. № 3.

1892

Դպիր Սմբատ.

„ԾԻԾԱՂԻ ՏՈՊՐԱԿ“

ՄԱՍՆ Ա.

ԱՍԻԱԿԱՆ ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

Մի շատ քաջ մարդ, կնոջն առած գնում էր ուխտ: Ճանապարհին պատահեցին եօթն լեզգի աւազակներ. նոքա ուզեցին կողոպտել ուխտաւորներին և առեանգել կնոջը: Մարդը կատաղեց և եօթին էլ սրախողխող անելով՝ անցաւ գործին:

Դորանից յետոյ մի խնջոյքում, ուր հրաւիրուած էին և մեր ուխտաւորները՝ մարդ ու կին, խօսք ընկաւ քաջասրտութեան վրայ:

—Մի անգամ շանը էնպէս հասցրի, պարծեցաւ մէկը, որ կլանչելով փախաւ:

—Երեք հաւի գլուխ, պարծեցաւ մի ուրիշը, մի սրի հարուածով թուցրի . . . և այլն:

Կինը, որ լսում էր այս դարդակ պարծենկոտներին, քիչ էր մնում բարկութիւնից տրաքուի, որ ամուսինը ոչ մի խօսք չի ասում իր քաջագործութիւններից .—«գոնէ իւր աչքի առաջ եօթն լեզգուն սպանելն ասի՛ . . . »

Բայց շատ որ համբերեց ու համեստ մարդու բերանից ոչ մի պարծենկոտութիւն չլսեց, բարկա-

ցած սրտով առ Աստուած կանչեց.

—Ախ, Աստուած, երանի սա մեռնի, մի ուրիշ՝
իմ սրտի մարդ ուզեմ:

Աստուած կարծես լսեց կնոջ խնդիրը. մի քանի
օրից յետոյ խեղճ մարդը հիւանդացաւ, մեռաւ:

Մի ամբողջ տարի, իբր սուգը պահելով, կինը
մանեկաւ, հարց ու փորձ արաւ և վերջ ի վերջոյ գտաւ
մի իր սրտի մարդ ու ամուսնացաւ վրան:

Պսակուած գիշերը, երբ նորապսակները
պատրաստվում էին քնելու, որտեղից որ էր,
ննջարանում մի մուկ դուրս պրծաւ և սկսեց դէս ու
դէն վազվզել. մարդը լեղապատառ վեր թռաւ
աղաղակելով.

—Ա՛ կնիկ, շո՛ւտ հա, թուրս, թուանքս, խան-
չալս տուր, էս անիրաւ գազանին սպանեմ, ասաց նա
և ընկաւ մկան ետեւից: Մօտ մի ժամ վազվզելուց
յետոյ, վերջապէս քաջասիրտ մարդը, գազանին պա-
տահամար ոտի տակովն արեց, սպանեց և յօգնած
ու քափ — քրտնքում մտած՝ նստեց մահճակալի վրայ,
որ շունչը ետ բերի:

—Պայ, պայ, պայ, պայ, ա՛ կնիկ, տեսա՞ր ինչ ա-
նիրաւ գազան էր, որ սպանեցի՞. պայ, պայ, պայ,
համմա ջարդեցի հա՛. տեսա՞ր, ա՛ կնիկ, տեսա՞ր ո՞նց
սպանեցի՞ . . . պայ, պայ, . . .

Կնոջ համբերութիւնը որ հատաւ, դառն ժպտ-
տով գլխին ջուխտ ձեռով «բամփեց» ու ասաց.

—Վայ հոդն էս իմ գլխիս կենայ, որ եօթն աժդը-

հա լեզդի ջարդողին մահ խնդրեցի, ու եկայ մի
քնձուոտ մուկ սպանող փսլնքոտի ճանկն ընկայ:

* *

Բժիշկը հիւանդին տեսնելուց յետոյ դեղատոմս
տուեց և պատրաստվում էր դուրս գնալ: Հիւանդի
տէրը չիմանալով ինչ անել տուած թղթի կտորի
հետ, հարցրեց.

—Պարոն դոկտուր, էս ճիւր անեմ, խմրցընեմ:

—Տօ մունդուիկ, ես մօլլա եմ, չարացած ձայն
տուեց բժիշկը դուրս գնալով:

* *

Քահանան նորամանուկին մկրտելուց յետոյ
տուեց կնքահօրն՝ ասելով.

—Ա՛ Թիւն, կարաս խորտեմ:

—Էտ թնչ վէտներս ա վէր կարամ վեչ, պատաս-
խանեց նա բոլորովին միամտութեամբ, ուզում եմ
դրա մօրն էլ խորտեմ:

* *

Ճօլունց Ակուփը գնում էր թուրքերը: Նա
իւր սովորութեան համեմատ՝ Հասկուլին*) էլ հետը
վերցրեց: Հենց մտաւ գիւղը թէ չէ, թուրքի շները
թափուեցին Հասկուլի վրայ և սկսեցին գզել:
Գիւղի պարապ թուրքերը հաւաքուեցին և հայի
շան յաղթուիլը տեսնելով՝ զուարթութեամբ ձայն
տուին.

*) Շան անուն է:

—Ա՛՛ Եաղաւք քեանխուղա՛, էրմէանիի բողղիլար*)։

—Ե՛օ՛վնդդ ալլահ թիւքսըն, պատասխանեց Ա-
կուփը, օնքեշ մուսուրման եղղըլըփտլար, բեաս բիւր
էրմէանի դա բողմասընլա՛ր*)։

* *

Քահանան մի երիտասարդի հետ եկեղեցու դաւ-
թում կանգնած խօսում էր։ Այդ միջոցին ժամկոչը
սկսեց գաւիթը սրբել, որից սաստիկ թողբարձրացաւ։

—Տէր հայր, մի քիչ դէնը կանգնենք, թողը
վրաներս է տալիս, ասաց երիտասարդը։

—Ե՛՛հ, ի՛նչ կայ որ, պտտասխանեց քահանան,
հին շորերս եմ հագած, ի՛նչ վնաս։

* *

Ծաղրածու կաղ ու խուլին միշտ մականունով
էին կանչում, որի համար շատ էր չարանում։ Չա-
տիկ օրը, հարեանը դռնովն անցելով՝ ողջունեց։

—Աճկտ լիս, ա՛ Բի՛ք, Քրիստոս յարեալ ի մե-
ռելոց։ Նա կարծելով թէ ուզումէ չարացնել, պա-
տասխանեց։

—Ռա՛դ, ըռա՛դ ըլի*) ասումեմ, թէ չէ Աստուած
վկայեայ, ի՛նչի՛ք ի՛նչի՛ք ծուլ կլեմ ու հենց քացի
կտամ, վէր քիթ ու պռունգդ արինըվիկ կըլի։

* *

*) Ակուփ քեանխուղա, հային խեղդեցին։

*) Տներդ Աստուած չինի, տասնուհինգ թուրք են հաւա-
քուել, բա մի հայ էլ չխեղդեն։

*) Քաջուիր, կորիր։

Շ...եցի Ծտուրանց Առաքելը, որին հետեւալ դէպ-
քից յետոյ կնքեցին «Եսրա-ի-լ-Եսրա-ի» անունով, գու-
թանաւորի համար հաց, ձմերուկ ու մածուն տա-
նելիս՝ պատահեց ծանօթ թուրքին, որը հարցրեց։

—Ա՛՛ Առաքել, հարեա գեղերսան*)։ Որովհետեւ
նա թուրքերէն չգիտէր, և գութանում մինչև 12
զոյգ եզներ կարգով շարէ-շար են լծում՝ ասաց։

—Եսրա-ի-լ-Եսրա-ի։

—Բեաս խուրջինդա նէա՛ ավարերսան*)։

—Խուրջինդա . . . քիչ մտածելուց յետոյ . . .
լափան-լափան դըր, հլուա՛ի դըր, ի՛նչ էլ լիլ ի՛նչ ծա-
րըր։

—Լափան-լափան նէա՛ դըր, քլուլակ նէա՛ դըր ա՛)։

—Լափան-լափան՝ հաց դըր, հլուա՛ի դըր ծա-
րըր։

* *

Լօռեցի քահանան խոտհարքից հարեանի
մի խորոմն իւր դեղի հետ խառնեց, տարաւ։ Տէրը ե-
կաւ քահանայի մօտ և չուղենալով միանգամայն գող
անուանել՝ դարձաւ նրան քաղցրութեամբ։

—Տէրտէր ջան, աչիդ միեռնեմ, էս ըսկի քեզանից
չի. դէ վուէր աչքովս էլ տեսնում, հըվատալ չեմ.
հըլբաթ սէլվորը շըշկիլ ա ընգել, իմ բլուլն էլ քոնի
հեա բերելա։

—Չէ, քիէ մատաղ, պատասխանեց քահանան,
սելվորի մեղքի տակը մի ընգնիլ. ես եմ բերել,

*) Առաքել, ո՛րը ես գնում։

*) Բաս խուրջինումդ ի՛նչ ես տանում։

*) Լափան-լափանն ի՛նչ է, կլուլակը ի՛նչ է, ա՛յ մարդ։

հըմա ընչրու թըլվարիս կուշտը ծնողացդ ֆուէ-
քոց ասելով եմ էկել:

* *

Շարուկ-շարուկին հարցրին.

— Թուրքերէն ինչպէս կասեն «կասկարայ» ին:

— Իրէ՛ք, ինչպէ՛ս ինչպէ՛ս, պատասխանեց նա:

— Գորտիւն.

— Լա՛ք Կա՛մ Գէ՛օլա:

* *

Ուստայ Մակին, զանգի ձայնը լսելուն պէս՝
գործիքները մի կողմը դրեց և շտապեց եկեղեցի.
քայց հենց ոտը շեմքը դրեց թէ չէ, տեսաւ, որ քա-
հանան «օրհնեալ եղերուք» ով վերջացրեց:

— Եդ ինչ չիւշտ պրծար տէրտէր. զանգակը նոր
չտուի՛ն, զարմացաւ նա:

— Իէ ինչ անէի պատասխանեց քահանան. «կլըն-
քատանը» կանչուած էի, վախեցայ թէ ուշանամ, զան-
գակը տալուն պէս՝ ժամասացութիւնը տանիցն
սկսեցի:

* *

Շարուկ-շարուկի մօտ եկաւ իւր ծանօթ թուր-
քը: Շարուկը կամենալով ասել, որ իւր համար,
միւս անգամ գալիս, քիչ փիփորթ*) բերի, երկու ձեռ-
քի բթամատերի ու ցուցամատերի ծայրերը իրար
կպցնելով ասաց.

— Մամմադ ջան, օ Կա՛մ . . . Կօլօ-Կօլօ, Կա՛մ-Կա՛մ-

*) Բոյս է, բալբայ:

Կա՛մ-Կա՛մ, Լընքիք-Կի՛քիք Կի՛քալար, Ժէր Կա՛մ Կե՛-
լիս, Ժէ Կի՛լ Գէ՛ալ:

— Փիփորթ նէմ դը ա՛յ քիշի:

— Օ՛. . . Ինչպէ՛ս-Կա՛մ-Կա՛մ Եկէլար, Կա՛մ-Կա՛մ «-
Կի՛լար:

* *

Քահանան, փոխանակ Ղուկասու աւետարանը
կարդալու, կարդաց « . . Յովհաննո՛ւ . . . »:

— Ես օր Յովհաննու չի, տէր խայր, ուղղեց տի-
րացուն, Ղուկասու է: Քահանան առանց մտածելու
շարունակեց նոյն երեսում.

— Իէ թող էղնի Կա՛մ-Կա՛մ . . . :

* *

Սպանութեան գործում մէկին վկայ էին նշա-
նակել: Դատաւորը հարցրեց.

— Ты что знаешь объ этомъ?

— Я ничаво ни знаимъ, г. судя, я слышилъ
что его били.

— Ты только слыхалъ? Садись, дуракъ, это
не фактъ-շարացաւ դատաւորը և դարձաւ միւս
վկաներին: Այդ ժամանակ վերոյիշեալ վկան, մի
ինչ որ բանի համար, շատ կեղտոտ խօսքով հայ-
հոյեց մօտը նստողին: Դատաւորը որոտաց.

— Ахъ ты балванъ такой, какъ ты смѣешь
ругаться?!

— Ты виделъ, баринъ? հարցրեց վկան:

*) Փիփորթն ինչ է, այ մարդ:

—Какъ можно видѣть, мерзавецъ!! Я слышалъ.

—Ты слышилъ *հա՛, պատասխանեց նա հեռանալով, сади, сади, этъ нн фактъ.*

* *

—Բաղնիս տեսել ես, հարցրին մէկին:

—Կերել էլ չեմ, պատասխանեց նա:

—Ո՞նց էր:

—Ո՞նց բըդէր ըլիւ, խոզի պէս էրկու պող ունէր էլի:

* *

Գերմանացին ու Ռուսը բեռնաւորած սայլերով ճանապարհի նեղ տեղում միմեանց հանդիպեցին և անզգուշաբար քշելով՝ անիւները ուժգնութեամբ զարկուեցին: Ռուսը բարկացած ձայն տուեց.

—Ахъ ты дубина этакій!

Գերմանացին չհասկանալով այս խօսքերի նշանակութիւնը, խոր մտածողութեան մէջ ընկըմունքով շարունակեց ճանապարհը: Հազիւ անցել էր կէս վերստ, նա յանկարծ բացադանչեց.

—А . . . *հոգիս, էտը հոգիս.* . .

Իսկոյն կանգնացրեց սայլը, ցած թռաւ և որքան ուժ ունէր՝ լետ վազեց դէպի ճանապարհը շարունակող Ռուսն ու հասնելով՝ շքնասպառաղաղակեց.

—Թի սամ տուիլի՛նա, թի սամ տոճֆ:

* *

Գիւղի շները թափուեցին Լօռեցի մի վայրենի չորանի վրայ. սա էլ ճարակտուր վազեց, մտաւ մօտ գտնուող եկեղեցին-պատարագի ժամանակ: Տեսնելով եկեղեցում ժողովուած ահագին բազմութիւնը, զարմացած ձայն տուեց.

—Պա՛, պա՛, պա՛, պա՛, էս թնչ զալումներն են ըլէ էս գեղի շները տօ՛, վուէր էսքան խալիսը վախութեններէն ըստի են պրծէ:

* *

—Ի՞նչ ես անում, երբ հարբուխ ես ընկնում. հարցրին մէկին:

—Խնայում եմ, պատասխանեց նա:

* *

Շ . . . եցի Քեալլափաչին, մի քանի համագիւղացուց հետ, բեգառով սայլ լծել տուին, որ զինուորների պաշարը տեղափոխի մի ուրիշ գիւղ: Սայլապանի թոյլութիւնից օգտուելով, զինուորները թափուեցին սայլը ու պահանջեցին, որ շուտ-շուտ քշի և այն՝ բոլոր սայլերի առաջ: Խեղճ Քեալլափաչէն ձեռով, ոտով ուզեց հասկացնի, որ եզները մեղք են. բայց զինուորները կարծելով թէ կամակորուժիւն է անում, մի լնւ, քու հաւանած, քօթկեցին:

Գառնալով գիւղը, ընկեր սայլապանները ծիծաղելով լիշեցնում էին քօթակը:

—Քեալլափաչա, բօլ էլ տուի՛ն. ա՛մա տուին հա՛:

—Տօ դէ թնչ տուին խեղճերն է՛, պատասխանեց նա. ամենքը մի մի սիլլա ու մի տաս-տասնը հինգ

քացի տուին, մնէլ մի «Լսաթակ» արին. ըսէլ ըլաւ թակէլ:

* *

Մօլլա-Նասր-Էդինը որտեղից որ մի թառ էր գտել: Նա ամբողջ օրերով նստում էր տանը, ձեռով կոթից մի տեղ պինդ բռնում էր ու մզրափով վէր հատում ու վէր հատում: Կնոջ որ շատ ջանին հասաւ, մի անգամ դարձաւ մարդուն.

— Այ մարդ, ես թառ ածողներ շատ եմ տեսել, բայց նրանք քեզ պէս մի տեղից չեն բռնում. նրանք շարունակ ձեռները դէս ու դէն են ման ածում:

— Այ ախմախ-ձայն տուեց մօլլան թառի հետ երգելով. նրանք տեղը չգիտէն, ման են գալիս, որ գտնեն. ես գտել եմ ու ածում եմ, էլ ուր ման գամ. . . :

* *

Թուրք զինուորին մի խմբում կանգնացրած՝ ուսուցանող սպան վարժեցնում էր: Սա մի քանի անգամ կարգի բերելուց և օրինակով ցոյց տալուց յետոյ հրամայեց.

— На месте.

— Դէրինան Մանսուր աղա գոյսըն, ման դա գոյիմ, պատասխանեց թուրքը *):

* *

Թիֆլիզեցին, Լօռեցին ու Աշտարակցին միատեղ հռնձ էին անում:

ձաշուայ հացին մի բղուղ մածուն բերին,

*) Ասա Մանսուր աղէն ուսին դնի, ես էլ դնեմ:

— Բա դու թնչ ես հսկանում, վրայ բերեց զիւղացին, որ չեղմակն էլ աճկերիտ հուփ ես տուել. ես հլա մի հենց բան գիդամ, որ քու պապի պապն էլ չի գիդալ:

— Ի՞նչ պիտի գիտենաս, ողորմելի, ասաց տեսուչը հեգնելով:

— Դէ ինչո՞ւ որցակը*) ծուղրուղու կանչելիս աճկերը հուփ ա անում, հարցրեց գիւղացին առողջութեամբ:

— Յիմար զքեզ, պատասխանեց տեսուչը նոյն եղանակով, դու էլ բան հարցրիւ. ես թնչ գիտե՜նամ ինչո՞ւ է փակում:

— Եդ նրա հմար ա փակում, այ գիդնական լուսում առած տեսուչ ջան, որ իրան հաղը անգիր ա գիդում, ասաց գիւղացին ու հեռացաւ լաղթութիւնը տարած:

* *

Մաճկալանց Թոփուզը թուրքերէն չգիտէր: Սրանց տուն մի թուրք հիւր եկաւ. Թոփուզը հաց ու ձու առաջ բերելով՝ այսպէս հիւրասիրեց. —

— Խոշ գեալդի, շարդաշ.

Օթուր տիտի,

Հացը կիծի,

Սաղի քեսամա,

ձոթի դա եմա:

* *

* *

*) Արդար.

Մօլլա-Նասր-Էդինը ոտով քաղաք գնալիս՝ տեսաւ, որ գետը սաստիկ յորդացած է. նա փիին նստեց և մտածում էր, թէ ինչպէս կարողանայ միւս կողմն անցնել:

Այս միջոցին նոյն կողմից քսան բանուորներ եկան նոյնպէս անցնելու. շատ «վերև ու ներքև արին», բայց չկարողացան անցնելու մի բարակ տեղ գտնեն:

Մօլլան, որ լուռ ու մունջ դիտում էր, յանկարծ ուրախացաւ իւր գտած հնարով և ձայն տուեց.

— Հը', չլի՞ քեչու(թն*) էք ուզում:

— Հա, մօլլա ջան, ձայն տուին բանուորները, թէ գիտես, ցոյց տուր, մի էդպէս լաւութիւն արա:

— Ո՞նց թէ գիտես. էլ ինչու համար եմ այստեղ նստել, որ չգիտեմ. ցոյց կտամ, ինչի՞ չեմ ցոյց տալ, փողի բան չի:

— Ի՞նչ տանք, որ անցկացնես:

— Աւել չեմ ասիլ, մի-մի աքասի:

Բանուորները համաձայնուեցին: Մօլլան ամբողջ խումբը երկու հաւասար մասերի բաժանեց, տասը հոգին իւր աջ և տասը ձախ կողմը՝ ձեռ ձեռի տուած կանգնացրեց. իւր աջ ու ձախ կանգնողներին էլ զգուշացրեց, որ իրան շատ պինդ գրկեն, եթէ չեն ուզում ձկների կերակուր դառնան: Այսպէս կարգի բերելուց յետոյ՝ սրտալի ձայն տուեց.

*) Զրի ծանծաղուտ, բարակ անցնելու տեղ:

— Դէ, ղոչաղներս, սրտներդ պինդ պահէք, մտէք ջուրը: Ամբողջ 21 հոգին մտան ջուրը և հեշտութեամբ առաջ էին գնում. բայց դեռ փք չհասած՝ վարի ամենածայրի բանուորին ջուրը խլեց, տարաւ:

— Մօլլա, մէկին ջուրը տարաւ, աղատիր, սղաղակեցին ընկերները լեղապատառ:

— Տօ անմախներ, ձայն տուեց մօլլան, դուք ինձ պինդ բռնեցէք ի՞նձ, որ դուք էլ հետը չգնաք. ինչ էք զահլա տանում: Ես պէտքէ բղաւեմ, որ աբասիս կորաւ, թէ չէ ձեզ թնչ կայ է:

* *

Ե... եցի Աչոնանց Խեչօն համագիւղացի Ծինձղարին 70 կոպէկ էր պարտ և երկար ժամանակ չէր վճարում:

Մի կիւրակէ օր փողոցում պատահեցին:

— Խեչօ, դարձաւ Ծինձղարը, տըսնը չորս շահի ես պարտ, խի՞ չես տալի:

— Ե՛յ, անմախ, էտ ո՞ւմ ես ուզում խափես. իրեք աբասի ուզալ(թու)նը հմի էլ տեսաւաւ տըսնը չորս շահի. խի՞, թուխսն էր ճուտեր արաւ...

— Վէր սանկես, 14 շահի ա, պնդեց Ծինձղարը: Սա հա, նա չէ, վերջապէս բանը հասաւ կռուի. Ծինձղարը ձեռի մհակով տուր թէ կտաս՝ Խեչօյի բաց կրնկներին:

— Վայ, ծեղ մատաղ, ան խալխը՝ աճկս տիւս տրաքեց, աղաղակեց Խեչօն. սըրա տունը քանդուի,

ես իբե+ Կէստի «—դալնա—ն եմ պարտ, սա հմի եկել
ա ասում 14 շահի ա:

* *

Առաջին նախակրթարանի հարցաքննութեանը՝
13 տարեկան կոպիտ երեխային ասացին, որ «Փա-
րիսեցու և Մաքսաւորի» առակը պատմի:

Երեխան հազաց, կոկորդը մաքրեց և զիւ ձալ-
նով սկսեց.

—Մի անգամ գնացին ժամը աղօթելու՝ «Փրիս-
տան ու Մաքսաւորը»:

* *

Հրէային հարցրին.

—Սաղ ածել գիտե՞ս:

—Ձէ, ասաց, ոչ ես գիտեմ, ոչ եղբայրս:

* *

Մշեցին խրցով բռնած սայլը մի դժուար տե-
ղով քշում էր: Դէմ յանդիման Նախավկայի վանքը
տեսնելով՝ խնդրեց.

—Նախավրգայ, սէլս աչղութենով աղատես օրա,
էրգու մոմ գը վառեմ:

Հենց այս խօսքի վրայ էր, որ սայլը ցած
գլորուեց դէպի ձորը: Մշեցին մի քիչ տեղ գլորուե-
լուց յետոյ՝ կանգնեց և փոխանակ եզներին օգնու-
թեան հասնելու, դէպի վանքը խէթելով՝ ձայն տուեց.

—«Վառա՛, վառա՛, Նախավրգայ, չըս վառա. դէ
վառա՛ Է, հըմը վառա՛ր հա՛. . .»:

* *

Քեալլափաչէն ցօրեն էր տարել Թիֆլիզ ծա-
խելու: Որովհետեւ թանգ գին արաւ ու ոչ ոք առ-
նող չէղաւ, չարացած՝ սայլի գլուխը դէպի գիւղը
շուռ տուեց ասելով.

—«Դէ հմի քերնացէք սոված կտորուեցէք»:

* *

Անփորձ տիրացուին ասացին, որ ճաշոց կարդայ:
Նա ակնոցները հանեց, քիթը թամբեց և բարձրա-
ձայն կկկացրեց.

—«Անթերցուածս յեզեկիէլէ մարգարէ Գլ—ի
ձ(ը)լթ. . .»:

* *

Լօռեցին որդու անառակ կեանքից զզուելով՝
կամեցաւ կեանքը ինքնասպանութեամբ վերջացնել:

Մի օր մէնակ դուրս եկաւ դաշտը, մի
տաս ֆնտանոց քար ընտրեց, ուժով վեր նետեց, ինքն
էլ տակը կանգնեց, որ իբր թէ՛ գլխին ընկնի, ջարդի:
Նա աչքերը վեր տնկած նայում էր. բայց հենց որ
քարը գլխին էր ընկնելու, ծուլ էլաւ դէնը կանգ-
նեց ու ասաց.

—«Ախր գլխին փսա Է. հլէ սըհաթին ֆօքե
հան կանի. ջհանդամը, վուէտիս էլա ըլի, բան
չկայ. . .»:

* *

Ձատիկ օրը հայր մի Դերմանացու պատահե-
լով՝ ողջուեց.

—Христось воскрес!

—Մալաթեց, պատասխանեց Գերմանացին, +—
Ես իմացուցեմ քեզ:

* *

Շնորհների Հօբոսը մի լաւ ձիու վրայ նստած
գնում էր քաղաք: Օրը որ թէքուեց, նա վախե-
ցաւ «Թելէթի գլխին» ձին խել տայ. վճռեց ճանա-
պարհի վրայ գտնուած խանութում գիշերել:

Խանութպանը ձին տեսաւ թէ չէ, ձեռն ու
ոտը «Հոխոսն էլաւ» ու մտքումը գրեց, որ ինչ էլ
կուզի լինի, ձին մի կերպ «ծպրպի»:

Առաւօտեան Հօբոսը արթնացաւ և խնդրեց,
որ ձին շուտ պատրաստեն, շտապում է: Խանութ-
պանը մի շատ համոզիչ եղանակով ասաց, որ նա
ոտով է եկել, ուրեմն ձի չէր կարող ունենալ:

Հօբոսը իսկույն հասկացաւ բանի էութիւնը
և մի քիչ մտածելուց լետով՝ սպառնալով գոռաց.

—Ասում եմ ձիս բերէք, թէ չէ ինչ որ հէրս
արաւ, էն էլ ես կանեմ. . .

—Ի՞նչ արի, յիշէ՛ր չէ՛ր քեզի ետի, պատասխա-
նեց խանութպան վրացին, ջարդած հայերէնով:

—Տուէք ձիս, կրկնեց Հօբոսը՝ ուղեկալով կանգ-
նել, թէ չէ էսա հուէրս արածն արի:

Խանութպանը ահ ու դողով ձին բերեց և
խնդրեց որ ասի, թէ հայրն ինչ է արել և ինքն
ի՞նչ պիտի անէր:

—Հէրս էլ, ձիուն հեծնելով պատմեց Հօբոսը,
մի անգամ մի էսպէս լաւ ձիու նստած գնալիս ա

էլել քաղաք. ճամպին ձին գողացել են—ոնց
որ դուք. նա էլ գաղաղած խուրջինն ուսելա ու
մնացած ճամպէն ոտով ա գնացել:

* *

Արամը ուսանում էր առաջին նախակրթարա-
նում: Երեկոները դաս պատրաստելիս՝ մօտը նստում էր
փոքրիկ Հայկը և ուշադրութեամբ լսում էր Արա-
մին, որը գեռ հեգելով էր կարդում:

—Ալամ, թոթովեց մի երեկոյ Հայկը, ինչ է՞նչ, ո՞ւր
է՞ս քեզի քանի քանի քանի քանի քանի քանի քանի:

—Դէ կարդա, Հայկ ջան, ասաց Արամը, տեսնեմ
կարմս:

—Ըհը՛. հոն-այի՛ն-ցո-հոց-պանիլ, ի՛նչ-այի՛ն-նո-
հոն-հոն-հոն:

* *

Ձինուորագրութեան ժամանակ, մի Լօռեցի
երիտասարդ աջ ձեռի մատերը գիտութեամբ կուշ
ածած՝ մօտեցաւ քննող անդամներին—

—Աղա, աչու ձեռս խաչից կնդրկծուկ ա էկած.
ինձ տանում էք ինչ անէք, ես վուէնց թրբանք
բընացնեմ:

—Քանի տարի կլինի, որ ալդպէս է, հարցրեց
նոցանից մէկը:

—Չուէրս, գլխիդ մատաղ:

—Իսկ առաջ ինչպէս էր:

—Ըսհենց, աղա ջան, մեքենաբար ձեռքը բանա-
լով՝ պատասխանեց Լօռեցին:

Շ . . . եցի Մլակի Հինգ տարեկան երեխան տեսաւ մի խումբ գոմէշներ, որոնք նստած որոճում էին: Նոցա մէջ նկատելով և իրանց թափալ *) գոմէշին, մօտ վազեց և կարծելով թէ մաստակ է ծամում, ձեռք մեկնեց թոթովելով—

— «Թափայ ձան, թափայ, մի պատայ սաղուծ տան»:

* *

Կինտօն ձկնով լիք թաբախն առաջը դրած՝ աղաղակում էր.

— Յոցխալը, աբա լաւ ցոցխալը . . . :

Մօտեցաւ մի կին և տեսաւ, որ թաբախում ձկները չեն շարժվում, սատկած են:

— Էս խօ մերած է:

— Ձէ, դեղի ջան, նոր Գնից:

Կինը վերցրեց մի հատ և քթին մօտեցնելով տեսաւ, որ հոտած էլ են:

— Փիւլֆ, ասաց նա զգուանքով, էս խօմ հոտած է:

— Ձէ, դեղի ջան, վրայ բերեց կինտօն, նոր Գնից . . . :

* *

Մօլայ Նասր-Էդինի մօտ երկու գանդատաւորներ եկան և խնդրեցին, որ իրենց գործը ճշմարիտ օրէնքով վճռի:

*) Ճակատին սպիտակ նշան ունեցող:

Մեղադրողն սկսեց.

— Ախր, մօլլա ջան, էս Աստուած կընդունի, որ ես քրտինք թափեմ, այդի շինեմ, սրա էշը գայ մտնի, փչացնի. բա սրան մի դատաստան չկայ:

— Միրուքս վկայ, որ թամամ հախ գանգատ է, պատասխանեց մօլլէն, դու դրուստ ես ասում:

— Դէ իշատէրն Բնչ դուխը քարը տայ, մօլլա ջան, արդարացաւ մեղադրեալը. չափարը պատռած, ինքն անլեզու հայվան, բաղումն էլ կանաչ խոտ. նա չըլի դու ըլես, մտնիլ չես ուտիլ. դէ ասա, ես սրանում մեղաւոր եմ:

— Հախ Ասսու, դու էլ ես դրուստ ասում, կուտեմ, կուտեմ, գլուխը տմբացրեց մօլլէն:

— Ախր էդ ո՞նց կ'լինի, այ մարդ, մէջ մտաւ կինը. գանգատաւորներէից կամ մէկը, կամ միւսը կ'լի արդար. դու երկուսին էլ արդարացնում ես. էդ պէս դատաստան կանեն:

— Ես իմ Աստուածն, ա՛յ կնիկ, որ դու էլ ես դրուստ ասում, վերջնական վճիռը տուեց մօլլէն:

* *

Բաղդատի խալիփաներից մէկը մի մեծ անկեւանոց էր շինել տուել, ուր աշխարհի ամեն կողմից այնքան անկեալներ էին հաւաքուել, որ էլ նորեկներին տեղ չկար:

Շահի խելօք վեզիրներէից մինը մի օր դարձաւ տիրոջը.

— Շահն ասլրած կենայ, թոյլ տուէք ինձ՝ ձեր

Ծառային մի փորձ անել անկեղանոցի վրայ, որովհետեւ ես նկատում եմ, որ շատերը կեղծում են և անկեղանոցը իւր նպատակին չի ծառայում: Շահը թույլատրեց:

Վեղիւրը հրամայեց անկեղանոցի բոլոր դռներն ու պատուհանները ծղոտով լքցնել և մի անգամից կրակել: Բոլոր կեղծողները, հրգեհից սարսափած՝ վեր թռան—փախան:

Մնացին միայն երկուսը պառկած: Թէև կրակը հասել էր մինչև նրանց շորերը, բայց նրանք լեռն էլ չէին նայում: Բայց երբ որ հասաւ մարմիններին և սկսեց խանձել, նոցանից մինը, առանց տեղից շարժուելու, հազիւ լսելի ձայնով կանչեց.

—Վայ... եանդը՛ւմ (վայ, երուեցի):

—Ախ, վրայ բերեց երկրորդը նոյն եղանակով, ետլըղ սան դօգիւլ սանն, գեգինան ետլաշըմ դա եանդի՛ւմ*):

* *

Առաւօտը վաղ-վաղ, գիւղացին հացի ձոթը կռան տակին, մի քիչ էլ ձեռքն ուտելով դուրս եկաւ փողոց:

—«Արա *») էս վախտին հաց կուտեն, նկատեց առաջին պատահողը, մի պատառ իս տուր:

* *

Թուրքը սար գնալիս՝ իւր ծանօթ Շնողնե-

*) Ախ, մենակ դու չես, ասա ընկերս էլ երուեց:

*) Այ տղայ:

ցուն մի կաղ ուղղ յանձնեց, որ պահի մինչև սարի վեր գալը:

Մի օր ուղղը Շնողնեցու տան շրջակայքում արածելիս՝ բաւականին հեռացաւ և հասաւ մի քերծի, որի ծայրին մի ծառ կար. նա մօտեցաւ, որ հառի տերևներն ուտի, ոտը սայթաքեց, ցած գլորուեց ձորը և ընկնելով Դեբէդ գետը՝ խեղդուեց:

Հայը գնաց քերթեց, կաշին ու գլուխը բերեց տուն, որ ժամանակին տիրոջը ցոյց տայ:

Թուրքը իջաւ սարից և ուրախ-ուրախ դարձաւ Շնողնեցուն.

—Դեպէսմ նեջա դը, դօստում, քեօքէալը՞ փ*)

Նա թուրքերէն չիմանալով՝ կանչեց չօբոսին, մի առ մի պատմեց ուղղի գլորուելը, խեղդուելը և Դեբէդ, որ թուրքին նոյնութեամբ հասկացնի:

Դորոք թարգմանեց. -

—Թուրք ախպեր,

Դաւէդ քերծի գլխին արածըլերդի.

Կրծլլանդի, կրծլլանդի,

Ծառի ճիւղքը ծլծլլանդի,

Ջուխտ ոտով դուս պրծլլանդի,

Երա դիւշտի, թմփլլանդի,*))

Սուալ դիւշտի, ղլլլլանդի:*)

*) Ուղղս ո՞նց է, բարեկամ, չաղացել է:

*) Դեռսին ընկաւ՝ թրմիաց:

*) Ջուրն ընկաւ՝ ղլլլլացրեց:

Ագետար ինանմերսան,*)

Բու բաշի, բու դա կաշի,

Լստար ափար, ըստար եշի (նայիր):

* *

Գիւղացին մի դաշխա*) մողի էր կորցրել՝ չալ չաթուն*) պողերին կապած:

Երկար սրոնելուց յետոյ՝ պատահեց մի քանի գիւղացու և յօգնելուց ու մողի դարդից շփոթուած՝ հարցրեց.

Բարի հոգի յեղ. Բալտա դաշխա ըրե՞րս — Կեանք ըլե՞ս, չալ չաթուն պողին հոգին:

* *

Օ Շուն Գալուստը Թիֆլիզում՝ մօտեցաւ մի թուրք խաշապանի և մի կուլեկանոց դախլին չըխկացնելով՝ ասաց.

— Բիր ազ աշ վեր,*)

Բիր ազ լաւաշ վեր,*)

Խուրդասի դա գերի վեր:*)

— Նա դիերսան, է՛յ, զիպօ,*) ձայն տուեց թուրքը:

— Բիր ազ դա օ զիպօյան վեր, վրայ բերեց Գալուստը:

*) Թէ որ չես հաւատում:

*) ձակատին սպիտակ նշան ունեցող:

*) Մազախառն բրդէ կարճ թուկ:

*) Մի քիչ կերակուր տուր:

*) Մի քիչ լաւաշ տուր:

*) Մնացածն էլ յետ տուր:

*) Ի՞նչ ես ասում, է՛յ, զիպօ:

Փամբակեցի քահանայի մօտ այցելութեան էին դնացել մի քանի ուսանողներ:

Քահանան դուրս եկաւ մի մեծ շալ վզին փաթած:

— Օրհնեա, տէր հայր, այդ ի՞նչ է պատահել, ինչո՞ւ էք փաթաթուել, հարցրեց նոցանից մինը:

— Գիտամ ոչ, որդի, մի ինչ որ զադ ա դուս է՛կել վզիս:

— Ինչո՞ւ բժշկին չէք ցոյց տալիս:

— Բժիշկ չէ ես անխաճն է՛ր, ասում էն հաճում է:

* *

Λ

Այրի կինը որդուն տուել էր կօշկակարի մօտ զկերտ: Տղան երեք օրից յետոյ դարձաւ տուն:

— Ինչո՞ւ եկար, որդի, հարցրեց մայրը քնքշաբար:

— Սովորեցի պրծայ, մայրիկ:

— Ի՞նչպէս սովորեցիր, որդի:

— Ա՛յ մայրիկ, ասեմ. կաշին կ'թրջեմ, կ'քաշեմ խալապօտի վրայ, թելերով ամուր կ'ձգեմ. յետոյ տակը հաստ կաշի կ'կպցնեմ, կ'ծակոտեմ ու փայտէ մեխերով կ'պնդացնեմ. կօշկաներկ կ'քսեմ, կ'պըստացնեմ— ահա քեզ պատրաստ կօշիկ:

Մայրը ուրախացաւ որդու առաջադիմութեան վրայ և ոչինչ չասաց: Մի քանի օրից յետոյ ուսանան պատահելով այրիին՝ հարցրեց.

— Էս ի՞նչ եղաւ որդիդ, քոյրիկ, ինչո՞ւ չի դալիս սովորել:

— Որդիս—ինչպէս որ ասաց—սովորել է:

— Ի՞նչպէս, զարմացաւ ուստան:

— Ասում է, կաշին կ'թրջեմ, կ'քաշեմ կալապոտի վրայ, թեւերով ամուր կ'ձգեմ, լետոյ տակը հաստ կաշի կ'կպցնեմ, կ'ծակոտեմ ու փայտէ մեխերով կ'պնդացնեմ. կօշկաներկ կ'քսեմ, կ'պսպըղացնեմ—ահա քեզ պատրաստ կօշիկ:

— Տես, մի տես էն շան որդուն է՛, վրայ բերեց ուստան չարացած. բաւական չի որ ինքը սովորել է, եկել հլա ճօն էլ է ասիւցրել:

* *

Բժիշկը պատահեց հիւանդի մօտից վերադարձող ընկերին—

— Հը՛, քնչ հիւանդութիւն ունէր:

— Ե՛հ, ես քնչ գիտեմ. բան տուէ՛ն, որ կարողանայի իմանալ . . . :

— Որ ասացի չես իմանալ, վրայ բերեց առաջինը. ախրը առաջ ինձ տարան. . . բայց. . . :

* *

Ե . . . եցի մի քանի գիւղական համփաներ, մի չհաս նշանադրութեան համար՝ գնացին Թիֆլիզ:

Գործը բաւական երկար ձգձգուեց, որից զգալի ծախսի տակ ընկան:

Մի օր բոլորը միասին ներկայացան սրբազան Այվազեանին և գանգատուեցին.

— Սրփազան, էսքան էլ ուշացնել կլի՛ք. հաս ա հաս արէք, չհաս ա—չհաս արէք. ախր ձիանը մեզ

կերան է՛:

— Բան չկայ, սիրելիք, պատասխանեց սրբազանը ծիծաղելով, դուք էլ գնացէք ձիանոնցը կերէք:

* *

Մի կարճ ու մի երկար մարդ կռվում էին: Կարճը բարձրացաւ մի քարի վրայ և սկսեց խփել միւսի գլխին:

— Ե՛ղ լաւ միտս բերիր, քու հերն անիծած, ասաց բարձրահասակը, վզակոթից բռնեց, ցած բերեց ու սկսեց գլուխն ու գլուխը վեր հատել:

* *

— Մի անգամ Մօլլա-Նասր-Էդինը տանը նստած՝ մաստակ էր ծամում. դրսից մէկը ձայն տուեց: Մօլլան մաստակը բերանից հանեց, կպցրեց քթին և դուրս գնաց:

— Ինչո՞ւ ես մաստակը քթիդ կպցրել մօլլա, հարցրեց կանչողը:

— Մարդու ապրանքը, պատասխանեց նա ծանրութեամբ, եթէ տիրոջ աչքի առաջ չէլաւ, էլ նրան խէր չի անիլ:

* *

Մօլլան, ամառուայ շոգին, մի «կրէտ արած»*) հորթ տեսաւ՝ «տրտինգ տալով» փախչելիս. նա շատ հաւանեց ու ասաց.

«Եթէ փոքր ժամանակը էսպէս է վազում, որ մեծացաւ՝ նալներ է, որ լետ մնացող ձիաւորներին

*) Բրէտի խայթելուց փախած:

հաճաքել կտայ. ես իմ Աստուածը, արժէ, որ մարդ առնի պահի»:

Նա առանց երկար ու բարակ մտածելու՝ դնաց տիրոջ մօտ, մեծ գին տուեց, առաւ և մեծ խնամքով պահում էր:

Մի նշանաւոր ձիարշաւի—երբ հորթը մեծացել եղն էր դառել— մօլլան լազաթին փալանեց, «Հօ-Հօ» անելով մի քարի տակ քաշեց, փառաւորապէս բազմեց և ինքնաբաւականութեամբ հազալով դուրս եկաւ ասպարէզ:

—Ախր մօլլա, էդ ըլելու բան է—ահագին քըրքիջով ծաղրեցին տեսողներն. դու բերել ես, որ եզը ձիու հետ քշես:

—Ըհէ հէ հէ հէ հէ հէ, վրայ բերեց մօլլան նոյն ինքնաբաւական եղանակով, ծիծաղեցէք, դուք ծիծաղեցէք. ես սրտն հոգի խաճաճեց կ'ճանաչեմ, դուք ընչին էք խաբար, այ խեղճէր:

* *

Սրախօս քահանային խանի ծառաները բռնեցին և ստիպեցին, որ մեծ պասին հայհոյէ:

Քահանան մի քիչ մտածելուց յետոյ—

—Լաւ, կ'հայհոյեմ, ասաց, միայն երկու խնդիր ունիմ. մեր մեծ պասից 10 օրը բաշխեցէք խանին:

—Ղաբուլ, բաշխեցինք, ձայն տուին թուրքերը:

—Տասն օր էլ ինձ բաշխեցէք:

—Եդ էլ ղաբուլ, բաշխեցինք. դէ մնացածին հայհոյիր:

Քահանան 20 օրը հանելով՝ թողեց 30 օր, որ է թուրքաց օրուշը, ուստի սրտալի ձայն տուեց.

—Մնացածը դուք էլ անիծէք, ես էլ անիծեմ, դուք էլ անիծէք, ես էլ անիծեմ. . . :

—Յախշի, եախշի, քեշիշ, բէաս տը նէա գադար սէօգդն, ձայն տուին թուրքերը, փէահրիզի եազը տը*):

* *

—Վաղարշակ, թնչու չես գրում, հարցրեց մի անգամ ուսուցիչը Յ տարեկան երեխային, որը քարետախտակը մաքրելու համար այնքան թքել էր ու հաւասարապէս տարածել, որ հազիւ կէս ժամում չորանար:

—Դէ վէնց կիւրեմ, վարժապետ ջան, պատասխանեց երեխան, կաց ցըմաքի է:

* *

Մի շատ պարզամիտ մարդու հարցրին—

—Դու կլինես մեծ, թէ հայրդ:

—Առաջ նա ինձանից մեծ էր, այդ լաւ եմ յիշում, պատասխանեց նա, իսկ թէ այժմ ինչպէս կ'լինի—չ'գիտեմ:

* *

Այրի տղամարդը կամենում էր երկրորդ անգամ ամուսնանալ և չ'գիտէր ինչպիսի հարսնացու ընտրի:

*) Լաւ, լաւ, տէրտէր, բաւական է որքան հայհոյեցիր, պասը մեղք է:

Նրան ասացին, որ գնալ մանուկ Սողոմոնից խորհուրդ հարցնի: Գնաց, տեսաւ, որ մանուկը մի երկար փայտի վրայ նստել է և իբրև ձիու՝ քշում, խաղում է բակում:

Ամուսնացողը ողջունեց ու հարցրեց.

— Որդիս, ես ուզում եմ երկրորդ անգամ ամուսնանալ. դուրա համար ինձ առաջարկում են երեք տղից. — առաջինը կոյս աղջիկ է՝ մանկահասակ, երկրորդը նոյնպէս կոյս աղջիկ է, բայց միջահասակ, իսկ երրորդը այրի կին է. սոցանից ո՞րի հետ խորհուրդ կ'տաս կենակցելու:

Մանուկը խելացի աչքերը դարձրեց մարդուն և պատասխանեց.

— Եթէ մանկահասակին ուզես, դու գիտես, թէ միջահասակին՝ նա գիտէ, իսկ թէ այրիին. . . Իհն, հն, հն, հն, հն. . . վազեցրեց փայտէ ձին. փախիւր, հեռու կաց, թէ չէ ձիս քացի կ'տայ:

* *

Շ. . . եցի ծաղրածու Աբրահամը մի անգամ մօտեցաւ քահանային և խորհրդաւոր կերպով նայելով՝ ասաց.

— Մեղայ Աստու, տէրտէր:

— Սուտ մեղին սուտ թողութիւն, որդի, պատասխանեց քահանան ծիծաղելով:

* *

Երեք պարզամիտ քրդեր եկան Թիֆլիզ և ընկերներից իմացան, որ շատ անուշ կերակուր կայ քաղաքում, որի անունը խաշ է: Սրանք խաշ, խաշ

ասելով՝ պատահամբ մտան խարազխանէն և մի խառազի հարցրին.

— Խաշ ունե՞ս:

— Խիստ լաւը, պատասխանեց խարազը, համեցէք:

Ո՛ւմ չի յայտնի, որ խարազներն առհասարակ ուրախ ու կատակասէր մարդիկ են: Սա մի մեծ «մաթրաթ» թաղարի կաշուի ներկած ջրով լքցրեց, մի քանի մեծ ու փոքր գունաւոր կաշու կտորտանք էլ մէջն ածեց, 20 կոպէկի փռան հաց բերել տուեց ու հրաւիրեց հազուադէպ հիւրերին՝ անուշ անելու:

Քրդերը հացը բրդեցին և սկսեցին ագահաբար ուտել, բայց նոցանից ոչ մինը չ'կարողացաւ «թափանի» համը տեսնել, որովհետեւ շատ պինդ էին: Երբ որ կերան, պրծան, 20-ական կոպէկ էլ վրձարեցին, նոցանից աւելի փորձառուն նկատեց.

— Ուստայ, չսես թէ «խարիպ խամ մարդիք էին չխասկցան». մենք իդա խամերից չենք. ուղորթ է խաշդ խորոդիդ էր, հըմմէ թափանը հէջ էփուկ չէր: :

* *

Մօլլա-Նասր-էդինը մի օր, մի փթի չափ կաւիճ շատ մանր ծեծեց, ածեց մի տոպրակ և ընկաւ գիւղը՝ ձայն տալով.

— Մկան դե՛ղ, լաւ մկան դե՛ղ եմ ծախում, էժան մկան դե՛ղ. . . :

Գիւղացիք լսելուն պէս՝ հաւաքուեցին և կէս ժամում, որը մի շահու, որն երկու շահու՝ առան, դարդակեցին տոպրակը:

Մօլլան հասարակ կաւիճը բաւականին ձեռնը-
տու գնով միամիտ գիւղացոց ջանը կապելով՝ ու-
րախ-ուրախ, փողերն առած՝ դարձաւ տուն:

Երբ որ նա հեռացաւ, առնողները նոր խել-
քի եկան, որ պէտքէ գործ զնելու եղանակն էլ
հարցնէին. բոլորը միասին վազեցին մօլլի դուռը
և ձայն տուին.

— Մօլլա, գեղը տուիր՝ շնորհակալ ենք. էն էլ
ասա, թէ քնք անենք, որ մկները սատկոտեն:

— Օրհնուածի որդիք, ասաց մօլլան գլուխը դռ-
նից հանելով, դրան էլ թնչ գիտենալ կուզի. մուկը
կ'բռնէք, բողազին էնքան հուպ կ'տաք, որ աչքե-
րը դուրս տրաքի, յետոյ այդ գեղիցը մի քի՛չ աչ-
քերին կ'ցրէք—էն սհաթին կ'ստակի:

* *

Ռուսը մի հրացան տուեց ուստայ Համբարձու-
մին, որ մաքրի: Նա պատուէրը չ'հասկանալով՝ հը-
րացանը մէջ տեղից կտրեց, երկու ատրճանակ շինեց:

Ստանալու ժամանակ Ռուսը տեսաւ ու չա-
րացած ձայն տուեց.

— Эго что?!!

— Մաչէն կտրած էրկու «փշտով», պատասխանեց
Համբարձումը:

— За что?!! աղաղակեց Ռուսը բոլորովին կրակ
կտրած:

— Քեզ հով ան ասալ թա ես չապ չըմ. պաքու-
ռացալըս տեսնամ չըմ, վեր եքքեա ուստայ ըմ
ըստեղ նստած:

Նալբանդ Մադին մի շատ մազալու մարդ էր.
Նրա կարծիքով, ով որ հրաւէրք ունենար՝ պիտի ան-
պատճառ իրեն կանչէր:

Մի անգամ փողոցում նրստած ժամանակ՝ հար-
սանքատիրոջ ծառան մի քանի հրաւիրատուներ
բաժանեց: Մադին, որ ներկայ էր, հետաքրքրուելով
հարցրեց.

— Էտ թնչ թխտի կտորտանք ա, ընչի հմար ա:

— Սրանով մեզ դոնադ ա արել Ակուփ ամին ի-
րան ըխճկայ հրքսնքումը:

— Երի հա, ձայն տուեց Մադին, էս վէնց ա, վէր
ինձ ըղարկել չի. «Թային» մտէն ընգած կիրլի. «Գա-
րեգին վարժապետ ջան, մի ջափա քաշի ստի ե,
Ակուփ ամի ընըմէն մի թուխտ կիրլի, կըմանայ
շնորակալ կիրլի. հալբաթ խռնուած ա խեղճը,
թնչ անի,— թէ չէ Ակուփ ամին, ու ինձ մտըհան
անի մի ըսհենց օր:

Նա առաւ պատրաստած տոմսը, երկարու-
թեամբ ոլորեց և ձեռին բռնած մտաւ հարսանքա-
տուն:

* *

Նշանուած երիտասարդը խարազի բարձր կրքն-
կանի կօշիկներ առաւ, բայց մի շաբաթից յետոյ
կրնկները ծռուեցին. նա չարացած դնաց ուստի մօտ.

— Էս թնչ վատ կօշիկներ ես կարել, աղաղակեց
նա, մի շաբթում կրնկները ծռուեցին:

— Աղա, կեղծեց խարազը, քեզ պէս հրսկալ

մարդու ոտին էն քնչ կաշուէ կրունկ պըտի ըլի, որ դիմանայ. քեզ համար պըտի երկաթէ կըրնկներ շինել տաս, աղա. . . :

—Աֆֆարիմ, ուստայ, լաւ ես կարել, հանաք էի անում. շատ լաւն է եղել, որ էսքան ժամանակ էլ դիմացել է, միայն մի բան խնդրեմ. — այս ըոպէիս աներոջս հետ կանցնեմ և քեզ վրայ նոյն կերպով կ'չարանամ, դու էլի այդպէս պատասխանիր:

—Ջուխտ աչքիս վրայ, ասաց նա:

Հինգ ըոպէից յետոյ, փեսան աներոջ հետ անցաւ և մօտենալով խարազին՝ որոտաց.

—Ես քնչ անպիտան կօշիկներ ես կարել, կրունկները մի շաբաթ էլ չ'դիմացան—ծումաւտուեցին:

—Ես քնչ մեղ ունիմ, որ դու չ'տես ըլեօ, մանգալու ձևը չ'գիտենաս, պատասխանեց խարազը. քո քնչ բանն է լափչիք հագնելը, դու գնա տրեխ հագիր, տրեխ. . . :

* *

Անգին Մոսին 15 տարեկան հասակում «այբբէն» էր կարդում գիւղի խալիֆայի մօտ, և որ տառը դժուարութեամբ էր յիշում՝ մօտը թքոտ էր անում, ջնջում:

Դաս ասելու ժամանակ խալիֆան նկատեց.

—Էդ խբ ես մինումէջ «լոք տալիս», այ տղայ, բոլորը կարդա է:

—Էդ ինչ վէր տիու ասում ես, ըստեղ կ'ավէչ, խալիփայ ջան, արգարացաւ Անգինը:

Ագարակցի Մարկոսի երեխան ընկաւ թորոնը՝ Մայրը, որ մօտը կանգնած էր, լեղապատառ աղաղակեց. —

—Ձեզ մատաղ, օգնեցէք. . . էրեխիս թագա փափախն էրուեց:

* *

Վրացին մի խէնջար էր գողացել: Երբ որ դատի ենթարկեցին՝ փաստաբանի մէկը խորհուրդ տուեց, որ «ОТКАЗ» անի, կազատուի:

Դատաւորը հարցրեց.

—Դու ես վերցրե՞լ սրա խէնջարը:

—Դէ՛սիս, իս իմ, քէ մատաղ, պատասխանեց վրացին:

—Դարձուր տիրոջը, շարունակեց դատաւորը:

—Ապա՛յ, շենի ճիրիմէ, վրայ բերեց վրացին:

* *

Անգրագէտ քահանային մի թուղթ տուին ստորագրելու. նա ճարակտուր մի քանի անգամ փորձեց, բայց իհարկէ ոչինչ չ'եղաւ: Վերջապէս աչքերի կարճատեսութիւնը պատճառ բերելով՝ խնդրեց մօտը կանգնողին, որ իւր տեղը ստորագրի. նա էլ գրեց. —

«Որովհետեւ Գրիգոր քահանայ տէր Հանէսեանը գիր ոչ գիտէր, խնդրանօք գրեցի Ձամալ Սինասարով»:

* *

Մակար Ա. կաթուղիկոսը, առաջնորդ եղած

ժամանակ՝ ճանապարհորդում էր: Երբ որ մտաւ Քուժալիս, տեսաւ, որ բոլորն էլ վերախօսներ են. նա զարմացաւ.—

— Միթէ այսչափ հայերից ոչ ոք հայերէն չի խօսում:

— Վա՛նայ Վէ, խարջեցին իրենց փայ հայերէնը մօտ կանգնողները և առաջ կանջեցին Դաւիթ Քալանթարեանցին:

— Հայ ես, որդեակ, դարձաւ նրան սրբազանը:

— Հրամայե՛իս, հայր սուրբ, հա՛յ ի՛մ, սլափախա-
նեց նա:

* *

Յղի կիներ եկեղեցուց դուրս գալու ժամանակ՝ պատահեց մէկ անտաշ հովուի, որը ուժգնութեամբ գուռը բանալով՝ դիպցրեց կնոջը. կիներ վայր ընկաւ, որից հիւանդանալով՝ վիժեց: Ամուսինը բռնեց հովուին և քաշ տուեց խանի մօտ գանգատ:

Գնալիս՝ հովիւը աչք գողացաւ, «Ճլկեց». գանգատաւորը հետեւեց նորան: Հովիւը տեսնելով, որ ետեւից հասնում է, ոտներին ուժ տուեց և առանց ուշ դարձնելու՝ մի կտուրի «ցեքից» ցած թըռաւ ու ընկաւ տան տիրոջ հիւանդի վրայ, որին պառկեցրել էին դուռը արևի տակ—և իհարկէ սպանեց: Հիւանդի հայրը բռնեց նրան. առաջուայ գանգատաւորն էլ ընկերացաւ և երկուսով շարունակեցին քաշտալ նորան դէպի դատարան:

Ճանապարհին պատահեց մի փայտով բարձած

էշ, որը ուժահատ լինելով՝ ցխում նստել էր. հիւսիս*) տէրը շատ էր աշխատել վերկանցի, բայց չէր կարողացել:

Հովիւը խղճաց. «տանում էք, էլի տարէք, ասաց. եկէք օգնեցէք էս խեղճ հիւսիսի էշը վերաքաշենք, գնանք»:

Այս ասելով՝ մօտ գնաց, էշի պոչը փաթաթեց աջու կռանը, միւսներն էլ գլխից ու կողքերից բռնելով «հը» արին որ վերքաշեն, տեսան, որ էշը տնքալով մի քիչ բարձրացաւ, էլի տեղը վեր ընկաւ, իսկ պոչը մնաց հովուի ձեռին:

Տունդ Աստուած քանդի, ձայն տուեց ծերը դառնացած, ունեցածս այդ մի էշն էր, դրան էլ պոչահան արիւր, շան կերակուր շինեցիր, հիմի ես լինջ անեմ:

Երկուսը դարձան երեք և տարան հովուին խանի մօտ: Հովիւը խանի տան «ծակուճուկին» տեղեակ լինելով՝ առաջ անցաւ դէպի նրա նախասենեակը, որ խնդրելով է, կաշառքով է՝ բանը վերջացնի—տեսաւ, որ խանը գինով և օղիով կեր ու խում է անում մտերիմների հետ: Սա վախեցնալով, որ իւր օրինաց ընդէմ գնալը ժողովուրդը կ'իմանայ, մեծ գումար խոստացաւ հովուին և ասաց.

— Գնա, ոչ ոքի բան չ'ասես, եթէ գանգատ ունես, միամիտ եղիր, վճիռը քո կողմը կ'լինի:

Մի քանի րոպէից յետոյ՝ խանը դուրս եկաւ,

*) Ալեւոր:

ատեան նստեց. գանգատաւորներն առաջ եկան:

Ի՞նչ բան ունես, դարձաւ նա վիժող կնոջ մարդուն:

— Խանն ապրած կենայ, գանգատուեց նա, այս հովիւը ժամը մտնելիս՝ խփել է դռանը, դռուն էլ դիպել է կնոջս վեր է գցել, որից խեղճը հիւանդացաւ և վիժեց:

— Կինդ գիտէր, որ դա եկեղեցին է մտնում:

— Ձէ, խանն ապրած կենայ, թնչպէս կ'գիտենար. եթէ գիտենար, էս քամբաղդութիւնն էլ չէր պատահիլ:

— Իսկ դու գիտէիր, որ սրա կինը նոյն ըոպէին պիտի դուրս գայ, դարձաւ հովուին:

— Ձէ, գլխիդ մատաղ, պատասխանեց հովիւը:

— Ուրեմն հինգ մանէթ «շտրաֆ» տուր հովուին, վճռեց խանը, որ դրան մի անմեղ բանի համար գործից ձգել ես:

— Դո՛ւ թնչ բան ունես, դարձաւ խանը սպանուածի հօրը:

— Գլխիդ ու արեւիդ մատաղ, խան, գանգատուեց նա լալով, որդիս հիւանդ՝ դռանը պառկած էր. էս անպիտանը կտրից թռչելով՝ վրէն ընկաւ, սպանեց խեղճին:

— Լաւ, վճռեց խանը, սա կ'գնայ կ'պառկի հենց այնտեղ, ուր որդիդ էր. դու էլ բարձրացիր կտուրը, վազելով թռիւր, ընկիր սրա վրայ, սպանիր. բայց նախ քան այդ, մի 10 մանէթ «շտրաֆ» տուր դրան,

որ բաւական չի գործից լետ ես պահել, դեռ իմ առաջս էլ անվայել խօսքով վիրաւորում ես. օրէնքըն այսպէս է ասում, աւելացրեց նա:

Ծերը, որ զարմացել էր այս «բոբո» դատաստանի վրայ, տեսնելով, որ իւր տուգանքը 15 ի է հասնելու, ուղեց ծածուկ դուրս սլքուել, բայց խանը նկատելով՝ ձայն տուեց.

— Ո՛ւր ես գնում, բաբի, եկ տեսնեմ թնչ գանգատ ունիս:

— Աստուած, երկի՛նք, պատասխանեց ծերը դուրս փախչելով, իմ որդկերանց արեւը վկայ, որ էշս հէ՛ջօրս էր առաջ:

* *

Մոսկովայում մի թուրք կամենում էր պարսից հիւպատոսին ներկայանալ, որը բնակվում էր «Сухарева башня»-ի մօտ: Նա ձայն տուեց հրապարակում կանգնած կառապանին.

— Ա փայթո՛ւն, ա փայթո՛ւն, իզդես փօլօժիմ քօնսուլ փօլօժիմ. . . :

— Пожалуйте баринъ, куда прикажете? մօտ քշելով հարցրեց կառապանը:

— Իզդես փօլօժիմ, քօնսուլ փօլօժիմ. Զո-բո-բո Բաշի դ-լի Ժ-լի Բի-լի Է-լի Է-լի Է-լի. . . *)

— Говорите яснѣе, я васъ не понимаю.

— Փե՛նա, դռեաք, չարացաւ թուրքը, փափուկի դա նի գնայի՛ր:

*) Իբր թէ՛ — այստեղ նստեմ, հիւպատոսի մօտ իջնեմ. մինչև Սուխարեւա բաշենայի մօտ գնալ գալը 25 կոպէկ:

Հայախօս վրացին Թիֆլիզում նոր չուխայ առաւ և ճանապարհ ընկաւ դէպի Շուշաւէր: Ճանապարհին մի թուրք հովիւ առաջը կտրեց՝ ասելով. «չուխանդ չխարդ»*)

Վրացին զայրացած յարձակուեց և բռնեց քով թուր կողքին հասցնելով՝ ուշաթափ ցած գլուխէն հանգիստ շարունակեց ճանապարհը: Հասնելով Շուշաւէր՝ ծանօթին այսպէս պատմեց. —

«Տօ, էնդի քաղքումը մէ չօխայ առար, գալիս էիր էստի: Երթից վնախօ մէ թուրք էկար ու «չօխայ չխարդ»օ. ձերու մի թեցիր ու վուր փրքնափուրումը դեմեր խփեցիր — քնից. — քօփօղլի, չօխայ փուլի սան վերդի»:

* *

Նոյն վրացին երազում տեսաւ, որ կատուն մի մուկ բռնեց, կերաւ: Արթնանալով՝ հայ ընկերին պատմեց.

«Տօ, իս տեսար, կատուն մէ մուկ բռնեցիր, կերար»:

* *

Հնձի Ժամանակ, երբ որ Նասր-Էդինի կինը մի քանի անգամ ուշացրեց ճաշուայ հացը, նա մի անգամ կնոջը հետը տարաւ հանդը և ճաշից մի քիչ առաջ ասաց.

— Ա՛՛ կնիկ ջան, հիմի դու հնձիր, ես գնամ հաց բերեմ, ու տես թէ ոնց շուտ կ'գամ: Գնաց տուն,

*) Չուխար հանիր:

տեսաւ, որ ուրուրը (ցին) ճուտերը փախցրել է: Որովհետեւ այդ կորստի պատճառն ինքն էր-կնոջը հանդը տանելով-վախեցաւ. «կինս որ գայ տեսնի, ինձ թամամ տանից դուրս կանի» ասաց և մի քիչ մտածելուց յետոյ՝ հնարը գտաւ: Նստ, որտեղից որ էր, 3 ձու ճարեց, տան անկիւնում մի փափուկ տեղ դարսելով՝ վրէն նստեց, մի քթոց էլ վրան ծածկեց: Կինը հանդում քաղցած երկար սպասելուց յետոյ՝ երեկոյեան դէմ դարձաւ տուն, բայց տեսաւ, որ մօլլան ոչ մի տեղ էլ չի երևում: Նա կարծելով, թէ սովորութեան համեմատ թաքնուել է, ուզում է հանաք անի-յանկարծ վախեցնի՝ ձայն տուեց.

— Դէ, հանաքի վախտ չի, այ մարդ, ո՛ւր ես, դուրս արի:

— Կալը լիկ — թխսի պէս ձայն տուեց մօլլան քթոցի տակից:

* *

Լօռեցի Քոչարը գութանից տուն դառնալով՝ տեսաւ, որ կինը աղջիկ է ծնել: Նա զայրացած մի փայտ առաւ ու կնգանը ջարդելով գոռաց.

— Տօ շան կնիկ, բաւական չի որ եզս սըտակել ա, դու էլ չոքել ես ախճիկ բերե՛լ. քուէռացել ես տեհնում չես վուէր խալի կնանիքը վուէնց են տղայ բերո՛ւմ:

* *

Շ . . . եցի Ծինձղարը սովորութիւն ունէր ա-

ռաւօտները և ճաշից յետոյ ընչացքը դմակով եղել, որպէս զի տեսնողները կարծեն, թէ ամէն օր միս է ուտում:

Մի օր տղան ծիծեռնակի բունը երկար ձողով քանդելիս՝ վայր ձգեց դմակի կտորը, որը կախած էր սեան մեխի վրայ և հենց այդ միջոցին կատուն վեր թռցրեց—փախաւ:

Երեխան բարձրաձայն աղաղակով դուրս վազեց փողոց և տեսնելով հօրը մի խմբում նստած՝ կանչեց.

—Ամի՛, կատուն տիրմէակդ փխճրուց:

—Վէր տիրմէակը, բաւջան, հարցրեց հայրը միամտանալով:

—Էն ինչ վէր բեղերդ իր քերսում:

Աբարանցի հարսը ^{***} սկեսուրից ծածուկ՝ մի քթոց սիսեռ բովել (աղանձել) կերել էր:

Մի անգամ սկեսուրը կամեցաւ սիսեռ եփել. գնաց տեսաւ, որ քթոցը դարդակ է, զարմացած դարձաւ հարսին.

—Եւ, խարս, սիսեռն ի՞նչ եղաւ:

—Իէ մեռնիմ, նանի, պատասխանեց նա չ'զիտնալ ձեանալով, սիսեռ ասածդ ինչ փան է:

Սկեսուրը գնաց, քթոցի տակ մնացած հատիկներէն միքանիսը բերեց, ցոյց տուեց: Հարսը իբր զարմացմամբ.—

—Նանի ջան, ընչիդ ունի՛, պնչիդ ունի՛, եդ ինչ զարմացք փան է:

Լօռեցի սրախօս քահանան մի կաթօլիկի հետ վիճաբանութեան մտաւ:

—Երբ Աստուած Ադամին ստեղծում էր, հարցրեց կաթօլիկը, նա հողից ցեխ շինեց, նրան ձեակերպեց իւր պատկերի նման և շունչ փչեց, եղաւ հոգի կենդանի. բայց ձեռին կպած ցեխի կտորները հաւաքեց. յետոյ այդ ցեխի կտորն ինչ արեց:

—Այդ ցեխի կտորը, վրայ բերեց քահանան, տուեց Լուսաւորչականներին որ կաթօլիկների բերանը ցխեն այն ժամանակ, երբ այդ վերջինները մի որեւէ աննպատակ կրօնական վէճ կ'հարուցանեն:

Շ . . . եցի Խուդունց Թէլլու տատը, սաստիկ աճրևից յետոյ՝ կտուրը ցխով ծեփում էր:

Այդ ժամանակ մի թուրք մօտեցաւ պառակին ու հարցրեց.

—Ապրես հաճա՞ղ դը, այ բաջի*):

—Ես սի՞նդիդամ հաճա՞ղ դը, պատասխանեց պառաւը:

—Բա օ նէա զայրերսան*):

—Ծեփլլերամ—կաթըլմասըն:

Ղարաբաղի լեռներից մէկի վրայ գտնուած նեղ «կածանով» (ջաւիղ) մէկը իշուռն փայտ բարձած անցնում էր:

*) Ապրեսը ո՞րտեղ է, այ բիր:

*) Իսկ այդ ինչ էս չինում:

Յանկարծ իշի ոտը սլքուեց ու խեղճ կենդանին սկսեց գլորուել դէպի ձորը, որտեղ մի խաչ կար՝ Տգակ անունով:

Գիւղացին բարձրաձայն աղերսում էր. —

— «Քէ ըմ կանչալ, ով սուրբ Տգակ, տիւ իմ իշիս քեօմագը ինես»:

Բայց տեսնելով, որ փոխանակ կանգ առնելու՝ քանի գնում — աւելի արագ է գլորվում, գոռաց. —

— «Տգակ, դէ հմի փախի, վեր էշս կեամա»...:

* *

Ագարակցի Մոսնանց Արուսթինը առաւօտը վաղ-վաղ գնաց գութան վարելու: Նա հենց ձեռք մաճին դրեց թէ չէ, միտն ընկաւ, որ առաւօտահացի պաշարը տանն է թողել — ձայն տուեց.

«Հօ, հօ, ոտն արեք տղէք, կացէք չըկել գնամ բիւրեմ»:

* *

Սաստիկ սովի տարին երեք եղբայրներ գողացան խանի ուղղերից մինը: Սրանք մի ծեր թեթևասլիկ մայր ունէին, որը շարունակ կրկնում էր. — «ինձ համար մի մարդ ճարեցէք, որդի՛ք, ես պառաւեցի»...:

Տղայքը երբ ուղղը բերին տուն, մօրը նոր շոր հագցրին, երեսին մի լաչակ փռեցին, պատն ու դուռ կանգնացրին ասելով — «նանի՛, քեզ պսակում ենք, այս պատի մօտ անխօս կանգնի» — և ի

քանք ուղղը մօրթեցին, քերթեցին — միս արին, դաւուրմայ եփեցին, «տուճ» ու կարաս լքցրին — դուրս ելան: Այս բոլոր գործողութեանը՝ պառաւը անշարժ դիտում էր:

Եղբայրները խօսք ու մէկ արին, որ եթէ ուղղի մասին խօսք բացուի, կամ հարցնեն, իրանցից իւրաքանչիւրը խուլ ձևանայ, և մի որոշ պատասխան չ'տայ:

Նոցանից մինը հողագործ էր, միւսը խաշնարած և երրորդը որմնադիր:

Մի քանի օրից լետոյ՝ խաշնարած մարդ ուղարկեց կորած ուղղը որոնելու. նա էլ հարց ու փորձ անելով՝ պատահեց հողագործ եղբօրը, որը գութան էր վարում:

— Բարի աջողում, հողագործ եղբայր. խանի ուղղը կորել է, չես տեսել:

— Աստուած է խաբար. թէ մինչև առաջներին մեծ քարը կարողացայ վարել, եզներին աչքերը պաչելու է:

— Խանի ուղղն եմ հարցնում, է՛յ, աղաղակեց նա, հաւատալով, որ խուլի է հանդիպել:

— Չէ, քէ մատաղ, էս երկու եզն է, որոնց աչքիս լուսի պէս սիրում եմ. էս էլ ծախեմ, բա ո՞նց ապրեմ:

Որոնողը հեռացաւ. նա ճանտպարհին պատահեց խաշնարածին՝ «սուրուն» առաջը:

— Խանի ուղղը չես տեսել, հարցրեց նրան:

—Քո գործին էլ բարաքաթ տայ Աստուած, վրայ բերեց հովիւն անմեղացած. իմն է, համը պէտքէ լինի:

—Տօ տաւար, խանի ուղղն եմ հարցնում քեզ, դու ի՞նչ ես ասում:

—Տարին գիտի, քէ մատաղ. թէ խոտը բոլ էլաւ, խօ կուտի, կ'չաղանայ, իսկ թէ—Աստուած հեռու տանի—երաշտ եղաւ, իհարկէ դժուար կ'լինի պահելը. թէ որ «ազար» էլ փէյդահ էլաւ՝ «քու դուշմանը». —ձեռներդ լուացի, ղրաղին կանգնի: Որոնողը սրան էլ խուլ հաշուելով՝ անցաւ, գնաց և պատահեց երրորդ եղբորը, որը մի բարձր պատի գրէխի կանգնած՝ պատում էր:

—Բարի աջողում, ուստայ, ձայն տուեց պատի տակից. խանի ուղղը չես տեսել:

—Ել ի՞նչ հարցնել կուզի, ա՛յ աղբաթի խէր. չես տեսնում, որ պատ եմ պատում, — «ինչ ես անում հա՛, ինչ ես անում». մի ցեխոտ ձեռներիս էլ է նայիր է՛. . . :

—Ա՛յ ուստայ, խանի ուղղն եմ հարցնում է՛, խանի:

—Դէ շատ էլ որ շոգ է, ի՞նչ կարող եմ անել. փեշակս էս է, պէտքէ պատեմ էլի:

Որոնողը յուսահատուած՝ շարունակեց ճանապարհը, և պատահեց դռանը կանգնած պառաւին՝ երեք եղբոր մօրը. դռնալով նրան՝ հարցրեց.

—Բարի աջողում, նանի՛, խանի ուղղը չես տեսել:

—Աստու բարին, որդի, պատասխանեց պառաւը, տեսել եմ, ո՛նց չեմ տեսել. իմ տղերքը բերին տուն, մորթեցին, ղաւուրմայ շինեցին, ածեցին կարասը. համեցէք ղաւուրմայ անուշ արա:

—Եդ երբ էր, նանի, ուրախացած մօտ գալով՝ հարցրեց որոնողը:

—Իմ հարսանիքովն է՛ր, վրայ բերեց պառաւը «թելիկ մելիկ» գալով:

—Ը՛հ, քաւթառ, չարացաւ որոնողը հեռանալով. ես երեք օրուայ բան եմ հարցնում, սա իրան հարսանիքիցն է պատմում:

* *

Շ. . . եցի Ծինձղարի տղան մի հարուստի որդու հետ կոճի էր խաղում: Այդ միջոցին մօտեցաւ հարուստը, որդու ականջից քաշքշելով-ծեծելով ասաց.

—Անպիտան լակոտ, մեր հորթերը թողել ես առանց կապելու, եկել ըստեղ կոճի ես հաղանում. . . :

—Ջանի՛ս, մանի՛ս, ջան, ջան—ծափ տալով երգեց Ծինձղարի տղան—վէնչ հորթեր ունե՛նք, վէնչ էլ մեր ամին ինձ թակի՛. . . :

* *

Քահանան իւր երկու կովը նախրից ուշացրել էր. նա շտապ-շտապ քշելով՝ հասցրեց թուրք նախրչուն և ասաց.

«Մամմադ ջան, Մամմադ, ինագլարլի ափար,

Բիւր պահպանելիքն էր հոգոյ լիարարմ»:

* *

Աղքատ տան տղամարդը մեռել էր և այդ առթիւ մեծ պղնձով լոբի էին եփում:

Մեռնողի երեխան բարձրացաւ կտուրը, ծափ տալով ու պարելով երգեց.

«Ջանիս, մանիս, մեր ասին մեռել աս, լաւա՛նքի
կապի՛մ. . .»

* *

Երբ ժամանակ՝ մի քանի օր, որ շարունակ գիւղը մէզով պատեց և գիւղացոց խանգարեց աշխատելու, նրանք հաւաքուեցին Մաչու դուռը, որ մի «ղուբ»*) անի, թղպիցն ազատի: Շ. . . եցի Մաչին քիչ մտածելուց յետոյ՝ ձայն տուեց.

«Գնացէք մի-մի դազանակ, փէտ հըրսելի. . . վերկալէք, քերնանք թխպին թակենք»:

Գիւղացիք լսեցին նրա խորհրդին և դուրս եկան ամպի դէմ պատերազմելու: Ինչպէս որ եղաւ, մէզը քաշուեց, օրը պարզեց և գիւղացիք սկսեցին գործի կենալ: Բայց մի քանի ժամից յետոյ՝ էլի մէզը պատեց գիւղին: Գիւղացիք վազեցին Մաչու մօտ. —

— Հըմի ի՞նչ անենք, Մաչի ապեր. էս խի՞ ետ եկաւ:

Մաչին էլի ընկաւ մտածութեան ծովը և

*) Մի հնար գտնի:

մտաբերելով գիւղացիներից մէկի արած սխալը՝ ձայն տուեց.

— Ատա ծեր տները շինուի, բա տեսաք վէջ, վէր Բըմըտարանց Թաթոսը լծնով էր թակո՞ւմ. էնա խռիկ տալիս՝ Բոխալը Էմա Ժակո՞ւր ետ աս Կէսաւէլ, էկէլ, բացատրեց Մաչին:

* *

Գիւղացիք մի իշի մաշուած նալ գտան և չիմանալով ինչ բան է, բերին Մաչու մօտ.

— Էս քիչ դատ աս, Մաչի ապեր: Մաչին երկար զննելուց յետոյ՝ ափսոսալով բացազանջեց.

— Օվվէհ, տղէք, լըսնիրակը հնացել, վէր աս ընգել. . . :

* *

Մաչու փոքրիկ տղան սաստիկ անձրևից յետոյ՝ լուսնկայ գիշերով դուրս եկաւ տնից: Նա յանկարծ տեսնելով դռանը անձրևաջրից կազմուած լիճը, ահով ու զարմացմամբ ձայն տուեց. —

— Վայ, ամի ջան, լըսնիրակը մեր տըռանը վէր աս ընգել:

* *

Քոչարը մի չալ խող կորցրեց ու զնաց որոնելու: Հանապարհին մի Ռուս տեսաւ, որին դարձաւ աղաչելով. —

— Ռուսի ջան, մօյ դօնդուդ պրապալ, նի վիդիլ՝ էն վուէր պալավիինը չօրնի աս, պալավիինը բէլի, ինքն էլ խորթ-խորթ եաջմեն կուշայ:

Երկու հոգի նստեցին՝ կաթնով փլաւ ուտելու։
Նոցանից մինը վաղօրօք տաք-տաք կաթնովից
մի եքքա գդալ բերանը տարաւ, որ համը տեսնի.
բայց այնքան կէծ էր, որ խեղճը էրուելով, խո-
րովուելով, ոլոր-մոլոր գալով, աչքերը արտասուքով
լցուած՝ հազիւ հազ կուլ տուեց, դինջացաւ։

— Ախպեր ջան, ասաց սեղանակից ընկերը, խի՞ ես
լաց ըլում. եդ ի՞նչ դարդ ունես, որ էս սհաթին
միտդ ընկաւ, իմ կերածն էլ հարամ ես ուզում
անես։

— Ե՛հ ի՞նչ անեմ, պատասխանեց նա՝ ամաչելուց
եղելութիւնը ծածկելով. դարիբ տեղ մի մեռած
ախպեր ունեմ, հմի միտս ընկաւ, նրա հմար եմ
լաց ըլում, ուրիշ բան չկայ։

Երբ հարցնողն էլ առաջինի օրն ընկաւ, ա-
ռաջին էրուողը հարցրեց՝ հազիւ ծիծաղը պահելով.

Հը՛, քեզ ինչ էլաւ, որ դու էլ դարդոտուել,
սե ու սուգն ես նստել։

Ե՛հ, թնչ ասեմ. սե ու սուգ եմ նստել քու
ախպօր գլուխն ու արևը, որ էն գետնքէգետը էս
նեղ մաջալին միտդ ընկաւ, համ քու տունը քան-
դեց, դարդերդ նորեց ու լացացրեց, համ ինձ տուն-
տնաքանդ արեց, թողեց։

* *

Պառաւի ամուսինը մի սաստիկ շոգ օր հունձ
էր գնացել, իսկ ինքը՝ պառաւը ճախարակը դրել
էր արևում և եփ ածած տաք ջուր էր խմում։

— Ետ խի՞ ես կէծ ջուր խմում, ա՛նան, նկատեց
հարևանը։

— Վա՛յ, վա՛յ, պատասխանեց պառաւը, բա իմ
Պետին ըրևումը խաշուելիս ըլի, ես շուաքում նըս-
տեմ, ցուրտ-ցուրտ ճիւր խմեմ։

* *

Լօռեցի շաշ Ղազարը հունձ անելիս՝ ձեռքը
օրաղով կտրեց և դարձաւ շինող դարբնին.

— Տօ տնաւեր, որ գիդէիր օրաղիդ հունարը կըտ-
րիլն ա, էլ ո՛ւր ինձ տէի՛ր։

* *

Խուլը, ջուխտ ոտով կաղն ու աղքատն ան-
տառում նստած էին։

— Տղերք, ոտաձայն եմ լսո՞ւմ, ասաց խուլը խը-
լը շկոտալով։

— «Բու դուժմանը», ասաց աղքատը սարսափով.
Թէ որ գողեր էլան, ինչ կ'ալալեն։

— Հա դէ ի՞նչ էք վախում է՛, վրայ բերեց կաղը,
Թէ որ տեսնենք գողեր են, վեր կ'կենանք կ'ալա-
լեն։

* *

Խուլը մածոն էր ուտում։

— Ո՛րտեղ ես, քանի ժամանակ է չես երևում, ասաց
նրան մի ուրիշ խուլ։

— Եստեղ թնչ կայ, որ մի թիքայ էլ դու ու-
տես, պատասխանեց առաջինը՝ ամանն առաջ քա-
շելով։

Անուշ արա, շնորհակալ եմ, պատասխանեց երկրոր-

դը, կարծելով թէ հրաւիրում է—ես նոր հաց կերայ:

* *

Սաստիկ երաշտ տարին՝ Կոբեցիք գիւղից հեռու մի ամպի կտոր տեսան, որից անձրևում էր: «Ղմէրթօ, Կոդազէ, Ղմէրթօ, Կոդազէ, աղաղակեցին գիւղացիք»:

Աստուած կարծես լսեց նրանց խնդիրը. ամպը շարժուեց դէպի Կոդա, բայց անձրևի տեղ կարկուտ թափեց:

«Աղ ար գվինդա, Ղմերթօ ջան, աղ արա, աղաղակեցին նրանք սրտապատառ»:

* *

Շ. . . ցին Յունուարին սալով գինի էր տանում Աղէքսանդրապօլ: ձանապարհին սաստիկ ցուրտ արաւ և բոլոր գինին ռումբիններում սառեցրեց:

Քար կտրած ռումբինները սալի կողերին դիպչելով՝ ճեղքոտուեցին: Միւս օրը, երբ արևը ելաւ, օրը տաքացաւ, սառած գինին հալուեց և սկսեց թափուել:

Գիւղացին գլուխը կորցրած՝ յետ պառկեց մէջքի վրայ, աչքերը փակեց և մրմնջաց.

«Ախ, Աստուած ջան . . . այ մի ըրագումս ըլեմ, վերկենամ տեսնամ սուտ ա հա. . . »

* *

Մէկը կամենալով մի կոյրի փորձել, օրորուելով, դէս ու դէն ընկնելով՝ գնաց նրան դիպաւ:

— Ո՛հ, ձայն տուեց կոյրը, օրհնուած, դու էլ

խօ ինձ պէս քոռ չես. մի քիչ զրադ անց կաց էլի:

— Քոռ եմ, ափու ջան, դեռ մի քիչ էլ քառ եմ, ասաց փորձողը:

— Բա էս չոլումը թնչ ես շինում, հարցրեց կոյրը:

— Էս մօտիկ գեղումը ողորմութիւն էի հաւաքում, ասաց նա:

— Ի՞նչքան հաւաքեցիր, հարցրեց կոյրը թուքը կուլ տալով:

— Չ'գիտեմ, ափու ջան, ինչ որ հաւաքել էի: տուի ջհուդ ճոթ ծախողին ու թուղթ փող առայ. մի տես կ'ճանաչես, ափու ջան, վախում եմ խափած ըլի անիրաւը:

— Կ'ճանաչեմ, ո՞նց չեմ ճանաչիլ, որդի ջան, ասաց կոյրը ձեռքը մեկնելով, բեր տեսնեմ:

Փորձողը փողը տուեց նրան: Կոյրը ձեռն առաւ թէ չէ, զգուշութեամբ տեղը նստեց, յետոյ պառկեց և սկսեց կամաց-կամաց գլորուելով հեռանալ:

— Ձանաչեցի՛ր, ափու, ձայն տուեց փորձողը, քիչ սպասելուց յետոյ՝ հազիւ ծիծաղը պահելով: Ձայն չ'կայ:

— Էտ ո՛ւր գնացիր, ափու, ձայնեց նա կեղծ լացով:

Կոյրը փորսող տալով մի թփի տակ մտաւ և գլուխը բարձրացրած՝ ուշադրութեամբ լսում էր ու կամաց ծիծաղում, որ խաբեց:

— Ա՛խ, Աստուած ջան, ասաց փորձողը մի «քը-
ռուճ» վերցնելով, թէ քու դատաստանը արդար է,
թէ դու հախը նհախին չես տալիս, էնպէս արա,
որ էս քըռուճը դիպչի էն անաստուած քոռի ոտին-ու
տուր թէ կտաս— շրմփացրեց ոտին:

Նա ոտն իրան քաշեց և շուռ եկաւ թփի միւս
կողմը:

— Էս չ'էլաւ հա՛. ա՛խ, Աստուած, ասաց նա հառա-
չելով և մի քար վերցնելով, — քու հրամանով թող
էս քարը գնայ էն քեաֆուր քոռի կողքին դիպչի,
սատկացնի, որ թէ փողս ինձանից ընկաւ, նրան
էլ չ'մնայ. թող շան ու գէլի փայ դառնայ, ասաց
ու շուռ գալով՝ «Թրախկ» — խփեց կոյրի կողքին:

— Առ, ա՛ռ, ասաց կոյրը կողքից բռցած՝ տըն-
քալով — ճանաչեցի, հնգանոց ա, ամա եդ իսկի քոռի
արարմունք չէր, որ դու արի:

* *

— Հա՛րեա գեղերսան*), հարցրին Իրանեցի ա-
ռողջակազմ թաթին՝ Շուլաւէրում, որը ամարան
սկզբում գնում էր Բորչալու հունձ անելու*):

*) Ո՞ւր ես գնում:

*) Բորչալուի գաւառում՝ առհասարակ բոլոր հնձողները
Իրանից եկած թաթեր են: Չնայելով այդ գաւառի սաս-
տիկ շոգին և տենդոտ բնութեանը, հնձողներն աչքածակի
պէս լափում են դեղին հասած վարունկ, ծիրան, սեխ ու
հազար մի խակ ու մակ պտուղներ և ոմանք կոտորում
են, ու ոմանք էլ մասունք դառած վերադառնում: Դրանք
են, որ ծիրանին անուանել են՝ «դարիք դառն» տար կոտորող:

— Բողջալլիայ, պատասխանեց նա առոյգութեամբ,
կարծես զայրանալով:

— Հա՛րդան գեալերսան*), հարցրին նոյն թա-
թին, որը պատառոտուն քէչում փաթաթուած՝ օրո-
րուելով յետ էր դառնում:

— Բո՛ղ . . . չա՛լ . . . լի . . . դա՛ն . . . պատաս-
խանեց նա հազիւ շունչ առնելով:

* *

— Այ մարդ, քնչ կ'լինի մի կով առնես, կա-
թով ու մածնով եօլա գնանք, ասաց տղքատ գիւ-
ղացու կինը մարդուն:

— լաւ ես ասում, ա կնիկ. էս առանք, որ կը-
թել չ'գիտեմ:

— Ես կ'կթեմ, ասաց կինը:

— Եդ ա էլի, կթես, որ շորերդ թրքաթաթախ
անես:

— Մարդ կ'բնուենք, նա կ'կթի, ասաց կինը
վերջապէս հնարը գտնելով:

— Չի՛ ըլիլ, չէ, զայրացած աղաղակեց մարդը.
ես իմ ապրանքը ուրիշի մաւա չե՛մ, չե՛մ, չե՛մ,
հասկացա՛ր:

* *

Խանութպանը Նաւթալուն փող էր պարտ:
Նա օրական մի քանի անգամ շնորհ էր բե-
րում խանութը և ամեն անգամ խանութպանին քը-
նած տեսնելով՝ արթնացնում էր:

*) Որտեղից ես գալի:

— Ի՞նչ ես ուզում, ամի, ասացին տեսնողները, թող քնի էլի:

— Ախր փողերս ըստեղ են է՛, պատասխանեց նա. որ քնի, զրտեղից կ'աշխատի՝ որ վճարի:

* *

Զուարճախօս երիտասարդը հրաւիրուած էր քահանայի տանը, որը մի շատ սիրուն աղջիկ ունէր:

Ճաշի ժամանակ, ուր նստած էին տիրուհին և աղջիկն էլ, խօսք բացուեց, թէ ով ինչ տեսակ բան է սիրում:

Երիտասարդը մի տարօրինակ ցանկութիւն յայտնեց, որի վրայ քահանան վիճաբանութեան մըտաւ առաջինի հետ:

— Տէր հայր ջան, ասաց երիտասարդը, ազգային առածն ասում է. — «Մարդ կայ, տէրտէր է սիրում, մարդ կայ — տէրտէրակին», իսկ ես երկուսին էլ թողած՝ պէրպէսի ազջիւն է՝ «Իրա՛մ: Ճական ահա այսպէս բան է, դուրս վրայ վիճել չի կարելի:

* *

Պարծենկոտ շահիրը*) մի անգամ մեղր էր կերել, որից յետոյ շատ ճանճեր էին հաւաքուել երեսին: Նա յանկարծ խփելով՝ մի անգամից երեք ճանճ գլորեց գետին, և այս քաջագործութիւնից ոգևորուելով՝ հետեւեալ թուրքերէն իմաստալի ոտա-

*) Ժողովրդական բանաստեղծ:

նաւորը շարամանեց.

«Ուստայ Նազար,

Բելայ եազար.

Բիւր վուրանդայ

Ղըռխ ջան էազար»:

* *

Գիւղական քահանան նոր օրացոյց էր ստացել և ժողովրդականաց մէջ աչքի էր անցնում: Նա գլուխը խորհրդաւոր կերպով շարժելով ասաց.

— Էս տարին շատ լաւ տարի է երևում:

— Ի՞նչպէս, տէրտէր, հետաքրքրուեցին ժողովրդականք:

— Զատիկը Ապրիլ ամսումն է, է՛ն էլ ինչի՛ օր. է՛ն էլ ինչի՛ օր է՛, կրկնեց քահանան չկարողանալով զարմանքը պահել, հազուադիւտ մի դէպք չէ բաց թնչ է:

* *

Հայր ու որդի ջրաղացականութիւն էին անում: Հայրը ցորենը «դոխը»*) չէր ածում, մինչև շահատը չ'տալին:

Մեռաւ հայրը և ջաղացը մնաց որդուն: Սա էլ երբ հեռուից տեսնում էր, որ ցորեն են բերում, բղաւում էր մի 50 սաժէնի վրայ կանգնացնում, շահտը վերցնում, ապա թոյլ տալիս, որ

*) Զագարաձե արկղ, որը կախուած է երկանաքարի վրայ և որտեղից ցորենը կամաց կամաց թափվում է քարի մէջ տեղի անցքը:

ցորենը ներս բերեն ջաղացը:

Մի անգամ էլ, երբ մի մարդու հետ նոյնպէս էր վարվում, մարդն ասաց.

«Օվվէհ, պարսի քան հօր հօրը, ալ պարսի քան հօրը:

* *

Մշեցին քաղաքում երկար տարիներ մնալով երբ որ հաստատուեց, քաղաքային վարչութիւնը որոշեց դրանից ևս հարկ պահանջել:

— Կարօ ախպեր, թագաւորը քեզ վրայ խարճ է դրել, տուր, ասաց իւր ժամանակին հարկահանը:

— Եւ, զարմացաւ Մշեցին, թագաւոր ուրգից գինայ թը աստեղ Մշեցի Կարօ կայ:

* *

— Վայ մէ, դեղի ջան, կլաւի, գողաց գոտեմարտող վրացին, որը ընկնելու ժամանակ կոտրեց կուռը:

— Հուպ տուի վեր կլաւ, բեան, պատասխանեց յաղթող գոտեմարտակից հայը:

* *

Կաթօլիկաց ուսումնարանում մի անգամ հասարակական վարդապետ երկար ու բարակ քարոզում էր աշակերտներին, թէ ամենից առաջ մարդ պէտք է իւր հոգու փրկութեան համար հոգայ, ապա մարմնի հանգստութեան վրայ:

Այս բացատրութիւնից յետոյ՝ դարձաւ աշակերտներից մէկին. —

— Ի՞նչ է լինում այն մարդը, որը հոգում է միայն իւր մարմնի համար:

— Զարմացաւ է, հայր սուրբ, ու շատ էլ հասարակ է լինում, պատասխանեց աշակերտը միամտաբար:

* *

Մօլլա-Նասր-էդինը մի անգամ մի քանի հոգու հրաւիրեց իւր տուն՝ ճաշելու: Նա նոցա կանգնեցրեց դուրսը, իսկ ինքը տուն մտնելով՝ ասաց.

— Դուք այստեղ քիչ սպասեցէք, այս ըոպէիս գալիս եմ:

Հիւրերը շատ սպասեցին, բայց մօլլան չ'երեւաց: Վերջապէս կինը դուրս եկաւ, ասաց.

— Մօլլան տանը չի:

— Ախր մօլլան մեր աչքի առաջ մտաւ տուն, զարմացան սպասողները:

— Ի՞նչ անենք, որ ձեր աչքի առաջ մտաւ — ասաց մօլլան գլուխը պատուհանից դուրս հանելով. կարելի է տունը երկու մուտք ունի ու մէկով մտաւ, միւսով ելաւ:

* *

Ի՞նչ փոփոխութեան են ենթարկվում մարմինները ջերմութիւնից և սառնութիւնից, հարցրեց ուսուցիչը աշակերտին:

— Մարմինները ջերմութիւնից լայնանում են, իսկ սառնութիւնից սեղմվում:

— Ասա մի օրինակ:

— Օրինակ՝-ամառը ջերմութիւնից օրերը երկարում են, իսկ ձմեռը՝ կարճանում:

* *

Գիւղի կօշկակարը մի ճանապարհորդի թաւանելու համար դատաւարտուեց կախաղանի:

Գիւղացիք հաւաքուեցին դատաւորի մօտ և խնդրեցին ներել ասելով՝ որ իրանց գիւղում միայն մի կօշկակար կայ, և եթէ նրան խեղդեն՝ բոլորը պէտքէ բոբիկ ման գան:

— Հապա թնչպէս կատարեմ օրէնքը, ասաց նա:

— Այ, հարեան գիւղում երկու կօշկակար կայ, վերջրէք նրանցից մէկին խեղդեցէք, պատասխանեցին գիւղացիք:

* *

Գիւղացիք Մօլլա-Նասր-է-գիւնին դատաւոր ընտրեցին: Նորա մօտ եկան երկու գանգատաւորներ:

— Սա քիթս կծեց, գանգատուեց մէկը:

— Սուտ է ասում, արդարացաւ միւսը, ինքը կծեց իրան քիթը:

— Գնացէք դուրս, և կէս ժամից յետոյ եկէք վճիռը տամ, ասաց մօլլան. իսկ ինքը մտաւ մի ուրիշ սենեակ և փորձեց քիթը կծել: Նա շատ դէս ու դէն ընկաւ, շատ ուր-մուր եկաւ, շատ ծուրիծուր էլաւ, որ յանկարծ քիթին ընկնի-կծի, բայց չ'եղաւ. վերջին փորձն անելիս՝ սալթաքեց, մի լաւ զրիկաց գետնին ու գլուխը պատուեց: Մօլլան թաշկինակը հանեց, գլուխը փաթաթեց և դուրս

գալով՝ կանչեց գանգատաւորներին:

— Դու դրուստ ես ասում, ասաց նա երկրորդին, որովհետեւ եթէ նա ինքը կծած լինէր իրան քիթը, հիմի գլուխն ինչ պէս աղլուխով կապած կըլնէր:

* *

Դարչին ջան, ո՞նց էր ուսումնարանը. հաւանեցի՞ր, մատաղ, հարցրեց մայրը նոր ուսումնարան ուղարկած երեխային:

— Հա, այնա ջան, շատ լաւն էր. համ էլ գիւսս թնչ, աճի ջան, — գրիս միջին լիւ (լ) էլ կար, հիւն (ւ) էլ ալ:

— Բա, մատաղ, էդպէս ա. թէ որ լաւ կարդաս, տանձ էլ կրլի, խաղող էլ:

* *

Տերտէրի մէկը եկաւ տուն և կնկանն ասաց.

— Իրիցկին ջան, իրիցկին, մի չորս ձու խաշիր ուտեմ, որ փորս վեց-վեց է անում: Ինչն է առատ՝ գիւղի ձուն. իրիցկինն իսկոյն վերկացաւ և մի քանի ըոպէից յետոյ՝ չորս ձուն խաշած պատրաստ տուեց մարդուն:

Տէրտէրը սաստիկ ախորժակով սկսեց ուտել. . . բայց հենց վերջին պատառը կուլ տուեց թէ չէ, հոգին աւանդեց:

Իրիցկինն սկսեց մարդի վրայ սգալ. —

«Ախր ա՛յ տէրտէր, թէ որ պէտքէ մեռնէիր, էլ այդ չորս ձուն թնչու համար կերար. ես այդ

չորս ձուռն թխսկանի տակ կ'դնէի, չորս ճուտ կ'դուրս գար, հաւ կ'դառնային, դրանք էլ ձու կածէին, ճուտեր կ'հանէին, շատ հաւ կուռնենայի, շատ ձու կածէին, որի կէսը մենք կուտէինք, կէսն էլ կ'ծախէինք ու մեր պակաս պուտը կ'հոգայի. իսկ հիմի թնչ ասեմ, թնչ հողը տամ գլխիս, այս մի տուռն մանրերը հիմի ես ո՞նց պահեմ...»։

Եւ երբ պրծնում էր, նորից էր սկսում.—
«Ախր այ տէրտէր, թէ որ մեռնելու էիր...» և այլն և վերջանալուն պէս՝ էլի նորից ու նորից սկսում։

Երեք օրից յետոյ, ինչպէս կարգն է՝ տէրտէրի նաշը տարան եկեղեցի։ Պատարագը սկսուած էր. իրիցկիներ էլի իւր սուգը կցեց.—

«Ախր այ տէրտէր, թէ որ պէտք է մեռնէիր, էլ այդ չորս ձուռն թնչու համար կերար...» և այլն, և այլն, կրկնում էր հա կրկնում։ Դասում կանգնած քահանաներից մէկի համբերութիւնը որ շատ հատաւ, մօտեցաւ իրիցկեկանը.—

—Այ մէր, այ քի՛ր, ախր ամօթ է, խայտառակութիւն է, գոնէ պատարագից պատկառիր, թէ որ ժողովրդից չես ամաչում. թնչ ես առել-անցկացել՝ «չորս ձուռն ինչո՞ւ կերար, հա չորս ձուռն ինչո՞ւ կերար»։ Էլ մի ուրիշ բան գիտես, թէ հենց մէնակ այդ է, օրհնածի կին։

Իրիցկիներ գլուխը վեր բաձրացրեց, որ մի լաւ տեսնի իրան յանդիմանողին և նկատելով, որ նա

մի աչքով կոյր է՝ զլեց.—

—Բա թնչ ասեմ, քոռ տէրտէ՛ր, բա թնչ ասեմ, քոռ տէրտէ՛ր, բա թնչ ասեմ, քոռ տէրտէ՛ր, բա թնչ ասեմ, քոռ տէրտէ՛ր...։

Խեղճ տէրտէրը տեսնելով, որ այդ խաղք ու խայտառակութեանը վերջ չի լինելու—

—Վայ անիծեալ լինես դու, ասաց, էլի առաջուանն ասա, էլի առաջուանն ասա...։

* *

Մօլլա-Նասր-Էգիներ մի եզն ունէր, տանում էր քաղաք ծախելու։

Ճանապարհին եզան պոչը ցեխոտուեց։ «Այսպէս ցեխոտ պոչով առնող չի լինիլ, մուշտարին կ'խրտնի» —մտածեց նա և կտրելով՝ ձգեց խուրջինը։

Ժողովուրդեցին բաւական մուշտարիներ. մէկը շատ հաւանեց, բայց կտրած պոչը նկատելով՝ չուզեց առնել։

«Եթէ բանը դրան է մնացել, ասաց մօլլան, բոլորովին արխային կաց, հրէս խուրջինումս է, էն էլ քեզ կտամ։

* *

Տան տէրը հիւրերին առաջարկեց թուղթ խաղալ։ Չորս հոգի պատրաստուեցան կանաչ սեղանի շուրջը, չորսն էլ բաղդի բերմամբ՝ կակազ։

Տան տէրը քաղաքավարութեամբ նոցա փոխադարձաբար ծանօթացրեց և նոցանից ամեն մինը աշխատելով, որ իւր պակասութիւնը հենց առաջին

անգամից չ'երևայ՝ լուռ գլուխ տողին իրար և տե-
ղերը նստեցին:

Նորքա լուռ բաժանեցին թղթերը և սկսան
«վինտ» (ВИНТЪ) խաղալ:

Խաղացողներէյ առաջինը նշանակեց իւր թղթի մեծը — (КОЗЫРЬ).

—Սանգ. . .անգ. . .ռաւ: Երկրորդը զարմացած նայեց նրա երեսին և կարծելով թէ դա մի կատակ էր խաղրնկերի կողմից՝ թեթև լուզմունքով. —

— Խխնաս. . խխհա՛հ: Երրորդը հաղիւ զալրոյթը
զսպելով՝ շարունակեց սովորականից աւելի կա-
կազելով. —

—Քեանհանձն. . . անրփփփինջ: Զորորդը շրպըր-
տեց խաղաթղթերը սեղանի վրայ և բռունցքը
սեղմած՝ գոռաց զայրացած. —

— Ապպրհ. . ապպպի. . րնտնէր. . :

Զորան էլ կարծում էին, թէ միմեանց ծաղ-
րում են:

✻ ✻ ✻

Տիկինը ծառային հրամայեց, որ գնայ նոր մօդաների մազազինը և այնտեղից իւր նոր մախմուրի քաթիպան բերի. «բայց քանի որ անձրև է գալիս — աւելացրեց նա — տար մեր կառքը, դու ել նստի՛ր՝ այնպէս բեր. տես, որ չ'թրջես»:

Սպասաւորը կատարեց տիկնոջ հրամանը: Երբ քաթիպան բերեց, տիկինը տեսաւ, որ բոլորովին թրջուած է՝ բարկացած գռռաց:

— Ես քեզ չասացի որ չ'թրջես, չիմար. ինչո՞ւ
կառք չ'նստեցիր:

— Նստեցի, տիկին, պատասխանեց սպասաւորը
նեղանալով:

— Ուրեմն քնչպէս եղաւ, որ թրջուեց, ասաց տիւ-
կինը աւելի բարկանալով, — եթէ դու կառքի մէջ
նստեիր, այսպէս չէիր թրջիլ:

—Մի՞թէ դուք կարծում էք, որ ձեր ծառան
այնքան իմար է, ասաց սպասաւորը ձեռները տը-
րորելով, որ չի գիտենալ, թէ կառքի մէջ միմիայն
իւր տէրերը կարող են նստել.— իսկ իւր տեղը կա-
ռապանի մօտ է:

✻ ✻ ✻

Աղպարս, գրուիս նէ մէկ երկու բլէթ սա
տեղը, ասաց Նոր-Նախիջևանցին մի ուրիշի:

— Ի՞նչ բան է:

—Աղպարս, ինչպէս ըսեմ, որ Հասկնաս.—աս-
կէց չորս տարի առաջ մէքամ շուպա առիւ էի
Մոսքով՝ ճուհուգին բազառին մէջը. շտէ քանի
տարիմ՝ խուլանմիշ էլայ. շինդը, ըշտէ մեր վար-
ժարանին ալ մէկ աղեկութիւն մ՝ ընեմ, կսեմ, ու
կուգիմ ալեկուի ցքել 100 մանէթի՝ անպէս որ,
100 մանէթին 85ը ինձի, 15 մանէթն ալ վար-
ժարանին: Գրիս նէ, ճանիկս:

— Զէ, աղպէս այնաճի բաներուն չիմ խառնուիր.
աղ մարդ խաբիի է:

— Ի՛հ, ես ըսի ազգասիրութիւն մ' ընեմ, դուք

չէք հասկընար նէ. . . անպէտէնը՝ կեցիր բարև:

* *

Երբ Ռուսաստանը Բագուին տիրեց և Պարսկաստանի հետ հաշտութեան պայման էր կապուած, Ռուսիայի գործակալը առաջարկեց, որ անպատճառ Կասպից ծովն էլ Ռուսիայի սահմանում համարուի. դորա մասին հարցրին Պարսից շահին:

— Այդ ծովի ջուրը քաղցր է, խմելու կ'հարկաւորի՞, թէ ոչ, հարցրեց շահը:

— Ոչ, Զերդ մեծութիւն, շատ դառն է, խմել անկարելի է:

— Ե՛հ, եթէ դառն է, խմելու էլ անպէտք է, պատասխանեց շահը, էլ ինչներքս է պէտք, յանձնեցէք Ռուսիային:

* *

— Այ մարդ, քնչ անենք, որ մեր բոշքողազ նոքարին ռադ անենք, ասաց կինը մարդուն. էս տափը մտածը ոչ «հա»ն է հասկանում, ոչ «չէ»ն. մէջ ուտում է, ղրաղ ման գալիս. ուտելին դռնաղ, բանելին քոռ:

— Հեր օխնածի կնիկ, պատասխանեց մարդը, ղրա համար էլ դարդ կանեն. դրանից էլ հեշտ բան կայ աշխարհումը՞ս. — Ես բան չեմ դնիլ, դու էլ հաց չես տալ, նա էլ ինքն իրան կ'գնայ կըջանդամուի էլի՛:

* *

Մօլլա-Նասր-Էգինը երկու հորթ ունէր: Մի

օր հորթերից մինը թուր կտրեց և խուրջինի մի թալում եղած գարու կէսը կերաւ: Մօլլան վրայ հասաւ, տեսաւ և յետեիցն ընկաւ, որ բռնի: Շատ «բիժի-բիժի» արաւ, շատ դէս ու դէն ընկաւ, շատ չալիչ էկաւ, քափում-քրտնքում մտաւ, բայց հորթը մօտ չ'թողեց:

Նա էլ յօգնած, բարկութիւնից գազազած՝ ետ դառաւ մի «թլամազ» (կարճիկ ծանր փայտ) վերցըրեց ու կապածին-մին երկու տասներկու-սկսեց վեր հատել:

— Ա՛յ մօլլա, ասաց տեսնողներից մինը, թէ շնորք ունե՞ս, դնտ հրէն ուտողին բռնի ծեծի, թէ չէ ախր եդ ողորմելին ինչո՞ւմն է մեղաւոր, որ թմփում ես է՛:

— Հը հը՛ը՛, պատասխանեց մօլլան, նա հլա ինսաֆով է ժաժ եկել՝ կէսն է կերել. սա որ լինէր, դիտե՛ս թէ բոլորը կուտէ՛ր. . . :

* *

Լօռեցին հիւր էր քաղաքի մի ընտանիքում: Ճաշի ժամանակ ոսկուռ կրծելուց յետոյ՝ շրպրտեց փակ լուսամուտից դուրս ձգելու և տուեց, ապակին ջարդեց, ու զարմանալով բացաբանչեց. —

«Պը՛, ձեզ մատաղ, հրէս, հրէս, լիսը սառցըրել են»:

* *

Հայախօս թուրքը մի երկար միրուքանի հայի տէրտէր կարծելով՝ ասաց.

— Օրհնեա տէր:

— Քէ մատաղ, ես տէրտէր չեմ, ասաց նա:

— Թէ որ դու տէրտէր չես, ես էլ իսկի հայ չիմ, ասաց թուրքը հեռանալով:

* *

Ձատիկ օրը մէկը պատահելով Լօռեցի հովուին՝ հարցրեց.—

— Քրիստոս լարեալ 'ի մեռելոց:

— Հա մեռելոց, պատասխանեց հովիւը՝ գլուխը տմբացնելով:

* *

Մօլլա-Նասր-էդինը մի եզն էր ծախում. գինը որոշեցին: Առնողները մտածեցին մօլլի բարեսըր-տու թիւնից օգտուել, եզը գնից էժան պոկել:

— Այ մօլլա, թէ Աստուած կ'սիրես, շատ թանկ տուիր, արի մի մանէթ ինձ փեշքեշ արա, ասաց նոցանից մինը:

— Լաւ, մի մանէթը քեզ բաշխեցի, ասաց մօլլան:

— Քեզ արքայութիւն ըլի, մօլլա ջան, քու հօգու խաթեր երկու մանէթ էլ ինձ բաշխի, ասաց միւսը:

— Այ շատ լաւ ես ասում, ասաց նա, եդ էլ քեզ փեշքեշ:

— Մօլլա ջան, խղճմտանքով մարդ ես երևում, արի քու արև սադաղէն երեք մանէթ էլ ինձ բաշխի, ասաց երրորդը:

— Աչքիս վրայ, երեք մանէթն էլ քու չարը

տանի, ասաց մօլլան:

— Ախր մօլլա, ասաց չորրորդը, եդքանը որ դրանց բաշխեցիր, բա քեզ ի՞նչ մնաց:

— Ինձ էլ ի՞նչ էլք մնաց, թէ մնաց, պատասխանեց մօլլան՝ եզը տուն քշելով:

* *

Դիւղացի մի խուլ մարդու այծերը կորան. նա գնաց որոնելու:

Երկար որոնելուց յետոյ պատահեց մի վար անողի, որը նոյնպէս խուլ էր:

— Բարի աջողում, աղբերացու, ասաց իծատէրը, այստեղ էձեր չես տեսել արածելիս:

— Աստուծ բարին, պատասխանեց վար անողը, շնորհակալ եմ, Աստուած որդիքդ պահի:

— Եօթն էր, չէ, մինի պոզն էլ կոտրած:

— Հա, գլխով անելով ասաց վար անողը. թէ անեմ, եզներս շատ են քեզարել, ես օր (ձեռքը մեկնելով) հենց էսքանից աւել չ'կարացի վարեմ:

— Շատ ժամանակ է, ինչ որ տեսել ես արածելիս:

— Հա, գլխով արաւ նա, եդ կողքի տափն էլ երեկուայ վարածս է:

— Բա հիմի չ'գիտես որ կողմի վրայ գնացին:

— Ո՞րն ես ասում, փռշնի ծառի կշտի տափը՝ հենց առաջին օրուայ վարածս էն է. և թէ Աստուած յաջողի, ես օր էս պրծնեմ, եզուց էլ (ձեռքը մեկնելով) է՛ է՛ է՛ է՛ն հեռու տափը որ երևում է՛ է՛. . . ցաքուտի վերևը, էն եմ վարելու:

— Հա՛ն. . . դէնը գնացին Հա՛ն. շատ շնորհակալ եմ, աղբերացու. թէ որ քու ասած տեղումը գրտնեմ էծերս, խօսք եմ տալիս, որ պողատ (պողը կոտրած) էծը քեզ փեշքեշ անեմ, ասաց իծատէրն ու գնաց:

— Գնաս բարին, ասաց նրա ետեւից վար անողը, Աստուած քեզ էլ յաջողութեան մէջ պահի, քու մինն էլ հազար դառնայ:

Բաղդի բերմամբ այծերը հենց այն կողմն էին, ուր մատնացոյց արաւ վար անողը: Իծատէրն ուրախացած՝ առաջն արաւ, բերեց. երբ մօտեցաւ վար անողին, պողատի աղանջիցը բռնեց ու ճղղացնելով մօտ տարաւ. —

— Ես իմ խօսքին տէր մարդ եմ. առ աղբերացու, հալալ ըլի քեզ մօրըդ կաթի պէս:

— Ե՛հ, ընչէր ես ասում, պատասխանեց վար անողը վախեցած, ես ընչի՞ պէտքէ դրա պողը կոտէի:

— Վա՛յ. . . սրան մտիկ տուէք. ընչի՞, քանի որ ես պողը կոտրածն եմ խոստացել:

— Հաւատացնո՞ւմ եմ, որ ես չեմ կոտրել. . . :

— Ես ի՞նչ անեմ, էդ եմ խոստացել քեզ, առ:

— Տօ, մարդ Աստուծոյ, բարկացաւ վար անողը, ասում եմ, որ ես չեմ կոտրել:

— Որ քեզ պէս հազարն էլ ըլի, ես էս եմ խոստացել:

— Աստուանձ, երկի՛նք, գետի՛նք, հո՛ղ, ջո՛ւր, ցա-

մա՛ք, իմ հողին գիտենայ, որ ես չեմ կոտրել: Ախր ես ընչի՞ պէտքէ կոտրէի դրա պողը:

— Հազար որ ասես, հազար էլ որ տրաքուես, սաղը չեմ տալ, չէ:

— Տօ եղբայր, ասում եմ— չես հաւատում, երդում պատառ եմ ըլում— դու էլի չես հաւատում. խաչը վկայ, ի՞նչ անհաւատ մարդ եմ էլել դու:

— Իսկի էլ չէ. ախր ընչի՞ տամ սաղը, քանի որ ես պողատն եմ խոստացել քեզ, բայց դու էլի քու էշն ես քշում: Դէ որ չես հաւատում, արի գնանք տանուտէրին գանգատ և թող նա վճիռ տայ. ա՛րի, դէ արի գնանք էլի՛. . . :

Բարեբաղդաբար այս անգամ իրար հասկացան:

— Աչքիս վրայ, էս սհաթիս — վրայ բերեց վար անողը— տանուտէրը չէ, որ թագաւորն ինքն էլ ըլի, ես էլի կ'ասեմ երեսին, որ ես չեմ կոտրել և էլ երդումով կ'հաստատեմ, որ քու էծերը աչքովս էլ չեմ տեսել. գնանք:

Մեր խուլ գանգատաւորները պողատն առած՝ գնացին տանուտիրոջ մօտ հենց այն միջոցին, երբ նա իւր կնոջ հետ կռուել, խռովել ու սաստիկ բարկացած, կրակ կտրած՝ տանից դուրս էր գալիս:

— Տանուտէր ջան, տանուտէր— մօտեցաւ իծատէրը— մի անգա՞ճ դի, քեզ մատաղ. . . Եղբայր, եօթն էծ ունէի, կորել էին. գնացի շատ ման եկայ, չ'գտայ. յետոյ էս մարդը պատահեց, հարցրի՛ հօ չի տեսել. ասաւ՝ տեսել եմ. հարցրի՛ ո՞ր կողմի

վրայ զնացին, ցոյց տուեց. ես էլ ասեցի, թէ ցոյց տուած տեղում գտնեմ, պոզատ էծը փեշքեշ կը-
տամ իրան:

Դնացի դէպի ասած կողմի վրայ—ողորմի սրա
հօրը—էծերս գտայ, բերի. հիմի ուզում եմ պո-
զատն իրան տամ, առնում չի, ասում ա «սաղն
եմ ուզում»: Ինչի՞ տամ սաղը, քանի որ ես պո-
զատն եմ խոստացել. . . :

— Տանուտէր ջան, գլխիդ, արեւիդ մատաղ—իծա-
տիրոջ խօսքը կտրեց վար անողը—սրա ասածին
չ'հաւատաս, լօխ սուտ է ասում. այ ոնց էր բանը,
եղբայր. — Ես ինձ համար վար էի անում, այս մար-
դը եկաւ, բարովեց ու յաջողութիւն ցանկացաւ.
բարովն Աստուծն է—եւ էլ բարովն առայ և շնոր-
հակալ էլայ. յետոյ սա հարցրեց՝ որքան է այսօ-
րուայ վարածս, երեկ որն եմ վարել և յետոյ որը
պէտքա վարեմ. ես էլ բոլորի պատասխանը տուի.
Իսկ սրա էծերը ես աչքովս էլ չեմ տեսել. եթէ
տեսած ըլեմ, բաս թող աչքերս կուրանան, ա-
կանջներս իստակ խլանան:

Այն ինչ՝ սա էկել է ինձ վրայ մեղ է դնում,
թէ էծիս պողը դու ես կտորել: Ախր էսպէս բան
կըլի՞, դու ըլես քու Աստուածը, տանուտէր ջան,
մի անսա է. . . . :

Իսկ տանուտէրի միտքը, որ ամբողջովին
զբաղուած էր մի քիչ առաջ իւր կնոջ հետ ունե-
ցած վէճով, տաքացած բացազանչեց.

— Ինչէր էք ասում, ինչէր. էդ էծը չի, որ օխտն
էծ էլ ուրիշ բերէք, դեռ հլա էլի չեմ բարըշիլ իմ
կնկայ հետ:

Դու մի ասիլ՝ նրանց քու բաղդիցը՝ տանու-
տէրն էլ էր իսկ:

* *

Մի Կարնեցի երիտասարդ եկաւ Աղէքսանրա-
պօլ և ցանկութիւն յայտնեց ամուսնանալու:

— Ի՞նչ դասակարգի օրիորդ էք ցանկանում, աղա,
հարցրեց ծխատէր քահանան:

— Տէր-հայր, պատասխանեց Կարնեցին, մենք դա-
սակարգին ու տոհմին նշանակութիւն չենք տար.
Ես կ'ցանկամ, որ իմ ապագայ հարսնացուս խոհեմ
ըլլայ, առաքինի ըլլայ, բարոյական ըլլայ, սիրու-
նատես ըլլայ, պարկեշտ ըլլայ, գործունեայ ըլլայ,
աշխատասէր ըլլայ, արհեստագետ ըլլայ, փողոոր
ըլլայ, խնայող ըլլայ, և իւր վիճակէն գոհ ըլլայ,
բարեճնունդ և հալալ կաթնակեր ըլլայ. . . . :

Քահանան այլևս չկարողացաւ համբերել մեր
«հոս-հոս» ի անվերջ «ըլայ» ներին, կէս ծիծաղ՝ խօսքը
կտրեց. —

— Որդեակ, ատանկ բարի աղջիկ մեր կողմերը
չլայ. — թէ ըլլայ, նորէն ձեր կողմերը չլայ.
պարապ տեղը հոս ժամանակ մի կորսընցունէք:

* *

Մի Լօռեցի եկաւ քաղաք և տեսաւ, որ բո-
լորն էր զարդարուած են. վերադառնալով գիւղը՝

պատմեց. —

«Պահ, պահ, պահ, ձեզ մատաղ, քաղքցիք չի՛մն
էլ նոր են հրսանիք էլել։

* *

Մօլլա-Նասր-է-գիւնի կինը երկու ամսով հիւր
էր գնացել մօտակայ գիւղը՝ բարեկամի մօտ։

Մի շաբթից յետոյ՝ ամուսնուց ստացաւ հետե-
եալ նամակը։

«Մեր կողքի սենեակը վարձեց մի սիրունիկ
որբեւայրի, որի հետ շատ շուտով ծանօթացայ։
Նա շատ է հետաքրքրվում ինձանով. լուսնում է
սպիտակեղէնս և առհասարակ տանտիկնութիւն է
անում մեր տանը, որպէս հարկն է»։

Կինը վախեցած՝ վերադարձաւ տուն և տեսաւ,
որ որբեւայրին մի 80-ամեայ պառաւ է։

Մի քանի ժամանակից յետոյ՝ մօլլան ինքը
գնաց ուրիշ տեղ։ Կինը կամենալով վրէժխնդիր
լինել և շուտ վերադարձնել՝ գրեց. —

«Քո գնալուց յետոյ ինձ հետ շատ մտերմա-
ցաւ մի դավրիշ, որ համարեա միշտ մեր տանն
է գիշերում։ Նա աչք շլացնող գեղեցկութիւն ունի,
շատ աշխատասէր է և որ ամենադժուարն է՝ շատ
մեծ ընդունակութեան տէր մարդ է. ամեն բան
գիտէ, անում է ինքը իւր ձեռով, և բոլորովին
նուիրուած է մեր տանը»։

Մօլլան պատասխանեց.

«Ստացայ նամակդ, սիրելի կնիկս, որը ինձ

շատ հանգստացրեց։ Ես մտադիր էի մի ամսից յետոյ
վերադառնալ, բայց իմանալով՝ որ այդպիսի մի
սրտացաւ մարդ կայ տանս, հանգիստ հոգով կ'շա-
րունակեմ գործս, որը հազիւ թէ հինգ ամսում
վերջանայ։

«Ուրեմն մինչև գալս չ'թողնես սիրելի դավ-
րիշին, որը այդպէս նուիրուած է մեր տանը. և
որովհետև, ինչպէս գրում ես, ամեն արհեստի
քաջ տեղեակ է ու շատ էլ աշխատասէր՝ պատուի-
րիր. —

«Նախ՝—վառարանի խողովակները մաքրի,
պատրաստի ձմեռուայ համար և երկրորդ՝ մեր
դռանը երկու հոր փորի և այնտեղ թափի մեր
հին ու նոր արտաքնոցների անմաքրութիւնները»։

* *

Երկու Շամախեցի կանայք երկաթուղու կայա-
րանում կանգնած՝ դիտում էին գնացող շոգեկառ-
քին։

—Ս'քա, դարձաւ նոցանից մինը միւսին, ադ
հինչան ա, քի ադ վազօննարը աթանց քինեաման։

—Զան իմանում. մին դեանեա զազան կայ, նրա
տակին կրակ ան անըմ, ճիւրը հիփ ա կեամ, վա-
զօնը քինամա ալի՛։

—Ատ քի ատանց ըլի, մեր Թումաս դադալի
համամը պէտըմայ օրական հառուռ վեռստ ման
կեար քի։

—Ս'հ, հոդամ կիլոխդ ակ. չորս դեանեա չարիս

ա ալի՜, կպցրու տակին, նա ալ քինեայ:

* *

Աքորեցին (Լօռուայ գիւղ) գնաց Շիրակ. կռօներից մէկը հարցրեց.

—Ծօ, կսեն ձեր տեղը սէլ (սալլ) շատ կայ. ըսը տեսնեմ, սէլ տեսեր ես:

—Էլ խի չեմ տեհեւ. . . . հլա կերել էլ չեմ:

—Ծօ տնաւեր, խելուէլ ես, ի՞նչ կսես. սէլը փաղ է, փաղ. . . :

Ե՛րբ հնա, պատասխանեց յամառ Աքորեցին, ըրդուր հմար էր փետահամ գալի տօ. . . ուտելիս տեղը փետահամը քթովս էր դիպչում. . . ես ի ասում, թէ էս ի՞նչ խաբար ա. . . :

* *

Հարսն ու սկեսուր մի տեղ հրաւիրուած էին: Հարսը թոթովախօս էր՝—ճիշտ երեխայի նման էր խօսում. օրինակ՝ «Բնցպէս, ո՛ւր ես գնում» և այլն:

Սկեսրին բարեկամներն ասացին.---

—Ման էկար, ման էկար ու ըտենց լալիկ հարս ճարեցի՞ր. . . :

—Լալիկ չի, լալիկ, ախճի—պատասխանեց սկեսուրը—ըտենց ա, գրափար ա խօսում. հինգ տարի Մաթոսի շփուումը կարթացել ա:

* *

Հայ գիւղացուն կազակը մտրակով ծեծում էր: Գիւղացին ոլոր-մոլոր գալով գոռաց.

«Վայ, նանի ջան, օտկի՛»:

«Օտկի»ն (օգնիր) լսելով՝ կազակը իսկոյն ծեծը դադարեցրեց ու ասաց. —

—Ну-ка, пожалуйста мнѣ водки!

* *

Յուլիսի տօթ օրերին մի Լօռեցի իւր էջն ու գոմէշը տարաւ ջուր խմացնելու: Նա չուանի մի ծայրը կապեց գոմշի, միւսը էշի վզից և ջուրն արաւ:

Գոմէշը տաք արևից նեղացած՝ փնջացնելով մտաւ գետի խորքը, իրան հետ քաշտալով և էշին, որը խեղդուեց ու ջրի երեսին ոտները ձգած պըտըտում էր:

«Այ ցաւս տանես դու, ասաց տէրը ափից՝ բռնոթի քաշելով. ոնց ջրով կշտացել ա ու արխային ոտները ձքել ա պառկէ՛»:

* *

Երկու Շուշեցի գնալով Բաքու, շատ զարմացան թուրքաց մինարէթը տեսնելով:

—Քը մատաղ, ա Գիւլք, դարձաւ նոցանից մէկը միւսին, տեսնաս էդ հինչ զատ ա:

—Բօ, բա գիդամ չըս—պատասխանեց ընկերն առանց երկար մտածելու—ճուրահուր ա էլի, պրտըտիւսալ ըն վէր չուրանայ:

* *

Գիշերով Լօռեցու գոմի պատը քանդեցին ու կովը գողացան: Առաւօտեան բոլոր գիւղացիք հաւաքուեցին խորհուրդ անելու թէ ով կ'լինի տա-

րած։ Աղեցին, մաղեցին, վեր ածեցին, վեր հանեցին, ամմա գլխի չընկան. վերջապէս վճռեցին քեօխվին դիմել։

Եկաւ քեօխվէն, նայեց, գլուխը խորհրդաւոր կերպով տմբացրեց ու մարգարէացաւ —

— Ըրմանում եմ ես ձեզանից. բա դուք մարթիք չէք, հաց չէք ուտում. էս ի՞նչ դժար իմանալու բան ա. — ով որ էս պատը քանդել ա, նա կըլի տարած։

— Ա՛յ, ա՛յ, դարձան միմեանց կանգնողները, որ ասի քօխվէն կ'գիդենայ. . . :

* *

Ակօ բիձէն մեռել էր լողացնում. քանի դըրստում էր մեռելի գլուխը, հակառակի պէս նա այս ու այն կողմն էր թէքվում։

— Տօ դեօռբէգեօռ, էսպէս բռնի գլուխդ է՛, վերջին անգամ գլուխը երկու ձեռով պինդ սղմելով դրստեց Ակօ բիձէն զայրացմամբ. բա էնքան հոգի չի մնացել վրէժ, որ մի քանի հրոպէ դինջ պահես գլուխդ մինչև լողացնե՛մ. էս ի՞նչ ախմախ մեռելի հանդիպեցինք էս օր, տօ. . . :

* *

— Նախանձում եմ քո վիճակիդ եղբայր, ասաց մէկը. պատահելով ընկերին։

— Ի՞նչո՞ւ, ի՞նչ կալ։

— Ել ի՞նչդ է պակաս. ամեն անգամ քեզ մի չքնաղ օրիորդի ուղեկցելիս եմ տեսնում։

— Հա, բայց դժբաղդաբար նա կինս է։

* *

Նասը-Եղինի բարեկամը խնդրեց մօլլից, որ նա գնայ դատարան և սուտ վկայութիւն տայ, թէ «այս ինչ մարդը գողացել է իրենից մի թաղար ցորեն»։

Մօլլան համաձայնեց, զնաց։

— Ահա այս մարդը ինձանից գողացել է մի թաղար ցորեն, ասաց զանգատաւորը, մօլլան էլ վկայ է։

— Իրօւստ է, հաստատեց մօլլան, այդ մարդը սրանից գողացաւ մի թաղար գալի։

— Ցորեն է, ցորեն, գարի չի, ուղղեց զանգատաւորը։

— Սիւնոյն չէ՛, վրայ բերեց մօլլան. մի բան որ սուտ եմ ասում, — թէկուզ ցորեն ըլի, թէկուզ գարի։

* *

Դսեղեցի Օհանէս աղէն (ղինուորական) Ջալալ-օղլուց դուրս գալիս լեռնից մի ձայն լսեց, որ կանչում էր. —

— Օհանէս աղա, օհանէս աղա. . . :

Օհանէս աղէն ձին կանգնացնելով՝ հարցրեց.

— Ի՞նչ ես ուզում, աղա։

— Քեզ հետ չեմ, աղա, ասաց կանչողը։

— Բա ո՞ւմ հետ ես։

— Ա. . . նանց Օհանէս աղին եմ կանչում։

Դսեղեցի աղէն իւր մօտ կանչեց Ջալալ-օղլե-

ցի աղին և հարցրեց.

—Ագա, դու ի՞նչ աղա ես:

—Ոչինչ, աղա, դէ էնպէս ասում են էլի:

Այս լսելով՝ Դսեղեցի աղէն մտրակը քաշեց, ընկաւ Զալալ-օղլեցի աղի ջանին՝ ասելով.—

—Տօ հարամդագա, ես դնամ կռվումը դօշս կարմիր գիւլին դէմ անեմ, դու ձեռներդ ջիբումը դմադաս ու համ ես Օհանէս աղա, համ դո՛ւ. . . :

* *

Երևանի ուսումնարաններից մէկում, ընդունելութեան ժամանակ, կրօնուսոյց քահանան մի Ղարաբաղցու հարցրեց.

—Սրբազան պատմութիւնից թնչ գիտես:

—Հենց հինչ ասես, կ'զիզամ, պատասխանեց քննուողը:

—Ո՞ր պատմութիւնը լաւ գիտես:

—Հենց լօխ էլ լաւ գիշամ:

—Ո՞րն է հեշտ:

—Հենց լօխ էլ հեշտ ա:

—Ո՞րն ես սիրում:

—Հենց լօռ էլ սիրում ըմ:

—Դէ լաւ, ասաց վերջապէս քահանան, Մօվսէս մարգարէի մասին մի բան պատմիր:

—«Հիբ որ—սկսեց նա—Մոսէս մըրքարան քինաց սարին կիլօխը աղօթք ընելու մհար, բիբգան տեսաւ մին քօլ ալաւլամիշ ըլած. Մոսէսին մրօքը քիչ մնաց թա խանձուի՝ մին ղօլը փախաւ, ամմա

էն դարիւմը մին սէաս տիւս եկաւ քօլին քմական թա՝ «Մոսէս, Մոսէս, չըմշկնէդ հանի, ըստեղ սուրփ ա»: Մոսէսը էն սհաթին չըմշկնէն հանից, ծեռքը կալաւ վիվիւելաւ, տիտիկ ընելաւ». . . :

—Լաւ, լաւ, ընդհատեց քահանան, ասա տեսնեմ Աստուած թնչ լեզուով է խօսել Մոսէսի հետ:

—Հի՞նչ լիզուաւ ա խուսալու, պատասխանեց քննուողը զարմացած, — հալբաթ վէր իրան պըրանին լիզուաւը:

* *

Նազան բիբին խաշամանը ձեռին եկաւ քահանայի մօտ.

—Ս. տէր, խաշամանս հլալի, քէ մատաղ, կատուն դիպել ա:

Տէրտէրը օրհնեց, տուեց: Միւս օրը պուլիկը բերեց օրհնել տալու, նրա միւս օրն էլ պղինձն ու քափքոթանը և այլն. . . :

Նազան բիբին շուտ շուտ գնալ գնալով՝ որ տէրտէրին ջիլիզ«վեր տարաւ», նա էլ ճարը կտրած՝

—Ս. պառաւ, ասաց, դէ էնա կատուդ բեր պինչն աղօթեմ մի անգամից հալալուի, թէ չէ խօ ես քու ձեռիցը հալալ հաց չեմ ունենալու:

* *

Լօռեցի երիտասարդը մօտակայ գիւղում մի աղջկայ վրա նշանուած էր: Ամառ ժամանակ՝ մի օր կալերին աղէն գնաց «նշանածատես»:

Երիտասարդի շաղգից բոլոր տանեցիք կա-

լումն էին, իսկ նշանածը տան բակը սրբում էր:

Տղան կամենալով մի շատ քաղցր սիրային խօսքով սիրուն նշանածի ուշադրութիւնը դէպի իրեն գրաւել, սրտատուտը եղած ասաց. —

— Ի՛հ... Թաքօ ջան, գամ-գամ, էդ ձեռիդ աւիլն ուտեմ:

— Ի՛հ, իմ հօրանց էշը խու չեմ, վրայ բերեց նշանածը զայրացած:

* *

Բենին շահի մօտ «էլչի» էր գնում: Սրա քրէհտարը մի շատ հաշուով մարդ էր. հենց «դիբի» դէմ հասնելիս՝

— Վեր եկ, Բենի — ասում էր — ձին մեղք է:

— Աչքիս վրայ, ասում էր Բենին: Գլխավերի պատահելիս՝ —

— Վեր եկ, Բենի, ձին մեղք է:

— Աչքիս վրայ, ասում էր Բենին և իսկոյն իջնում ձիուց:

Երբ դիւզ տեղ էր հասնում՝ —

— Նստի, Բենի, ասում էր, դու էլ մեղք ես:

— Զուխտ աչքիս վրայ, ասում էր Բենին ու ձի նստում:

Երբ շահի քաղաքը հասան, Բենին ձիու համար տալիք վարձը երեք մասն արեց և ասաց ձիատիրոջ.

— Ա. թուրք,

Գլխավերն ինձ, դիւզը քեզ,

«Ի՛հ» տեղն ինձ, դիւզը քեզ. . . և այսպիսով՝ երեք մասնէթ տուեց թուրքին:

— Բենի, ասաց թուրքը վիզը քորելով հեռանալով, շահը չէ, որ Ալլահն էլ ըտենց հախ դիւան չէր անիլ:

* *

Մի Լօռեցու իրան թշնամին պատահեց դաշտում ու մի լուս, քու հաւանած, զօրսեց ու հեռացաւ:

Նրա հեռանալուց լետոյ ծեծուածը կամաց-կամաց գլուխը բարձրացրեց և դիմացի գնացող մի ուրիշ մարդու ձայն տուեց. —

— Ա՛յ դիմացի գնացող հէյ, քի մատաղ, ուշկս վրէս չէր, էն չնչաւատը շատ էլ տվուց ի՞նձ, թէ չէ:

* *

Լեզզու մինը Նուխուց բեռնած էշն առաջն արած գտլիս էր. երևի դեռ էշն անփորձ էր, — եկաւ ու մի փխակի մէջ մնաց: Խեղճ տէրը շատ չարչարուեց, բայց հանելու հնար չեղաւ:

Այդ միջոցին մի մօլլա իւր փոքրաւորի հետ ուզում էր նոյն տեղով անցկենալ: Լեզզին իւր ցաւը մոռացած՝ նրան ձայն տուեց. —

— «Զան մօլլա, բուրդան գեչմա, եազըղ սան, քանըմ էշակ քիմի օլարսան»)»:

* *

Մի անգամ Զինական մանդարինի մօտ եկան

*) Մօլլա, դէսը մի անցնիլ, թէ չէ էլիս օրը կ'ընկնես:

երկու կանայք մի երեսայի հետ: Իւրաքանչիւրը նոցանից պնդում էր, թէ ինքն է երեսայի իսկական մայրը:

Մանգարինը բոլորովին շփոթուեցաւ: Նա հեռացաւ, որպէսզի խորհրդակցի իւր կնոջ հետ, որի կարծիքը մեծ կշիռ ունէր շրջակայքում: Կինը տասնուհինգ ընտանեկ խնդրեց և հրամայեց, որ ծառաները գետից մի մեծ ձուկ բռնեն ու կենդանի բերեն:

Բերին ձուկը: Մանգարինի իմաստուն կինը հրամայեց երեսայի շորերը հագցնեն ձկանը և մայրերի ներկայութեամբ ձգեն ջուրը. այդպէս էլ արին:

Ձուկը հազուստին անսովոր լինելով՝ սկսեց թրպրտալ, դէս ու դէն ընկնել: Այդ ժամանակ կանանցից մինը լաց ու կոծով ջուրը նետուեց, որպէսզի, իւր կարծիքով՝ խեղդուող երեսային ազատի:

«Ահա իսկական մայրը», բացազանչեց մանգարինի կինը և երեսային ու մօրն ազատելով՝ երեսան յանձնեց իսկական մօրը:

* *

Մի քանի Լօռեցի ճանապարհին մի կօշիկ գտան. նրանք մեծ զարմանքով առան միմեանց ձեռից, մանրամասնօրէն զննեցին, բայց չգտան նրա ինչ լինելը:

— Ինչ որ ա, քօխվէն կ'զգնու, որոշեցին նրանք և բերին ցոյց տալու:

— Վայ, վայ, վայ, հեգնեց քեօխվէն, ըտենց պտէք դուք աշխարքումը կառավարութիւն. բա հիւսսենք հասկանում չէք հասկանում, էս էլ չէք

հասկանում ինչ ա. . . :

— Հա դէ մենք ի՞նչ 'տենք հասկանալ, բռի (տհաս, խակ) մարթիք ենք. դու մարթ ես տեհել, աշխարք ես ման էկել, պրիստաւի կուշտ ես նացել, դու կ'զիգենաս. հիւ քէ մատաղ, քօխվայ ջան, քօխվայ, էս ի՞նչ զադ ա:

— Բնգի քա՛ն, քա՛ն, բացատրեց աշխարհ տեսած քեօխվէն:

* *

Թիֆլիզեցին կնոջը յանդիմանում էր ծուլու. թեան համար. —

— Ի՞նչ իս բողբողազի պէս վիր նընգի, բանի կաց էլի. հենց պիտի ուտիս ու քնի՞ս. . . :

Կինը մատների վրայ հաշուելով պատասխանեց.

— Երկուշաբթէ — շրբլդօրայ,
Իրիքշաբթէ — տաշտամօրայ,
Չորեքշաբթէ — լուացք կօնիմ,
Հինգրշաբթէ — բաղնիս կէհամ,
Ուրբաթ լէզգու կիրակի,
Շաբաթ ջհտի կիրակի,
Կիրակի էլ, խօմ կիրակի.
Շան վուրթու մարթ, էլ օր մնաց,
Վուր նստիմ ու բանի կենամ:

* *

Երբ որ Բենին շահի մօտ «էլէի» էր գնացած, վերջինիս սրախօսներից մինը իրաւունք խնդրեց իւր տիրոջից, որ Բենու հետ «բաս մտնի» խօսքով կապի:

Իրենք բոլորն էլ մօրուքով էին, իսկ Բենու մօրուքը ածլած էր. այս բանը աչքի առաջ ունենալով՝ սրախօսը հարցրեց.

— Բենի, քուռակին տարէնը քանի անգամ են

խուզում:

— Քուռակին, պատասխանեց Բենին, գարունքէն գարունք են խուզում, իսկ խօզուզին (փոքրիկ էշ, աւանակ) իսկի չեն խուզում:

* *

Քուռ Մադին պատմում էր. —

— Ես գիշեր հանդումը Աստուած չախմախին էր տալիս՝ պէծին-պէծին անում, մին էրևում էի՝ մին կորչում:

— Քուռ Մադի, ձայն տուին մի քանի համփայ մարդիկ, բա մի քանի սոված գէլեր չկային, որ քեզ ուտէին:

— Ո՞նց չէ, վրայ բերեց Մադին, գէլեր կային, համա ձեզ նման «զոմփառ» շներ կային կշտիս, թնչ կարային մօտ գան:

* *

Լօռեցու դռնով հարևանի խոզը անցնելիս՝ շունը հասաւ, բուրբ պատռեց: Խոզի ճղղոցի վրայ տէրը դուրս եկաւ և շնատիրոջը մի պարկ ու շունց պահ տալուց յետոյ գնաց քեօխովին գանգատ:

Քեօխովէն իսկոյն կանչեց շնատիրոջը և մի պարկ ու շունց էլ ինքը պահ տալով՝ մի որոշեալ տուգանք նշանակեց յօգուտ խոզատիրոջ:

Քօխովայ ջան, գլխիդ գուրբան, իրեն արդարացնելով պատասխանեց շնատէրը. որ ես խոզ ըլեմ, դու էլ շուն, ես ձեր դռնովը խրթխրթալէ անցկենալիս՝ հասնիլ չես բուրս ճթռի:

— Ձէ, էս բալամի ասածն էլ ա ըզորթ, վճռեց քեօխովէն և աղատեց տուգանքից:

* *

Լկեղեցուց վերադառնալիս՝ երեսփոխանը պա-

տահեց մահտեսի Կարապետին:

— Բարով, այսն, ասաց մահտեսին:

— Բարիաճողմ, ա մղդըսի, հո՛ւնց ըբ:

— Փառք ընի Տէրին, լաւ ընք, տիւք հունցըք, էտ հշտեղա ըս կեամ:

— Եղծուցը, դէ հլա վրթապետն էլ քրուզից:

— Հի՛նչ ար ասում, այսն:

— Վի՛յ, քը մատաղ, մին անից, մին անից վէր. . . , ասում ա օրթնեալ Ժողովուրթ, սիրե-

լի Ժողովուրթ. . . դէ հլա դէնն ասից, ասից. . . :

— Լաւ, այսն, բա գիդաս չըս հինչ ասից:

— Ի՛նչ գիդաս չըմ, դէ ասից էլի. ասում ա օրթնեալ, Ժողովուրթ, սիլելի Ժողովուրթ. . . Էնքան ասից վէր, լօխ էլ լաց ընք իլալ:

— Ախր եդ լսեցի, այսն, բա հի՛նչ ար ասում, վէր լաց իք ինում:

— Ե՛, քըմատաղ, ես հի՛նչ գիդամ է. . . կողքիս մին քանի խանըմնէ լաց իլան, ես էլ լաց իլայ:

* *

Երկու Լօռեցի տաւար էին արածացնում. գիշերը նոցանից մէկը տաւարի վերեն էր քնում, միւսը ներքևը:

Ներքևի քնողը մի անգամ, գիշերուայ կէսին, աչքը բաց արաւ տեսաւ, որ մի թուրք գաշոյնը հանած գլխավերևը կտրել է, իսկ մի ուրիշ թուրք տաւարի միջի չաղերը ջոկում է:

Առանց երկար մտածելու, Լօռեցին շուռ եկաւ միւս կողքի վրայ ու ճրրաց թուրքերէն, որ թուրքը հասկանայ և երազ կարծի. —

— «Կ'գնամ մեր տունը. ը. ը. ը. ը. իմ հէրն

ինձ հարսանիք կանի՝ մի տղայ կունենամ,
անունը չ'դնեմ Վարժա. . . . ան, կ'գնայ կրնկնի
ձորերը. . . . ևս էլ կերթամ քարի գլխիցը
կ'կանչեմ, (շաա բարձր) — հէյ Վարժան, Վար-
ժան. . . . :

Այս ձայնի վրայ տաւարի ներքեւ քնած ընկե-
րը, որի անունը Վարդան էր, արթնացաւ, տեղը
կանգնեց. թուրքերը տեսնելով նրան՝ տաւարը թո-
ղին, ծլկեցին:

Դաշոյնով հսկողը հեռուից ձայն տուեց. —

— «Այ լաւ արե՛ր. ես ինչի՞ թողամ զնա՞ս ձեր
տուն, հօրդ ասես քեզ հարսանիք անի, տղիդ ա-
նունը Վարժան դնես, ձորն ուղարկես ու
կանչես. . . . :

* *

Նրկու բարեկամ պատահեցին միմեանց:

— Այդ թնչ խաբար է, Սարգիս, ասաց մինը,
բոլոր երեկոները այրի Ք — ի մօտ ես անցկացնում:

— Սիրահարուած եմ, բարեկամ:

— Ուրեմն ամուսնացիր հետը. . . . :

— Բայց այնուհետեւ էլ ո՛ր անցկացնեմ երեկո-
ները:

* *

Մօլլա-Նասրէդինը ուզեց մի այգուց մերթ
զոդանալ:

Նա մի սանդուխտ դրեց ցանկի վրայ-բարձրացաւ,
յետոյ սանդուխտը ցանկի գլխից ցած դրեց դէպի
այգին և իջաւ:

Բայց հենց այդ միջոցին նկատելով որ այգե-
պանը գալիս է, սանդուխտը դրեց ուսին և բարձր

ձայնով աղաղակեց.

« Սանդուխտ, լաւ սանդուխտ »:

— Դու թնչ բան ունես էստեղ, հարցրեց այ-
գեպանը մօտենալով մօլլին:

— Գոռ ես, աղաղակեց նա, չես տեսնում, որ
սանդուխտ եմ ծախո՛ւմ:

* *

Ծերունի ժամակոչի անունը Աբրահամ էր:

Քահանան կարդում էր Աբրահամու գիրքը և
այդ միջոցին ժամակոչը եկեղեցու անկիւնում
կուչ եկած մրափում էր: Քահանան հասնելով
գրքի այն տեղը, ուր գրած է նահապետի անունը,
ձայնը զլելով՝ կանչեց.

— Աբրահամ Աբրահամ. . . . :

— Օրհնած, ականջներս հօ խուլ չեն, որ էդպէս
բարձր ես կանչում, ասաց քնաթաթախ ժամա-
կոչը՝ օրօրուելով առաջ գալով, դէ ասա, հը,
տեսնեմ թնչ ես ասում:

* *

Ջարդախուհեցու կինը, առանց ամուսնու գի-
տութեան, իրանց զրով էկած (ծանրած) ձին քրե-
հով տուեց, մի մանէթ էլ «բէհ» (առաջնատուր)
առաւ:

Նրբ որ մարդը վերադարձաւ և հաց ուզեց,
կինը «խոնչի» վրայ առաջ բերեց հաց, պանիր և մի
քանի վարունկ:

— Ա. մարթ, անգաճաբունուկն թնչ ես տալի,

որ մի լաւ բան ասեմ, ասաց կինը:

— Հը՛, էտ քնչ ա էլեւ, ա՛ կնիկ, դու ո՛վ, էտ զայդի հաբաշ—հաբաշ խօսալն ո՛վ. եանի դու ըլես իմ արեւը, մի ասա տեսնամ էդ քնչ խաբար ա:

— Բա չես ասիւ, ա՛ մարդ, ես ըսօր քեզ հմար մի մանէթ եմ դադել . . . :

— Ըդո՛րթ, ա կնիկ, դու ըլես էն Աստօծը, մի դրուստ ասա, տեսնամ ո՞րդիան ես դադել, ո՛վ ա տուել, ընչի հմար:

— Բա չես ասիւ, ես ըսօր մեր ձին քրէհով տուի երկու մանէթի, մի մանէթ էլ բէհ առայ-ւփողը կոլոլած մարդու առաջ ձգեց—էդ էլ էն մանէթն ա:

— Պահ քու տունն Աստօծ քանդի. օխիսանայ, մհի վեր մեր ըլրի ճուտը լցուեց, էլ քնչ դարդ, հերնակ քու տիրունչը . . . դէ՛, դէ էլ ինչ խօսամ: Ես սհաթիս միջումը, սուս ու փուս վերկալ էտ մանէթն ու համով հոտով, իրան երեսի ճրովը ետ տուր՝ ումից սուել ես ու ձին բեր, թէ չէ գլուխդ աղցան կանեմ—ու մանէթանոցը շպրտեց կնոջ առաջը:

— Ա. մարթ, արի Աստուն մտիկ արա, ինձ բիաբուռ մի անիւ, ըլած բանին էլ քնչ անեմ, առ մանէթը պահի, հլբաթ մի ցաւի, կրակի կանես-կրկին մանէթանոցը շպրտեց մարդու առաջ, որը ընկաւ վարունկի կլէպի վրայ:

Հենց այդ միջոցին կթի էծը հասաւ վարունկի կլէպներին և մանէթանոցն էլ հետը վերցը-

րեց:

— Ա՛ մարթ, էծը մանէթանոցը կերաւ, աղաղակեց կինը:

Մարդը վեր թռաւ, ձեռը տարաւ էծի բերանը, բայց կարողացաւ միայն մանէթանոցի ծայրից բռնել ու գոռաց.

— Ա՛ կնիկ, չուստ արա, դանակը բեր, քանի էծը մանէթանոցը կուլ չի տուել, բողազը կըտրենք, մանէթը հանենք:

Կինը դանակը բերելուն պէս՝ մարդը այծի վիզը կտրեց, բայց ի հարկէ ոչինչ չգտաւ: Նա փոշմանած՝ թրմփալի տեղը նստեց, ջուխտ ձեռքով գլխին բամփեց՝ ասելով.

— «Աստօծ որ մարթի փայը առնելիս ըլի, առաջ խելքը կառնի, եդով դովլաթը. համ ընգայ անու կորկիցը, համ ընգայ տանու կորկիցը . . . ախ իմ է՛ծ, ջան իմ է՛ծ . . . »:

* *

Մի մօլլա տեսաւ, որ չորս մօթալ ջրի երեսին լող են տալիս. մտաւ դետը, մինը աջ ձեռով բռնեց, միւսը ձախ, երրորդն էլ ատամներով կանգնացրեց:

Նա գլուխը բարձրացրեց, տեսաւ մի խեղճ մարդ չորրորդ մօթալը գուրս է քաշում: Մօլլան մօթալի բուջաղը բերանին բղաւեց.

— «Կարդմունքս վկայ, որ դրա կիսին էլ ընկեր եմ:

* *

Չովդարեցին էշը կորցրել էր: Շատ մանգա-

յուրաց ու յօգնելուց յետոյ ճարահատեալ կանչեց.

— Ախ, բող էջ, դուրս արի մի անգամ էլ խռանչի ու կորի:

* *

Մի հովիւ գնաց քաղաք բարեկամի տուն: Ճաշին կոլուակ (քիւֆթա) բերին ուտելու:

Նա առանց մտածելու կոլուակը վերցրեց և փառաւորապէս կծելուց յետոյ դրեց ամանի մէջ: Բերանը սկսեց սաստիկ այրուել և ամաչելով բերանից վայր ձգել, խեղճը ինչպէս որ եղաւ, մի կերպ կուլ տուեց, բայց վայ էն կուլ տալուն. բերան, պռօշ, կոկորդ այրեց, խորովեց և աչքերից սկսկեց գլդուր-գլդուր թափել:

Մի ուրիշ անգամ հովիւը էլի եկաւ քաղաք և իջաւ նոյն բարեկամի տանը:

Այս անգամ ճաշին առաջ բերին տօլմա: Հովիւը վերցրեց տօլմաներից մինը և շուռ ու մուռ տալով՝ նայեց ու ասաց.

— Հը հըը. . . էլլըհա էն օրուան տղտուղորող գատն ա է, ամմա տրեռում պտատալլըն թա գիդամ վէջ-և ոչ մի թիքայ չվերցրեց, ասելով, որ կուշտ է:

* *

Եօթը տարեկան երեխան օջախի մօտ նստած գդալով կաթն էր խմում: Տանը ոչոք չկար և շունը մօտենալով՝ սկսեց ամանից կտթը լակել:

Երեխան բաբկացած՝ գդալով ծեծում էր շանն ասելով.

— Էյ, Թօբլան, էս հի՛նչս անըմ, կաթը լօխ շաղ ըս տամ, քթօլաւ կէր ըլի:

* *

Մի վրացի, որը ծառայում էր Գանձակեցու մօտ, նոր քիչ ու միչ սովորել էր հայերէնը Զարդել:

Մի օր այգում մի գայլ տեսաւ, որից վախեցած՝ վազեց աղի մօտ և ասաց.

— «Աղա, էնթէն մէ գէլ տեսար, վախեցար ինձ ուտես»:

* *

Ղարաբաղցին էջը փայտով բարձած, անտառից տուն դառնալիս՝ ճանապարհին մի խումբ սոված գայլերի պատահեց, որոնք կատաղաբար յարձակուեցին վրան. նա էլ ահից սարսափած՝ էջը թողեց, փախաւ մի տեղ թագ կացաւ:

Երբ գայլերը իշին կերան քուլթահ արին, ամենքը մի կողմով հեռացան կորան: Գիւղացին սիրտ առաւ, դուրս եկաւ թագստի տեղից և գնաց տեսաւ, որ միայն իշի պոչն է մնացել: Խեղճը վերցրեց և իշի գլուխը լալով ուղղուեց տուն:

Կինը տեսնելով մարդուն գունատուած և առանց իշի, վախեցած հարցրեց.

— Ետ հի՛նչ խաբարա ա, այ մարթ, ըռանգդ ի՞նչ ա թռած:

— Էյ, ա կնէգ, ասաց մարդը կոտորուած սրտով, հնչանըս խաբար. փէտը պեռնելի թա պիրիմ,

անդէր կիւլերը եկան, քիչ ար մնում թա ինձ էլ
օտին:

— Պա ի՞նչ էշը պէտք չիւր թողում, փախճում:

— Պէտք թողեցի, վար էաթ թողեցին է՛, վրայ
բերեց մարդը՝ պոչը կնկայ առաջ ձգելով:

* *

Հոգեհացին մարդ ուղարկեցին քահանային
կանչելու:

— Տէրտէրը տանն է:

— Չէ, պատասխանեցին նրան:

— Բաս ո՛ւր գնաց:

— Դուրս եկաւ, որ ուղարկուած մարդուն շուտ
պատահի:

* *

Լօռեցի Ասլամազենց չորան տղան ամբողջ
կեանքը սարերումն ու չուերումն էր անցկացրել:
Ձառկին եկաւ տուն տաւարածներին հաց տանելու:

Նա պաշարը վերցրեց «տղարջղում» (մսխաղ)
դրեց, վերեւանց էլ երկու դաթայ պնդացրեց՝ մինչ
տեղ հասնելուն պաշար, որ ճամպայ ընկնի՝ տա-
նեցիք ստացին, որ պատարագը կանգնած է, գնաց
ժամը աղօթք անի:

— Ժամը ո՛րն ա, ասաց նա զարմացած, ես գնամ
ընդի թնչ անեմ:

— Ա՛յ, էն վէնձ տունն ա, որ «պոպոզ» գլուխ
ունի, կերթաս նի կ՛մտնուս, ինչ որ ընդեղի մար-
թիքը կանեն, դու էլ հնենց կանես. աղօթք

անելն էտ ա:

Տղարջղը ուսին, չոմբախը ձեռին գնաց մտաւ
ժամը, տեսաւ, որ բոլորն էլ գլխաբաց են՝ ինքն
էլ վեր կալաւ: Այս ուսին կողմը նայեց, տեսաւ, որ
շրթունքները շարժում են, ծերերն էլ միրուքներն
են տմբացնում— «Հլբաթ նրանք մըստակ են ծա-
մում, մտածեց նա և միահադին կտոր մաստակ հանեց
ջերիցը, գցեց բերանն ու սկսեց ծամել:

Ողջունի վեր գալու ժամանակ ժամաւորներն
սկսեցին մէկ մէկու խոնարհուիլ ու գլուխ տալ:
Ասլամազենց դեադի սիրտը կասկած ընկաւ. — «Հը՛,
չի թէ սրանք խօսք ու մին են անում զաթենին
գուդիցս խլէն. բա ինչ, ձեր հօրն օղորմի, կ՛տա-
նէք հն... » և սկսեց պատրաստ կենալ ու ան-
դադար դէս ու դէն խլշկոտալ:

Քիչ ժամանակից յետոյ՝ քահանան սեղանից
ձայնեց.

«Առէ՛ք, կերէք... »:

Գեադի աչքերը մթնեցին. նա կարծեց, թէ
բոլորն էլ վրայ են թափվում զաթենին խլելու,
աչքը դբա դուռը ձգեց ու բղաւեց.

— «Բա ինչ, հենց էտա կ՛խլէք ա՛յ... «Հլա
տեսէք դեադի գուդումը էրկու դաթայ կայ, ասումա,
առէք կերէք». այս ասին ու զուրս ծլկելը մէկ
արաւ և էն գնալն էր ինչ գնաց, էլ ժամի երես
չտեսաւ:

* *

Ծալկեցի հայը փոքրիկ սալակով մի անդամալոյժ պտրտեցնում էր Թիֆլիզում փողոցներում և ողորմութիւն էր հաւաքում: Մի հարուստ տնից ողորմութիւն խնդրելիս՝ տանտիկինը խղճալով հարցրեց.

— Դրա թնչն է ցաւում, «կուտ» է (վրացերէն անդամալոյժ):

— Հրամանքս, աղջիկ-պարոն, պատասխանեց Ծալկեցին, կարծելով թէ հաց ուտելու մասին է հարցրնում, կուտէ — թնչպէս չի ուտի:

* *

Մի ղուզղունակեր Կուրթանեցի ձիով Դսեղ գնալիս՝ ճանապարհին թամբը տակից կորցրեց և չիմացաւ—այնքան էր մտքի ծովն ընկած:

Հասնելով գիւղը, յայտնեց՝ որ ինքը մի հնա-րագէտ ուստայ մարդ է և եկած է յատկապէս «Կալ-քարից») մեղր հանելու:

— Ի՞նչպէս պէտքա հանես, ուստայ, հարցրին հետաքրքրուողները զարմացած, չէ՞ որ ճամպայ չկայ գնալու:

— Ինչ թոկով քաշ կ'անէք վերեւից ու կ'հանեմ:

— Ահրբ մի Կալ-քարը հարիր գազ բացրուծին ունի, որ թոկը կտրուի—վեր ընգնես, մեծ թիքէդ անգաճդ կ'մնալ:

*) Կալ-քարը Դսեղայ ձորում մի ահագին բարձրութիւն ունեցող քարափ է, որի ճեղքերում վխտում են անթիւ վայրէ մեղունքներ:

— Էդ էլ եմ միտկ արել, հանգիստ պատասխանեց ուստէն:

— Ո՞նց ես միտկ արել:

— Ես կ'մտնում կողի (փայտէ մեծ ցորենի չափ) մէջը, թոկը կողիցը կ'կապէք քաշ կանէք. թէկուզ թոկը կտրուի էլ, ես կողի միջին կ'լեմ, ինչ թնչ պըտի ըլիլ որ:

* *

Ջալալ-օղլում մի կակադ սպայ մտաւ մանրավաճառի խանութը ծխախոտ առնելու:

— Ա-ը, Կ-ը՝ . . . дайте ли . . . папиросъ.

— Կը . . . Կը . . . какой сортъ, Եր . . . ԵրԵ . . . баринъ, հարցրեց խանութպանը:

— ԿըԿ . . . какъ ты смѣешь др . . . др . . . др . . . др . . . дрԿ . . . дразнить, Եր . . . Եր . . . Եր . . . ԵրԵ, мерзавецъ?! . Գոռաց սպան կատաղութիւնից քոլորովին լեզուն կպչելով, և մըտրալն առաւ, ընկաւ խեղճ մանրավաճառի ջանին: Խեղճը հարուածների սաստկութեանը չդիմանալով՝ աղիողորմ լացով աղաղակեց. —

— Եր . . . Եր . . . баринъ ջան, եր, եր, եր я др да такой, եր, եր, եր я др да такой, ուզում էր հասկացնել, որ ինքն էլ է կակադ:

* *

Շ . . . եցի Քիւրանանց Յազանը Բնաձորից օրանի*) սալով փուշ էր բերում: Ճանապարհի խոր՝

*) Մեծ խրճան սալ է.

դուբորդութեանը ուշ չդարձնելով, նա փառաւորապէս նստել էր բարձած փշի գլխին և քշում էր:

Երբ որ ակը մի փոս ընկաւ, սայլը ծռուեց և սկսեց կամաց, կամաց շուռ գալ:

Յագանը դէպի հակառակ կողմը ծռուելով և սռնու ճըռճուոցի հետ, կարծես տակտով ձայն տուեց.

— Պրանեց, պրանեց, պրանեց, ըհը, ը, ը պրանեեց... և թըրմփ — ձգուեց սայլի հակառակ կողմը:

* *

Մ. Նասր-Էգինը մի անգամ իրանց բոլոր հաւերը հաւաքեց և տարաւ քաղաք ծախելու: Ճանապարհին՝ անտառին մօտիկ մի տեղ, բոլոր հաւերին շաց թողեց, որ համ քջուջ անեն-կերա-կրուեն, համ էլ քիչ հանգստանան. միայն աքաղաղը պահեց:

Դուռս գալուն պէս՝ բոլոր հաւերը մտան անտառը և ցրուեցին: Մօլլան ետևներից նայեց և գլուխը տմբացնելով՝ —

«Դնացէ՛ք, արխային ման եկէք, հրէս ձեր զաւակուլը (հսկողը) կշտիս ա:

Մի քանի ժամ սպասելուց յետոյ դարձաւ աքաղաղին —

— Ո՞ր գնացին, շուտ կ'գան: Բայց որովհետև պատասխան չստացաւ, մի փայտ վերցրեց և աքաղաղին ծեծելով ասաց.

— Եդ ո՞նց է, կէս գիշերին իմանում ես, թէ

էրբ պէտքէ լուսը բացուի, հիմի օրը ճաշին չըգիտես ուր գնացին կանայքը՞:

* *

Ռուսաց լեզուի ուսուցիչը «Одинъ и два» յօդուածը կարդում ու թարգմանում է Գ. բաժանման աշակերտաց.

«Ротъ у насъ одинъ всего, а уха два-отчего?

«Самъ ужъ смекай: больше ты слушай, да меньше болтай».

Բերան մեզ մօտ մէկ բոլոր, իսկ ականջ երկուս — ինչո՞ւ:

Ինքզը հասկացիր. շատը դու լսիր և քիչը դուս տուր:

* *

Գիւղացի ճանապարհորդը մի Լօռեցի վարանոցի պատահելով՝ հարցրեց. —

— Բարի աչողում, բիձայ:

— Բարով էկանք... կօքէ հօ, հօ օ... կցեց մաճկալը իւր նոր կազմած «դօրոյի» (գութանի երգ) հետ:

— Դսեղայ ճամպէն դվորն ա, աղաղակեց գիւղացին, որպէս զի երգող մաճկալը լսի:

Բարով էկանք, կօքէ հօ հօ օ, զլեց նա կիսատ մնացածը...

— Դսեղայ ճամպէն դվորն ա, բիձանայ, կրկնեց ճանապարհորդը նոյն աղաղակով:

Մաճկալը կարծելով թէ բարեն է կրկնում,

սաստիկ բարկացած շարունակեց խանգարուած դօրովը-

— Տօ դէ կուէրի շան տղու տղա . . . Հա, Հօօ Հա, Հօօ . . . (Հօտաղներին) քէ Հա քէ, քէ Հա քէ . . . :

* *

Շ . . . եցի Մադունց Աւագին մի Թիֆլիզեցի Հարցրեց.

— Բիձայ, ինչք գլխիդ մազը սիպտկիլ է ու երեսինդ կի ջեր սիւ է:

— Վայ մէ, վայ մէ, պատասխանեց Աւագը նոյն բարբառով, բաս էնքան խիլք չունիս վուր Հասկանաս. չիս գիդք, վուր գլխիս մազը երեսիս մագեմէն 20 տարով մինձ է . . . :

* *

Ժլատը, դարմանի թանկ տարին, երկու շահով մի ձիու գլխի տոպրակ «բարըշեց» և ինքն առած՝ գնաց մարագը իւր ձեռքով լքցնելու: Նա մարագում չոքեց, տոպրակը բաց արաւ և ամեն մի բուռն ածելուց յետոյ՝ ոտով ու ձեռով «զնգում էր», որ ծաւալից շատ տեղաւարցնի:

Տէրը, որ ներկայ էր, համբերութիւնը հատած՝ ձայն տուեց.

— Ախր մի քիչ հոքով ժած եկ է, Հանէս ամի. տոպրակդ խու պտառուեց:

— Փող չեմ տուէլ, վրայ բերեց ժլատը. էնքան պէտքա զնգեմ, որ «ս» ըստեղ պըտուի Կիւ ըստեղ:

Ժլատը սաստիկ հիւանդ ժամանակ՝ բոլոր ունեցած փողը թղթէ դրամներ շինել տուեց և բռնում սղմած պառկեց:

Վերջին շունչը փչելու միջոցին՝ բարեկամները մօտ եկան և մեռնողի աչքերը փակելով՝ աշխատում էին բուռը բանալ փողերը հանելու համար: Հիւանդը վերջին ուժը հաւաքելով՝ բացեց աչքերը և նուադած ձայնով ասաց.

«Այ օխնուածներ, էս էլ հոգիս խօ չք, որ հեշտ հալով բաց թողամ է . . . փո . . . ող ա է . . . փո ող . . . » և աւանդեց հոգին:

* *

Ջուրուեցի Սօյուն-բէկը եկել էր Նիժ, Վարդանի տուն հիւր. ամենքն էլ դուրսը զբաղուած էին գործով. տանը ոչ մարդ կար, ոչ կնիկ:

Սօյուն-բէկը սովորական հիւրերիցն էր, և որովհետեւ շատ քաղցած էր, ուզեց մինչև տանեցոնց գալը փորը Նիւթ գցի: Ընկաւ տան «պուճախները» և դարստած պուլիկները մին-մին տնտղեց. մինը պանիր էր, միւսը մածոն, երրորդը զաւուրմայ, մինն էլ թանձր էր. ձեռը ուժով մէջը կոխեց, դու միասիլ՝ սառած արդար իւղ է: Դռնից ոտի թմփթմփոց լսեց թէ չէ, Սօյուն-բէկը օջախի մօտ վազեց, ձեռը շատ թափահարեց, որ դուրս բերի, չեղաւ. չաւլամիչ պուլիկը տղի պէս կպել էր, պուկ չէր գալիս: Հիւրը նստեց, աջ ձեռը պուլիկ հետ քամա-

կին դրեց և եափնջին քաշեց վրէն:

Տեսցիք իրար ետեւից տուն թափուեցին ու մարդ, կնիկ, երեխայ օջախի շուրջը շար ընկան:

Հացի պատրաստութիւնը տեսնելուց լետոյ ձեռի ջուր ածելու ժամանակն եկաւ. հիւրը ձախ ձեռքը դէմ արեց:

— Սոյուն-բէկ, հարցրեց Վարդանը, միւս ձեռքդ քնչ է եղել, որ առաջ չես բերում:

— Վարդան ամի, աջ ձեռս շատ փիս հալի է, ցաւից մեռնում եմ. եթէ պաշտօնի մարդ չ'լինէի (մովրաւի ծառայ էր), տանից չէի դուրս գալ:

— Ախր էդ քնչ տեսակ վէրք, կամ ցաւ է, որ քեզ պէս մարդին խեղճացրել է. բեր մի քիչ տանեցիք եղից բանից քսեն — փափկի:

— Ձէ, Վարդան ամի, խելքս չի կտրում, որ դըրանով բան դառնայ. հէնց էս սհաթիս էլ եղի մէջն է, բայց էլի ցաւում է:

— Լաւ քու քէֆն է, ասաց տան տէրը և լռեց:

Սոյուն-բէկը ձախ ձեռով մի կերպ հարամ-մարամ հաց կերաւ ու խնդրեց, որ իրան տանեն ձիու մօտ: Գոմի դուռը հասնելուն պէս՝ նրա բաղդից քամին ճրագը հանգցրեց:

— Լաւ, հոգ չի, ասաց հիւրը, անճրագ էլ ձին կ'գտնեմ, դժուարը մինչև այստեղ էր: Ծառան հանգած ճրագով դարձաւ տուն:

Սոյուն-բէկը գնաց ձիու մօտ, նորից չար-չարուեց, որ պուլկից ազատուի, բայց չեղաւ ու չե-

ղաւ. ձեռը իւղի մէջ ուռել, պնդուել էր:

— Ա՛խ, պուլկի, տես քու հախէն ես ո՞նց կը-գամ, ասեց ու չարացած սրտով պուլկիը խփեց, «տրաք»-պատի ճակատովը: Պուլկիը փշրուեց, ձին փռնչաց ու խրտնելով կապ ու կոտոր էլաւ, քիչ էր մնում Սոյուն-բէկին ոտնատակ տայ:

Մի «խէլի» ժամանակ «թփռուշօ-թփռուշօ» անելով՝ հազիւ ձիուն հանդարտեցրեց և աչքերը հաղաղելիս՝ նկատեց, որ ձիու գլուխը իւղումը կո-րած է. նոր գլխի ընկաւ, որ վռագելուց ու բար-կանալուց՝ պուլկիը, պատի տեղ, ձիու ճակատովն է տուել:

Շ . . . եցի ձղըցպանանց Պետին մի երեկոյ դուրս եկաւ տեսաւ, որ կնկայ կապած հորթը բաց է ընկել, գնաց բռնեց կապեց: Մի քիչ կացաւ, դուրս եկաւ, տեսաւ, որ էլ է բաց ընկել, կրկին բռնեց, կապեց ու եկաւ, քնեց:

Առաւօտը «ծէքը-ծէքին» վերկացաւ, տեսաւ, որ հորթը չկայ: Մի փայտ վեր կալաւ ու տուր թէ կտաս՝ կնկանը—

— «Ատա շան տղու կնիկ, բարկացաւ Պետին, հորթը էն վէնց ես կապել, վէր քրզանից եղը երկու հետ էլ ես եմ կապել ու հմի պէաց ա ընգել, կորել:

Մի հայ կաթօլիկ վարդապետ գիւղի հրաւեր-բում, իւր գիտութիւնը ցոյց տալու մտքով՝ խօ-

սոււմ էր բոլորովին չեղած ու չլսուած բաների վրայ։ Տեսնելով, որ գիւղացիք ապշած լսում են իւր ասածները, վարդապետը հետզհետէ մտաւ գիտութեան ամենամուտ խորքերը։ Խօսքը ճակատագրի մասին էր, և ահա թէ ինչպէս բացատրեց գիտնական վարդապետը։

— Մարդս, ասաց նա, դեռ աշխարհ չ'եկած՝ Աստուած նրա ճակատին գրում է այս երեք բանը՝

1-Ո՞ր աւագանում պէտքէ նա մկրտուի.

2-Ո՞ր աղջկայ հետ պէտքէ պսակուի և

3-Ի՞նչ մահով պէտքէ մեռնի։

Վարդապետ, ձայն տուեց մի սրախօս երիտասարդ, ուրեմն կամ Աստուած սխալուել է, քո ճակատին միայն երկու բան է գրել, կամ թէ չէ, դու Աստծուն խաբում ես, որ չես պսակվում ճակատիդ գրած աղջկայ հետ։

* *

Ե... եցի Շաշունց Գօգու կինը թուրքերէն լեզուն շատ էր սիրում և այդ լեզունով խօսելը «ջումարդութիւն» էր համարում. բայց դժբաղդաբար ինքը՝ Գօգին թուրքերէն չգիտէր։

Մարդու մահուանից յետոյ կինը ուզելով մարդու՝ թուրքերին քաջութեամբ վախացնելը ցոյց տալ մի քանի հարեան կանանց, «հոգոց» անելով՝ ասաց.

«Հէյ գիդի հա Շաշունց Գօգի, վեր թուրքին ասի, «նա դըր, նա դըր, նա խաբար դըր»։

Մօլլա-Նասր Էգինի տուն մի դավրիշ հիւր եկաւ։

Մօլլան նրան լաւ հիւրասիրեց։ Դավրիշը տեսնելով, որ մօլլան շատ լաւ է ապրում, ասաց.

— Ո՞վ էր մեր նախապապը։

— Ադամը, պատասխանեց մօլլան.

— Իսկ նախատատը։

— Եւան։

— Կ'նշանակի մենք ազգականներ ենք, ասաց դավրիշը տեղը հարմարեցնելով։

— Շատ ուղիղ է։

— Ուրեմն, ասաց դավրիշը, դու պէտքէ բոլոր հարստութեանդ կէսը տաս ինձ, որպէս ազգականիդ։

— Աչքիս վրայ, սիրելի ազգական, ասաց մօլլան և տուեց նորան մի գրօշանոց։

— Էս թնչ է, մօլլա, զարմացաւ դավրիշը. բոլոր ունեցածիցդ մի գրօշ է հասնում։

— Սսսու... կամաց ասա, փսփսաց մօլլան դավրիշի ականջին, եթէ ազգականներս իմանան, էնքան շատ են, որ էդ գրօշն էլ չի հասնիլ քեզ։

* *

Երկու գիւղացիներ, որոնք միմեանց լաւ լաւ զաթին զնգել էին, զնացին գաւառապետի մօտ գանգատ։ Վերջինս կամեցաւ հաշտեցնել և հենց այդ րոպէին մօտից անցնող հայ քահանային ձայն

տուեց.

— Батюшка, помирите ихъ.

— Овъ ни помретъ, պատասխանեց քահանան:

* *

✓ Կոյրը մի քանի սաղաքանիների հետ կե-
ռաս էր ուտում: Նա մտածեց. «կարելի է սրանք
ջուխտ-ջուխտ են ուտում, ես ընչի՞ կենտ-կենտ
ուտեմ» — ինքն էլ ջխտեց:

Մի քիչ ժամանակից յետոյ՝ «կարելի է ե-
րեք-երեք են ուտում» ասաց ինքն էլ երեքեց, և այդ-
պէս՝ չորսեց, հընգեց վերջապէս հասաւ այն տեղը,
որ սկսեց բուռը-բուռն ուտել:

Քանի կացաւ, բռնով ուտելն շտապեցրեց,
ուշ չդարձնելով կռթին ու կորզին: Վերջապէս բե-
րանը լիք, շնչասպառ, ափսեն առաջ քաշեց ա-
սելով՝ —

— «Հէր օխնածներ, կամաց կերէք էլի, թա-
լան հօ չի»:

* *

Աղէքսանդրապօլու Եօթնվիրաց եկեղեցին հա-
ճախում էր մի ուռս և ամեն անգամ ժամասա-
ցութիւնից յետոյ յետ էր մնում ու մի ժամաչափ
չորած, ձեռները վեր պարզած աղիւսում:

— «Богъ, дай мнѣ тысячу рублей».

Մի անգամ էլ, երբ ըստ սովորականին պատրաս-
տուեց աղօթելու, ժամկոչը, որի զահլէն գնացել
էր եկեղեցին միշտ մի ժամ ուշ կողպելուց որովհետեւ

շատ շտապ գործ էլ ունէր, ծածուկ բարձրացաւ
բեմը և վարագոյրի ետեւը թափուեց:

— Богъ, дай мнѣ тысячу рублей — աղաղակեց
ուռսը:

— Убирайся къ черту, не даю — պատասխա-
նեց ժամկոչը վարագոյրի ետեւից:

— Не даешь, не даешь — վերկացաւ աղօթողը
գլխարկը վերցնելով — зачѣмъ ругаешь?

* *

✓ Մշեցին Շուլաւէրու այգիներից մինում խա-
ղող էր ուտում: Նա ամբողջ ճուլթը (ողկոյզ) բե-
րանն էր հաւաքում և «քնթեռ» դուրս շարտում
ու անցնում երկրորդին, երրորդին: Այգետիրոջ
համբերութիւնը որ հատաւ, ձայն տուեց:

— Մկօ ախպեր, հաղողը ըտհենց չեն ուտիլ
ախր. . .

— Հրբէ ի՞մալ կուգեն, խուրբան, ասաց նա բե-
րանը լքցնելով:

— Կէնդ-կենդ, ճօխտ-ճօխտ. . .

— Շտէ գինամ, վրայ բերեց Մշեցին, ադի շաւ-
թալն է, (դեղձ) օր ջուխտ-ջուխտ կ'իթալեն:

* *

Հարուստ քաղաքացու որդին արտասահմանից
դատարկ խելքով վերադառնալով, մի երեկոյ պա-
տըժգամբում ձգուած թէյ էր խմում. նա իւրա-
քանչիւր ուժակից յետոյ անմիջապէս բերանն էր
դնում «Հաւաննայ»ի սիգարը:

Հայրը, որ ներկայ էր, դառն ժպիտով դարձաւ որդուն.

— «Ե՛տենց չէ, Եաշա ջան, էտենց մի անի. չայումը թաթխէ, էնենց խմէ, չայումը թաթխէ, էնենց խմէ. . . »

* *

Հարկահան կաղակը մտրակը պտըտցնելով մօտեցաւ Շ. . . եցի Մարդունց Պետուն —

— Дава: подать.

— Ետը էլլիդ զնաեշ, (իբր թէ—այդ հասարակութեան գործն է) պատասխանեց նա հպարտութեամբ:

Այս խօսքի վրայ հարկահանը կատաղեց և սկսեց մտրակել նրան շարունակ կրկնելով —

— ТАКЪ? ТАКЪ? . .

Ցաւը, որ արդէն Պետուն ոսկոռներին էր հասել, և կարծելով թէ ասում է. «ո՛նց է, տակն է անում թէ չէ» — դողդողալով ձայն տուեց —

— Եյ, եյ բօղը «տրկվըտակ»:

* *

Դաստիարակը. — Թաղէոսեանց, երէկ հինգերորդ դասին ինչո՞ւ փախար:

Աշակերտը. — Չփախայ, վարժապետ, զրքերս վերցրի, վարժապետ, գնացի տուն, վաժապետ ջան:

* *

Քաղաքացին գիւղում տեսաւ, որ լծուած գոմշի սամոդենը բացուեց, շտապով ձայն տուեց սալ-

լապանին.

— So վարդան, կովի սաղելօյի թիւը հիդ էլաւտօ. . . »:

* *

Գիւղացին ու քաղաքացին միասին մածոն էին ուտում: Գիւղացին փափուկ փռան հացին սիրունիկ գդալի ձև տալով տակն էր տալիս անուշ անում. իսկ քաղաքացին հացի չոր տեղերը ուղղահայեաց դիրքով մածնում թաթխելուց յետոյ, համարեա առանց մածնի՝ բերանն էր դնում ծխծամ*) տալիս:

Երբ որ կերան պրծան, գիւղացին ձեռներով փորը զլելով դարձաւ քաղաքացուն.

— Լաւ կերանք ա՛յ, հալալ ըլի մեզ:

— Իս չիմ հալալ անի, գլուխը թափ տալով պատասխանեց քաղաքացին:

— Խի՞, տօ. դու դհա՛ շատ չկերար ինձանից:

Քաղաքացին մտաբերելով գիւղացու՝ հացին գդալի ձև տալը, կրակ կտրած աղաղակեց —

— Ստի հէրն իմ անիծի, թէ դուն ծափ բուն չէիր շինո՞ւմ:

* *

Գիւղացիք կիւրակի օրը եկեղեցու դաւթում ժողովուրած խօսում էին զանազան հարցերի վրայ:

— Իսկի լաւ չենք անում, որ մեր աղջկերանց մատղաշ-մատղաշ փսակում ենք, ասաց մի շատ ու քիչ բանիբուն երիտասարդ գիւղացի. ինչ ցաւ ա-

*) Առանց ախորժակի ծամծմել:

սես, տրանից ա փէյդահ ըլում:

— Դուք էլ շատ էք հասկանում, վրայ բերեց մի ծեր՝ հեգնելով. նոր-նոր հաւեր էք տիւս եկել, ըրկաթայ ծուան էք ածում. ադաթն էս ա.— ըխ-ճըկանը կղնըրէք ու փըփախով տուէք. թէ որ վեր ընգաւ, հլա վադա ունի, թա չէ ու՝ էնա փը-սակելու հախ վախտն ա. ըսհենց եկել ենք, ըս-հենց էլ կ'քընանք:

* *

Երկու կակազներ՝ Դաւօն ու Շամօն գիւղա-կան քահանայի մօտ կարգում էին:

Երբ որ սաղմոսն ընկան, քահանան «Համբար-ձի»-ն դաս տալով՝ պատուիրեց վերոյիշեալ երկու մուկներին, որ առաջիկայ շաբաթ երեկոյին եկե-ղեցում փոխեր պիտի կարդան. ուրեմն լաւ պատ-րաստուեն և ծնողացն էլ իմաց տան, որ ներկայ լինին. յետոյ աւելացրեց՝—

«Հը, էնպէս սըվըրեցէք, վեր սառաստ կար-թաք. թա չէ վեր մի տեղ եանգլիշ ընգաք, «փա-լախի» ու «ռօզգի» տակին կ'չորացնեմ. . . կաշինեղդ կ'պուկեմ»:

Շաբաթ երեկոյեան փոխասացները թազա ալ չիթ շաբէկներով գնացին ատեան կանգնեցին:

Շամօն սկսեց՝—

— Հը, հը, հըմբարձի. . . հը, հը, հըմբար-ձի. . . հը, հը. . . Դաւօյի սիրտը տրաքեց, որ ընկե-

րը չի կարում կարդայ, անհաբերութիւնից շնչա-սպառ վրայ գցեց.—

— Ը, ը, ւ, ւ ատտա շան տղայ, բը, բը, բըբբա. . . զը՝ զաչս իմ ի լերինը. . .

* *

Մի հայ մի ռսի հետ վիճում էր: Երբ որ ռուսը հպարտացաւ, հայը ուզեց ասել՝ «դու շատ մեծ օջախի որդի ես—թարգմանեց՝

— Ты очень большой кухни сынъ?

* *

Շ. . . եցի Կիլօն և մի գիւղացի գողութեան համար կոնչուեցին դատարան: Բանը այնպէս ե-ղաւ, որ դատաւորն արդարացրեց Կիլօյին, որը գը-նաց ունկնդիրներէ մօտ հանգիստ նստեց: Դա-տաւորը դարձաւ միւսին.

— Քեզ մեղադրում են այս գողութեան մէջ. ի՞նչ ունես ասելու:

— Դրուստ ա, աղա ջան, ես եմ գողացել, հա-մա Կիլօն էլ հետս էր, խոռտովանեց նա:

— Սուտ ա ասում, կլխիտ մատաղ, ձայն տուեց ժողովրդականների միջից Կիլօն, տէա ինձ հետ գիւղ-մանութին ունի, նրա հմար վեր իրան քիչ եմ փայ տուել:

* *

Լօռեցի Պօլօլը, որին այս անունով կնքեցին հե-տեալ դէպքից յետոյ, մի անգամ գնաց դաւառա պետի մօտ գանգատ:

Ասելիքը վերջացնելուց յետոյ՝ յետ-յետ գնա-
լով հասաւ դռանը և փականը չկարողանալով բա-
նալ, տեղն ու տեղը մնաց կանգնած:

— Хорошо, пошолъ вонъ, որոտաց գաւառա-
պետը:

— Պօզը ե՛մ ըլ՛սած գլխիդ մատաղ, ամմա(բայց)
դուռը գոհում չեմ:

* *

Գիւղացին՝ հիւրին պատահած ժամանակ. —

— Բարով, հազար բարով տեսանք քեզ, մեր
գլխի վրայ տեղ ունենո. քեֆըդ, հալըդ ահպա-
լըդ. . . էս ի՞նչ թանգ-թանգ էս երևում, բարե-
կամ, համեցէք, նստի՛ր անուշ արա:

Իսկ քաղաքացին. —

— Բարով, ախպեր. ի՞նչ էս եկի, ի՞նչ էս գնում:

* *

Քաղաքացու երեսան, այգեկութի ժամանակ
գնացել էր դիւղը՝ բարեկամի մօտ:

Մի օր այգում մի նապաստակ տեսաւ. յե-
տեից շատ վազեց որ բռնի, բայց ի հարկէ չկա-
րողացաւ: Նա բացած դռնակը ձեռին բռնեց և
բարձր ձայնով աղաղակեց.

— «Աւապուստրի դուս արի, թէ չէ դռնակը
փորդ եմ կոխում:

* *

Խուլը հիւանդ բարեկամին այցելութեան գը-
նալիս ճանապարհին մտածում էր. — «ասենք թէ

գնացի՛, — էտեղ մի դժար բան չկայ. բայց ի՞նչ խօ-
սեմ, ոնց հասկանամ» — (քիչ մտածելուց յետոյ) հա՛,
ի՛նչ կայ որ. . . կ'գնամ տուն կ'մտնեմ, առաջ կա-
սեմ՝

Բարով. կասի՝ «Աստու բարին» յետոյ կասեմ՝

Ի՛նչպէս ես. նա էլ կասի «լաւ եմ». ես էլ
կասեմ փառք Աստու. յետոյ կասեմ՝

Իշտահդ ո՞նց է, ի՞նչ ես ուտում. կասի՝
«Լաւ է, փլաւ եմ ուտում» ես էլ կասեմ՝
Անուշ ըլի. յետոյ կասեմ՝ ո՞վ է բժշկում.
կասի՝

«Փլան փլանը» ես էլ կասեմ՝ Աստուած մա-
ջին ղուլթ տայ:

Այսպէս, հարց ու պատասխանի ծրագիրը կազ-
մելով հասաւ հիւանդի տուն. բայց հիւանդը այդ
օրը շատ դժուար էր, գազազել էր:

— Բարով, ոտը տուն գնելով սկսեց խուլը:

— Չոռ ու ցաւ, էլի եկա՛ր, միւս կողմը շուռ
գալով փնթփնթաց հիւանդը:

— Ի՛նչպէս ես, շարունակեց խուլը:

— Էլ ի՞նչպէս պէտք է լինիմ, տնաքանդ, սատ-
կում եմ:

— Փառք Աստու: Իշտահդ ո՞նց է, ի՛նչ ես ուտում:

— Զահուումար, վրայ բերեց հիւանդը:

— Այ անուշ ըլի: Ո՞վ է բժշկում:

— Հոգեհանը:

— Աստուած մաջին ղուլթ տայ:

Կաղ Թէյմուրլանը երբ որ տիրեց այն քաղաքին, ուր բնակվում էր Նասր-Էդինը, բոլոր քաղաքացիք տեսութեան գնացին ընծաներով: Մօլլան էլ մի բադ պլոկեց, տապակեց ու տարաւ: Չանապարհին սիրտը ուզեց, տապակած բադի մի ոտը պոկեց կերաւ: Թէյմուրլանը նկատեց՝

— Մի ոտն ո՛ւր է մօլլա:

— Սյս քաղաքում, սադերը մի ոտնանի են, տէր:

— Ի՞նչ յիմար բան ես ասում, մօլլա, միթէ կարելի է:

— Այ, տես, որ հաւատաս, ցոյց տուեց մօլլան բակում մի ոտի վրայ կանգնած նիրհող բադին:

Թէյմուրլանը վերցրեց բադով ափսէն և շրպըրտեց կանգնած բադի վրայ. նա միւս ոտն էլ ցած դրեց, փախաւ:

— Տէօ, լաւ տես, զայրացաւ Թէյմուրլանը, տես մի ոտով է փախչում:

— Ի հարկէ, վրայ բերեց մօլլան, եթէ այդ եքքա ափսէն քեզ վրայ շպրտեն, դու էլ երէ՛— «Կա՛լ է՛քքա»:

* *

Մօլլա Նասր-Էդինի հարեանը մի անգամ եկաւ մօլլից էշը բան ուզեց:

— Երէկ առաւօտ որդիս տարաւ ջաղացը, ասաց մօլլան, թէ չէ մի էշն ի՞նչ ա որ, ղուրբան կանէի քեզ:

Այդ միջոցին էշը գոմում զռաց:

— Ինչպէ՞ս չես ամաչում, որ ինձ խաբում ես, մօլլա. բա էն ո՛վ է զուգում:

— Ի՞նչպէս չես ամաչում, վրայ բերեց մօլլան, որ ալեխառն մօրուսով մարդուս թողած՝ ախմախ էշին ես հաւատում:

* *

Տիրացուի հասցէն՝ Ջալալ-օղլուց Թիֆլիզ:

«Սյս գիրս հասանեսցի: Ի քաղաքս. թիվիզ: սուրպ մինասա էգեղեցին: Ըստեփան կահանա Պըլուդեանցին: և ես կըխնթրեմ տէրտէրից: Հասցնի Էփեմեա վառլամովին: և ես շատ շնօրակալ կըլլեմ տէրտէրիցը: և ինքն լինում է Յավլաբար»:

* *

Չարագործի մէկը ատրճանակը ձեռին՝ գիշերով յարձակուեց մի վաճառականի վրայ ասելով՝

— Գնիր ատրճանակս:

Վաճառականը վախեց, սարսափեց և տուեց նրան բոլոր ունեցած փողն ու առնելով ատրճանակն՝ ուրախացած աղաղակեց.

— Գնիր ատրճանակս:

— Միամիտ կաց, աղա, վրայ բերեց չարագործը փախչելով, դարդակ է»:

* *

Հարուն ալ Ռաշիդը սպանել տուեց իւր՝ Ջաֆար Բարսեմիդ-վեզիրին, որին ժողովուրդը շատ էր սիրում:

Մի օր մի արաբացի երգիչ, որ երբեմն բարիք էր վայելել վեզիրից, եկաւ նստեց Հարունի

ապարանքի մօտ և երգեց մի երգ, որը յօրինել էր Բարսեմիդին զովաբանելու համար:

Հարունը, որ սեղանի վրայ նստած էր, հրամայեց ներս կանչել երգչին և հարցրեց.

— Ի՞նչպէս համարձակուեցար դու իմ դռան առջև այդպիսի մի երգ երգել:

— Տէր իմ, պատասխանեց երգիչը, արքաների արքան շատ զօրեղ է, բայց կայ մի բան, որ նրանից էլ զօրեղ է:

— Եւ ի՞նչ բան, հարցրեց նա ապշած:

— Բարերարութիւնը, տէր, պատասխանեց արաբացին:

Հարունը զարմացաւ այդ խօսքից և վերցնելով սեղանից մի ոսկեայ բաժակ, տուեց բանաստեղծին առելով:

— Որովհետեւ դու այդպէս երախտազէտ ես, ուրեմն պէտք է որ այսուհետեւ ինձ ներբողես: Հարունը դարձաւ այժմ քո բարերարը և վայել է, որ նրա անունը հնչեցնես Բարսեմիդի տեղ:

Արաբացին առաւ բաժակը և աչքերը դէպ երկինք բարձրացնելով դոչեց.

— Ո՛վ Բարսեմիդ, ի՞նչպէս մոռանամ քեզ. ահա դարձեալ մի պարգև, որ քեզ եմ սպարտական:

* *

Երեխան կոտրեց ուսումնարանի պատուհանի ապակին. թէև այդ բանը ոչ ոք չտեսաւ, բայց խեղճ աշակերտը դողում էր ամեն մի իրեն ուղղած հայեացքի, հարցի ժամանակ:

Մի կիւբակի օր կրօնուսույց քահանան մի խումբ երեխանց հարցեր էր տալիս ս. պատմութիւնից. նա դարձաւ ապակին կոտրող երեխային.

— Ո՞վ ստեղծեց երկինքն ու երկիրը:

Երեխան, որի փոքրիկ ուղեղը զբաղուած էր շարունակ իւր կոտրած ապակիով՝ պատասխանեց լալով:—

— Տէր-հայր ջան, ես չեմ արել:

— Ինչպէս թէ դու չես . . . հարցրեց քահանան զարմանալով:

— Ես եմ, տէր-հայր, ես եմ, պատասխանեց մանուկը դողալով, բայց խոստանում եմ, որ էլ չեմ անիլ:

* *

Եօթ տարեկան երեխան զառկվարից գլորուելով՝ եզունգը խփեց քարին ու պոկեց: Ցաւի սաստիկ կրակծից շփոթուելով, երեխան լալով աղաղակեց.

«Վայ, նանիջան, ոինգս մխտրկում ան». . . :

* *

Կակազ Դաւօն նշանուել էր, և դեռ չպսակուած՝ տեսան, որ աղջիկը յղի է:

Դաւօն մի ինչ-որ դարդակ բանի համար չէր ուզում պսակուել: Շատ որ խնդրեցին, չեղաւ, աղջըկայ հայրը բողոքեց հոգևոր կառավարութեանը, որից յետոյ Դաւօնին Թիֆլիզ կանչեցին:

Փողովի առաջ նախագահ վարդապետը յանդիմանեց.

— Որդեակ, ինչո՞ւ Լուսաւորչական սուրբ եկեղե-

ցու օրէնքից շեղվում ես. միթէ դու չես մեղաւորը, որ հարսնացուդ յղի է, և միթէ չէիր կարող համբերել մինչև պսակուելը:

— Հը, հը, հը ան անոր սուրբ ջան, աչքերին հուպ, տալով արդարացաւ Դաւօն, լը, լը, լը հը՛՛՛՛՛ն իրակ քշէր, սը, սը սը հոգւորուն ախճիկ, սը՛՛՛՛՛ հիպտակ կեափեր եր . . . Էս չեմ, տիւ ըլես, կ'հըմփիւրես . . . :

* *

Ուսուցիչը չորքոտանիների մասին խօսելուց յետոյ դարձաւ երեխաներին.

— Ի՞նչ չորքոտանիներ գիտէք. երեխեք:

— Զի, վարժապետ, — էշ, վարժապետ, — ուղղ, վարժապետ, — միմեանց յետևից պատասխանեցին խալքը:

* *

Տէրը ծառային մի ձի տուեց, որ տանի քաղաք ծախի: Երբ մտաւ անտառը, ուզեց կանաչ խոտում մի լաւ քնել. նա սանձը թոկով երկարացնելով կապեց մէջքին ու քնեց:

Մի քանի ժամից յետոյ արթնացաւ, տեսաւ, որ ձին չկայ, մնացել է մէջքին կապած սանձը, շատ զարմացաւ:

«Էս քնած եմ . . . երազ է թէ «ըրազոճի» . . . ես Թաթոսն եմ, թէ չէ. թէ ես Թաթոսն եմ, «թալին» ձին կորցրել եմ, թէ որ Թաթոսը չեմ . . . բաս մի սանձ եմ գտել»:

Ժլատը մահուանից առաջ կտակեց.

«189. Թուին յուլիսիւ . . . ին, աչքս բաց, խելքս, ուղուբս տեղը՝ անդերձ արի, որ իմ ունեցած չունեցած փողերս բոլորը հաւաքեն և մի էնպէս անգուման տեղ պահեն, որ ես հողումը փթեմ, փողերս էնտեղ. ով չկատարի, մեղքիս տէրն ըլի»:

* *

Սալբի տատն իմացել էր, որ վկան որքան հասակով լինի, այնքան հեշտ և ուղիղ կընդունուի նրա ասածը:

Մի անգամ տատին դատարան կանչեցին, որպէս վկայ:

— Քանի տարեկան ես, հարցրեց դատաւորը:

— Իրե՛հ հարի՛ր, երեք մատերը չռելով քթի տակ փնթփնթաց նա:

— Ինչպէս թէ . . . ինչ ես ասում, ան պառաւ, դարմացաւ դատաւորը:

— Ի՛հ, ի՛րընչ-էցի՛, ուղղեց նա, ասիլ սլտէի հըզար . . . :

* *

Պօլսում մի Օսման անունով թուրքի յոյները քրիստոնեայ մկրտեցին և անունը դրին Նանի:

Մկրտուած Նանին յոյն միտրապօլիտը վերառաւ իւր մօտ և պահում էր՝ որպէս ծառայի: Միտրապօլիտի պատուէրին համեմատ, Նանին պարտաւոր էր օրուայ որոշեալ ժամերին ծունր դնել, երեսին խաչակնքել և սովորած աղօթքները կըրկնել:

Մեծի պահոց առաջին շաբաթը, ինչպէս որ եղաւ, պահեց նորամկրտեալը, բայց երկրորդ շաբաթում միտքը ծռուեց. փլուզը, քեաբաբն ու տապակած վառիկները որ միտն էր ընկնում, ծուկը քթածակերովը գցում էր:

Նանին, առանց երկար մտածելու, խոհարարին կաշառք խոստացաւ և խնդրեց, որ մի փափուիկ վառիկ տապակի ու ծածուկ հասցնի իրեն. խոհարարը ուրախութեամբ կատարեց նրա խնդիրը:

Հակառակի պէս այդ օրը միտրապօլիտը ուղեց ստուգել, թէ արդեօք Նանին կատարում է իւր քրիստոնեական պարտականութիւնները թէ ոչ, և զգուշաբար բանալով նրա սենեակի դուռը, որ մոռացմամբ բաց էր մնացել, տեսաւ, որ Նանին վառիկը քշտում է ոսկոռներով: Նա կատաղեց, կրակ կտրեց այդ պատուիրազանցութիւնը տեսնելով, և սկսեց շատ թունդ յանդիմանել:

— Այդ դու անգամ, ինչպէս համարձակուեցար այսպիսի մի մեծ պահք քակել, ոտնատակ ոտալ. միթէ չգիտես, որ սուրբ օրէնքով արգելուած է մսեղէն ուտելը:

— Կերածս միս չէր, սրբազան — ասաց շփոթուած Նանին տեղից կանգնելով — լոբի էր:

— Ինչպէ՞ս թէ լոբի էր, անպիտան. մի՞թէ չեմ տեսնում առաջդ դրած վառիկի մնացորդը:

— Օրհնուած, պատասխանեց Նանին համբերութիւնը հատած, դուք ինձ երեք անգամ ջուրը կո-

խեցիք ասելով: Օսմանը դառնայ Նանի, Օսմանը դառնայ Նանի. . . , - ես խօ էդ մոռնողէկ վառիկին քսան ու երեք անգամ ջուրը կոխեցի, անդադար կրկնելով՝ վառիկս դառնայ լոբի, վառիկս դառնայ լոբի. . . բա չդառնաւ. . . :

* *

Ուսուցիչը թուաբանութեան դասին հարցրեց երկրորդ բաժանման աշակերտաց.

— Եթէ ամբողջից հանենք $\frac{1}{4}$ — ական, որքան կ'մնայ: Ոչ մէկը չկարողացաւ պատասխանել: Այդ ժամանակ նա գրպանից մի դեղձ հանեց, չորս հաւասար մասերի բաժանեց և մէկը ուտելով՝ ասաց.

— Այժմ հասկացա՞ք:

— Այո՛ր, վարժապետ, պատասխանեց աշակերտներէց չափահասը, ես հասկացայ, - տեղը կ'մնայ երեք կոր, յի կոր:

* *

Ղազախեցին իշով դնում էր Թիֆլիզ. ճանապարհին պատահեց մի աշխարհական կաթօլիկ քարոզիչ:

— Ուր ես գնում, եղբայր, հարցրեց նա ղազախեցուն:

— Տանում եմ էշս քաղքումը ծախսմ դիւքանի մայեա տընեմ:

— Դրանով ի՞նչ պիտի դառնաս, եղբայր. եկ ինձ հետ միասին ման գանք, ես քեզ կ'կերակրեմ

թէ հոգեպէս, թէ նիւթապէս. փող էլ կ'ճարեմ քեզ համար: Ղազախեցին հաւատաց նրան և յետ դառնալով՝ ուղղուեցին դէպի գիւղերը:

Ճաշուայ շոգին մի գետակի ափի ծառի շուրջում իջան, որ համ դինջանան, համ էլ մի քիչ փորները նիւթ գցեն:

Իջան թէ չէ, քարոզիչը ծոցից մի վեմ քար հանեց և էշի վրայ պատարագ անելուց յետոյ նստան ճաշելու:

Երբ որ կերան պրծան, քարոզիչը չիբուխը լքցրեց, մի քիչ քաշեց ու զազախեցուն տալով սսաց:

— Ես մի քիչ կ'քնեմ, եղբայր, դու արթուն կաց, գրքերս չգողանան:

— Քնի, վաժապետ, ասաց նա, ու սկսեց չիբուխը քաշել և վերջացնելուց յետոյ, (չիբուխը) հրեց իշի փալանի տակ:

Քարոզիչը արթնանալով, ուզեց ծխել:

— Ո՛ր է չիբուխս եղբայր:

— Հրէն ժամի պտրհանումն ա, վարժապետ, վրայ բերեց զազախեցին:

* *

Աբարանցի կինը մարդու գլուխը միշտ թափած էր պահում, այնպէս, որ ինչքան էլ տանը անկարգութիւն լինէր, մարդը չէր համարձակվում մի թեթեւ նկատողութիւն անգամ անել:

Մի անգամ կինը «ապուռ» էր եփել, որը

շատ աղի էր. ուտելու ժամանակ մարդը ուզեց բան աւել, բայց միտն ընկաւ որ տեղը չի՝ լուեց:

Բայց որովհետև աղիութիւնը կոկորդը խանձեց, էլ չհամբերեց.—

— Աղի ես ըրէ, կնիկ. . . դեռ խօսքը չէր վերջացրել, որ ապուռաթաթախ շերեփը ճակատին շրմփաց.—

— Շան օրթու մարթ, իմալ ապուխ չես հաւնի:

Մարդը կիսատ ամանը թողնելով՝ դուրս փախաւ կտուրը և երթկից կախուելով պատասխանեց.

— Երիգ մարդ եմ, փորումս սիրտ ունիմ, աղին աղի կսեմ, ալնին ալնի:

* *

Ձեռնադրող եպիսկոպոսը երկու քահանայացուների քննում էր:

— Եթէ ս. խորհրդի ժամանակ սկիհը մի ճանճ ընկնի, թնչ կանես, հարցրեց նոցանից մէկին:

— Ճկթիս ծայրովը կամաց կ'հանեմ, կ'ծծեմ և դէն կ'ձգեմ: Եպիսկոպոսը հաւանեց այս պատասխանին և դարձաւ միւսին:

— Եթէ ս. խորհրդի ժամանակ սկիհը մի գոմէշ ընկնի, թնչ կանես:

— Ճկթիս ծայրով կամաց կ'հանեմ, պատասխանեց նա սրտալի, բերանս կ'դնեմ, կ'ծծեմ ու դէն կ'շպրտեմ:

* *

Գիւղի հարսանիքում, դհուլին բաժինքից մի

մի բան չեղն առնելով ձայն էր տալիս:—

—Շէն ու շէն կենայ խնամին. իրան ըխճկանը
տուել ա այս ինչ, այս ինչ բանը»:

Բոլորից վերջը մօտ բերին մի բողջում կապած գլխի սարգ ու կարգ և մի ինքնաեռ։ Դհու-
ջին ճակատի աղուխը և ինքնաեռի խողովակը
վերցնելով՝ չիմացաւ ինչպէս ասի, որովհետեւ խամ
բաներ էին։ Մի քիչ մտածելուց յետոյ գտաւ.

— «Շէն ու շէն կենայ խնամին, ձայն ուեց նա,
իրան ըրճկանը տուել ա մի ծառի դուռնա, մի նախ-
շահ փորձաշի կարս:

Շ. . . եցի բազմազին* թուրքը առուտուր էր
անուամ: Բազմազին միւս ընկերը ներս մտնելով հար-
ցրեց,

— «Հը', պլիկ ունի*»:

—Այլ քշի, դէ քեան ետխշի, ասաց թուրքը, իբր հասկանալով, բիւղճմ գառնընդդ նէտիւչիւն աղուեր. գեալանդա բիր՝ «աւկի դա զաթըղ գեաթըրրամ»):

Սրախօսի մէկը բարձրացաւ ձիաքարշին, և

*) Գիւղերում թուրքերը առհասարակ նիսեա եւ առնում
և վճարում են կալերի ժամանակ, վաճառականները միմեանց
հետ խօսելիս՝ պայմանական խօսքեր են զործածում, որ-
պէսզի չհասկանան. օր. պլիկ=բող, աչկերտ=զրաւ,
ծիտ=20 կոպ. և այլն:

*) Այ՛ մարդ, կտրի՛, բա՛, իմացայ ինչի՛ համար է՛ փորներդ
ցաւում, գալիս մի՛ պուլիկ (բողոք) էլ մածուն կ'ըսեմ:

տեսնելով որ բոլոր տեղերը լռնուած են, ձայն
տուեց.

— Երի հա, Նույի տապանը արդէն լիքն է հա:

— Զեզ տեղ կ'լինի, պատուելի, վրայ բերեց նստող-
ներին մինը, որովհետև բոլոր կենդանիներից վեր-
ցուած են, մնացել էր միայն էշը:

Մերձ ի մահ ջրաղացականը կանչեց իր չորս որ-
դիններին անկողնու մօտ և ասաց.

— Որդիք, իմ խիղճս շատ անհանգիստ է. ես մեռնում եմ տանջանքով, որովհետև գիտեմ որ ինձ «որդորմի» ասող ամենեին չի լինելու. գիւղացոց ես չէի թողնում ջրադացը մտնեն, մինչև որ հենց ջրադացի դռանը չէի առնում «շհատը»*), և առնում էի մէկին երկու, Աստուած սիրէք, այլ որդիք, այնպէս արէք, որ ձեր երեսիցն էլ է մի «որդորմի» ասող լինի:

— Միամիտ կաց, հայրիկ, ասաց մեծ որդին, ես այնպէս կանեմ, որ «ոգորմին» քու գերեզմանից անպակաս լինի. դու գիւղացու՛ն կանգնեցնում էիր ջրաղացի դռանը ու ցորենը առնում էիր մէկին երկուս, ես նրանց կ'կանգնեցնեմ ջրաղացից կէս վերստ հեռու՝ կամրջի վրայ և ցորենը կ'առնեմ մէկին չորս:

— Մինչև բեռան մի հակը «շհատ» չառնեմ, ես իսկի կ'թո՛ղնեմ որ նա ցորեն աղա՛յ, ասաց երկ-րորդ որդին:

*) Զրադացի աղալու վարձ:

— Բա, ես գիտ եմ, որ նա մի մտաւ ցորեն յետ տանի ջաղացիցն էլի, գլխին խփելով ասաց երրորդ որդին:

— Բաս էս իմ հրացանս մեռած է էլի, որ գիւղացին ողջ առողջ հասնի կամըջին... լրացրեց ամենափոքր որդին:

— Աստուծո՛ւմ քեզ հաճա՛ն որդիք, ասաց հայրը և մեռաւ:

* *

Մօլլա-Նասր-էգինը ձիուն նստելիս՝ աջ ոտը դրեց ասպանդակին:

— Ինչո՞ւ կարգին չես նստում, մօլլա, նկատեցին նրան:

Ես կարգին եմ նստում, պատասխանեց մօլլան, բայց ձիս յախէ՛լ է:

* *

Մի մարդ ձուաներով բարձած էշն առաջն արած գնում էր. մի ուրիշն էլ իրան գոռած եզան յետևից «հօ, հօ» անելով դէպի դրան էր գալիս: Եղնատէրը ձայն տուեց.

— Այ մարդ, էշդ զրա՞դ քաշիր, որ եզս գոռած է... այ մարդ, քեզ եմ ասում, չես իմանում, էշդ զրա՞դ տար, եզս գոռած է, ձուրդ բեռը կ'ջարդի...:

Բայց իշատէրը «ականջի տակովն արաւ», էլի իրան էշը քշեց: Գիտ եզն եկաւ, հասաւ իշին ու մի լաւ «հարու» տուեց խեղճին պարան գցեց, ամբողջ ձուի բեռը խուրդ ու փշուր արեց:

Իշատէրը բռնեց եզնատիրոջ ետևից և քաշ տուեց դատաւորի մօտ:

Այդ միջոցին մի փոքրիկ տղայ, որ խաղում էր այդ տեղ, ձայն տուեց.

«Եզնատէրը մնջանայ, եզնատէրը մնջանայ»:

Եզնատէրը հասկացաւ երեխայի ասածը:

Եկան դատաւորի մօտ: Իշատէրը զանգատուեց եզնատիրոջից և պահանջեց իր վնասը:

Ուղի՞ղ է, ինչ որ ասում է, հարցրեց դատաւորը:

— Եզնատէրը համը ձեւացաւ և նշաններով ցոյց տուեց, որ ոչ խօսում է, ոչ էլ լսում:

— Ե՛ր, բարեկամ, սա և համը է և խուլ, սրանից ոչինչ չի կարելի պահանջել, ասաց դատաւորը:

— Ի՞նչ էք հրամայում, այ սուղեա, զարմացաւ իշատէրը, սա չէ՛ր, որ ետևիցս «հարայ» էր տալիս, թէ էշդ զրա՞դ քաշիր:

— Հէր օխնած, վրայ բերեց դատաւորը, դէ որ սա բղաւում էր՝ թէ էշդ զրա՞դ քաշիր, դու էլ կ'քաշէիր էլի:

* *

Մի սաստիկ տօթ օր երկաթուղին քաղաքին մօտենալիս՝ մի երեխայ ամենայն եռանդով սկսեց շոգեկառքի շուռքում երկաթուղու հետ վազել. համարեա շնչասպառվում էր, բայց էլի շարունակում էր վազելը:

Վերջապէս ծառայողներից մինը խղճահա-

ընկելուց, թէ հետաքրքրուելուց հարցրեց.

—Այ տղայ, քիչ է մնում շունչդ կտրուի, ախր ինչո՞ւ ես այդպէս վազում, քեզ ո՞վ է ստիպում:

—Ինձ ոչ ոք չի ստիպում, պատասխանեց երեխան վազելը շարունակելով, բայց ես ուզում եմ շուաք տեղերով հասնեմ քաղաք:

* *

Պարսից շահը՝ Արդարն Նուրջիհան՝ մի օր որսի գնացած լինելով, ուզեց իր սպանած եղջերուից մի կտոր ուտել, բայց աղ չկար. նա մարդ ուղարկեց մօտակայ գիւղը, որ աղ բերի, բայց սատարիկ արգելեց, որ առանց վճարելու ոչինչ չվերցնի:

—Ի՞նչ վնաս—հարցրեց մի պալատական—որ թագաւորը մի կտոր աղ վերցնի մէկից առանց վճարելու:

Նուրջիհանը պատասխանեց.

—Եթէ թագաւորը իր հպատակներէից մէկի այգու խնձորենուց մի խնձոր քաղէ, միւս օրը պալատականները ամբողջ խնձորենին արմատից կ'պղկեն:

* *

Ճկոյթ մատը, որ քաղցած մարդու օրինակն է, մի օր ասաց միւս մատներին.

—Բանեկամներ, մենք բոլորս էլ սոված ենք, մանաւանդ ես, որ ամենիցդ էլ նուազն եմ,—եկեք գնանք հաց ուտելու:

Նրա հարեան մատը (անանուն կամ մատանու մատ,) որ անյոյս մարդու տիպարն է, հարցրեց.

—Ոտե՛նք, լաւ ես ասում. բայց ո՞րտեղից հաց ճարենք:

—Աստուած կ'տայ, վրայ բերեց միջամատը, որը հաստատայոյս, առաքինի մարդու պատկերն է, և որը վարձատրուած է բնութիւնից՝ իր բարձր հասակով դիտել միւս բոլոր մատներին:

Բայց ցուցամատը, որը երկմիտ մարդու սիրտ ունի, հարցրեց երկչոտ ձայնով.

—Որ Աստուած չտուեց...

—Կերթանք գողութիւն կ'անենք, գողաց կուպիտ բոյթը:

Աստուած բարկացաւ նրա վրայ, «բամբեց» գող բոյթի գլխին և նա իր ընկեր մատների շարքից ճեղքուեց դէպի ցած ու այն օրից մինչև այսօր ծառայութիւն և օգնութիւն է անում միւս մատներին:

* *

Գողը մի մեծ չարսաւ վերցրեց, բոբկացած, լուսնկայ գիշերով մտաւ մի աղքատ մարդու տուն:

Նա տեսաւ, որ տանտէրը քնած է, չարսաւը փռեց և ընկաւ տան քունջ ու պուճախը, որ ինչ որ գտնի, բերի չարսաւը լքցնի:

Բայց տան տէրը արթուն էր, նա սուտ քունն էր դրել. մինչև որ գողը յետ կ'դառնար որոնած բաները կ'բերեր, նա կամաց վերկացաւ և պառկեց փռած չարսաւի վրայ:

Գողը շատ դէս ու գէն ընկաւ, բայց ոչինչ

չգտաւ, քողովեցման՝ յետ դարձաւ, որ չարսաւը վերցնի գնայ, — և ո՞վ զարմանք . . . տեսաւ, որ տան տէրը վրէժն ձգուած է:

«Լաւն էն է, որ սուս ու փուս չարսաւս զբաւ թողնեմ ու դուրս սլքուեմ», ասացնա, «թէ չէ՝ յետ ուզեմ, պէտքէ ետխէս ձեռը տամ»:

Նա թողեց չարսաւն ու կամաց-կամաց դուրս էր քաշվում:

— Փակիր դուռը — աղաղակեց տան տէրը, — որ էլ ուրիշ մարդ չմտնի:

— Հա՛ քու արևը, ասաց գողը դուրս գնալով, որ բաց էր թողած շատ վնաս տեսար. ես բերի տակդ դօշակ գցեցի, տօ մո՛ւնդռէկ, թող բաց մնայ, որ մի ուրիշն էլ եօրդան (վերմակ) գցի վրէժ է:

* *

— Հալրիկը տանն է՞, հարցրեց մէկը դուրսը խաղացող երեխային:

Երեխան մտաւ տուն և դուրս գալով պատասխանեց:

— Ասեց «ասա տանը չի՛ր»:

* *

Շնողնեցին մի անգամ գնաց արտին ակը տալու, և տեսաւ որ մի ուղղ արտի մէջ տեղը արածում է: Իսկոյն յետ վազեց գիւղը, Հոբոսին իմաց տուեց, որ այսպէս-այսպէս բան կայ:

Հոբոսը մի քանի գիւղացի ետեւիցն արած ե-

կաւ արտը: Նա երկար մտածեց՝ թէ ինչպէս դուրս բերի ուղղը արտից, որ ահագին ոտներով չջարգի:

Տղերք, ձայն տուեց վերջապէս Հոբոսը, մի թոկ բերէք ոտները կապենք ու քաշտալով դուս բերենք, թէ չէ էլ ուրիշ ճար չկայ:

Գիւղացիք շատ «հակալ-հակալ» արին, վերջապէս բռնեցին ուղղին, չորս ոտը կապեցին ու արտի միջովը քաշտալով դուրս բերին:

— Էս խօ ջիւիզ «տափ արաւ» (ջարգեց) Հոբոս, ասաց արտի տէրը մղկտալով:

— Գե՞դք քօք պըհի, սիրտ տուեց Հոբոսը, — տըղէք, մին էլ դպա վէր քաշտուէք, որ պառկած հասկերը դուզ կանգնեն ոտի վրայ:

* *

Անգին Մոսին, որը սովորում էր գիւղական խալիֆայի մօտ, շատ էր սիրում «գիր կապելով» կարգալ:

Մի օր ընկերը հարցրեց:

— Արա Անկին, կարաս կիր կապէ՞ս:

Էն խի՛ չեմ կարալ, պատասխանեց Անգինը սրտալի, ինչ վէր ուզում ես ասա, մը սհաթումը կիր կապեմ:

— Դէ վէնց կիր կ'կապես «Աստուած իմ, Հոկ-տեմբեր»:

— Այո՛ — Ժողովուրդ, ընե՛ — Տէնի՛մ — Աստուած իմ, հօ — լօ — իէն — հօ, արեւ — եւ — բէ — Տէն — իէն — արեւ — հօ, արեւ:

Գօրեցի Տէր-Սահակը Զատկին տնօրհնէք էր մանգալիս. նա ոտը դրեց ժողովրդականներին մէկի դռան շէմքը թէ չէ՝ հինգ տարեկան երեխան լալով, «խանչ-խանչ» գալով ընկաւ մօր գիրկը:

— Մեղաւորը դուք էք, որ երեխան ինձ տեսնելիս վախում է, նկատեց քահանան:

— Ինչու տէր-հայր, հարցրեց տան տէրը զարմանալով:

— Հենց քնպէս, մեղաւոր էք:

— Ախր ինչո՞ւմն է մեղաւորութիւնն է՛:

— Նրանումն է, որ տէրտէրին ձեր տան երեսը չէք ցոյց տալիս, բացատրեց քահանան. տէրտէրին պէտք է տարէնը ամենաքիչը մի տասն անգամ կանչէք տուն, որ երեխայքը տեսնեն, սովորեն, չվախեն. թէ չէ էգ օրհնութիւններին առաջին անգամ տեսնելիս ես էլ եմ վախում, ո՛ւր մնաց քօրփայ երեխան:

* *

Սղէքսադրապօլցի մի շատ տգեղ աղջկայ վրայ ամուսնացած փեսան մի ձիաբեռը «թխուածք» ու մրգեղէն ուղարկեց անորանց: Տանողը ամբողջ օրը ման եկաւ, բայց չգտաւ տունը: Վերջապէս երեկոյեան դէմ մի անցորդի հարցրեց.

— Այս փլան-փլանի տունը ո՞րն է, չգիտեմ:

— Էգոնց ազգից աներ շատ կան, բարեկամ որին կոսես:

— Էն որ մի աղջիկ մարդու տունն վաղարշապատ:

— Գիտցայ, գիտցայ, տմբացրեց գլուխը աղէքսանդրապօլցին. էգ էն աղջիկն է՞, որ օխտն օր մեշէն կաբեցինք, գէլաներ չկերան:

* * *
Շ. . . եցի Բ. . . նց Պետին ու Շ. . . նց Կեխօն

մի օր գնացին Խրամ գետը ձկան որս: Կեխօն մի խոր տեղ տեսնելով՝ ասաց Պետուն.

— Պետի ամի, պէտկա վէր էս գէօլումը շատ ծիւկըն ըլի. եկ մէջկիցս թոկով կապի ու կախարաւ. ես չուխես ու շալվարս ծկնով կ'լցնեմ ու թոկէն ծիք կ'տամ, տիւ էլ կ'հանես. բօլ ծիւկը կ'տանենք տուն:

Պետին համաձայնեց. նա Կեխօնին լիճը կախելուց յետոյ պարանի ծայրը ոտին ամրացրեց և ծանր ու բարակ թամբաքին հղաղեց, որ չիբուխը լցնի:

Կեխօն հենց ջուրը կախուեց թէ չէ՝ դէս ու դէն ընկաւ, ձեռներն ածեց, չուանը քաշեց, որ ազատուի, բայց Պետին քանի կացաւ չուանը երկարացրեց, որ ազատ ման գայ, կարծելով, թէ նա շտապ-շտապ ձկներ էր հաւաքում:

Խեղճ Կեխօն երկար չարչարուելուց ու բաւականին ջուր կուլ տալուց յետոյ հանգստացաւ:

— Հըւաքի, Կեխօ ջան, շատ հըւաքի—ձայն տուեց Պետին—բալքի քիչ էլ ծախենք, և լքցըրած չիբուխին վառած դաւ (աբեթ) գնելով նըս-

տեց գետափի կանաչի վրայ:

Այդ միջոցին մի սալապան սալով անցնում էր դէպի գիւղը:

— Եդ քնչ թոկ ա վեր կախել ես ճիւղն, ա՛ Պե՛տ, ձայն տուեց սալապանը հետաքրքրուելով:

— Գէտդէն գէօլը—մի ա, պատասխանեց Պետին, հանգած չիբուխի դաւն աւելացնելով:

— Վե՛նց թա «գետդէն գէօլումն ա», ա՛ տնաքանդ, ասաց սալապանը սալի գլխից ցած թռչելով—մի ա գիդում գէօլումը մարթ կայ:

— Կայ բե՛ս, ասաց Պետին փստացնելով. Կեխօն ա, մտել ա գէօլը, ծկներ ա հըւաքում:

Սալապանը առանց մի խօսք ասելու վրայ թռաւ թոկին ու դուրս քաշեց կիսախեղդ Կեխօյին: Պետին նոր իմացաւ արած յիմարութիւնը, և երկուսով վրայ թափուեցին, խեղդուողի ոտները վերթակելով հազիւ հազ ուշքի բերին և սալը գցեցին տարան տուն:

* *

Թուրք աւագակը նահանգական դատարանի ծառայողներից մէկին բռնեց ճանապարհին և գըլուխը կտրելով սպառնաց.

— Հա եօխա. . . գենա ճըզը-պըզը, դէ եազ Է*)...

* *

Գդ. խ. . . ին մէկը մի խորհուրդ էր ասել և խնդրել էր ոչ ոքի չասի, բայց միւս օրը

*) Հը, ոնց է. . . էլի կ'իզգրգես, դէ գրի է. . .

արդէն ամբողջ գիւղը գիտէր:

— Այ մարդ, ասաց խորհուրդ ասողը, ես քեզ չասեցի ոչովի բան չասէս:

— Բանը չիմացած նեղանալ չեն, ասաց Գ. . . ն արդարանալով,—մին ժամի տըռանն եմ ասել, մին հրսնքատանն եմ ասել, մին էլ կլնքատանը, էլ վէրդի եմ ասել, վեր եկել ես զահլա տանում:

* *

Ներկայացումից յետոյ վարսավիրը մօտեցաւ բեմի ետեւ կանգնած մի մեծ բեղաւոր մարդու և բեղերի երկու ծայրերից բռնելով ասաց.

— Շուտ արա տուր, շտապում եմ:

— Ո՛հ, քնչ ես անում տօ, ձայն տուեց բեղաւորը, խօս պոկեցիր:

— Դէ շուտ արա, պոկի ինձ տուր, չարացաւ վարսավիրը. դու էլ հանաքի ժամանակ ես գտե՛լ:

* *

Գիշերուայ ժամը 12-ին կինտօն բռնեց մի աղքատ աշակերտի և հրամայեց որ փողերը հանի:

— Աստուած վկայ փող չունեմ, ասաց աշակերտը:

Կինտօն չհաւատաց. իր ձեռով դրպանները ման եկաւ, տեսաւ չկայ՝ ձեռին թքեց ու մի լաւ ապտակեց ասելով.

— Շան վուրթի, չէիր կարում ջիբումդ փուղ պահէս:

* *

Կ. Պօլսում մի մարդ էշը կորցրեց, նա գնաց

Ներսէս եպիսկոպոս Վարժապետեանի մօտ, որը միւս օրը պատարագիչ էր և խնդրեց, որ ծանուցում անի այդ մասին, որովհետեւ շատ էր ման եկել, բայց չէր գտել:

— Շատ լաւ, որդի, ասաց սրբազանը, էգուց ես եկեղեցում ծանուցում կ'անեմ, դու մի պարան առ և եկ, որ էշդ կապես տանես:

Միւս օրը սրբազանը պատարագի կիսում յետ դարձաւ և քարոզի պատրաստուեց.

— Սիրելի ժողովուրդ — ասաց նա — արդեօք կը գտնուի ձեր մէջ մի այնպիսի հոգեպաշտ ոմն, որ իւր ընկերի, թշնամու վատը չուզենայ, որ իրեն նեղացնողին բարսւթիւն անի, որ հայրապետներից կարգուած բոլոր պահքերը պահի, որ աղքատաց իւր վերջին ունեցածից մասն հանի, որ ոգելից ըմպելիքներից հեռու կենայ, մի խօսքով այնպիսի մի անձն, որ ս, Աւետարանին կէտ առ կէտ հետեւող լինի:

— Ես եմ այդ, սրբազան, ասաց ժողովրդականներից մինը՝ վիզը թէքած, կռները խաչած առաջ գալով:

— Ո՛վ էր այն մարդը, որ երէկ էշ էր կորցրել, ձայն տուեց սրբազանը. թող առաջ գայ կապի ու տանի, էշը գտնուեցաւ:

* *

Մի սրախօս Պօլսեցի ճանապարհորդելով Հրաում՝ կամեցաւ պապին տեսնել և անձամբ խօ-

սակցել հետը, և դրա համար դիմեց ծանօթ կարդինալներից մէկին:

Կարդինալը յայտնեց այդ մասին պապին և ասաց, որ խելօք մարդ է, արժէ ընդունել:

Պօլսեցին ներկայացաւ սուրբ Հօրը և սկսան զրուցել:

Պապը տեսնելով, որ կարծածից աւելի խելօք մարդու է հանդիպել, ուզեց հարցնել նրանից իրեն ամենաթոււնդ զբաղեցնող խնդիրների մասին:

— Բացատրեցէք, խնդրեմ, այս երեք հարցերս, և դուք կ'ստանաք մի փառաւոր ընծայ՝ ի յիշատակ իմ և սուրբ երկրի:

— Հրամայեցէք, ասաց պօլսեցին, լսում եմ ամենայն ուշադրութեամբ:

— Ի՞նչ աբժէմ ես, հարցրեց պապը, այսպէս ինչեք երկինք ուրիշ արարածներէ և երրորդ՝ ես այս բապէի ի՞նչ եմ արարած:

— Սրբազան տէր, պատասխանեց պօլսեցին, աշխարհիս փրկիչը վաճառուեց 30 դահեկանով, և որովհետեւ դուք նրան հաւասարուել չէք կարող, ինչպէս որ ինքներդ ել կ'խոստովանուէք, ուրեմն շատ, շատ արժեքնաք 29 դահեկան:

Երկրորդ հարցիդ կ'պատասխանեմ. — այն տնկիւնում դրած ամենանուրբ մետաքսեալ թելի 3 կծիկները (փաթեթներ) եթէ կցենք միմեանց, և սրբազնութիւնդ թելի մի ծայրը բռնելով սխանաք

երկինք, ուղիղ կ'ըսականանայ մինչև Ձեր տեղ հասնելը, որ յետոյ կ'չափէք և կիմանաք: Իսկ ինչ վերաբերում է երրորդ հարցին—կասեմ՝ այժմ սըրբազնութիւնդ մտածում էք, թէ «այս անպիտանը ինչպէս ճիշտ իմացաւ»:

* *

Ղազարեցի քահանան Աւետարանէր կարդում. նա հասաւ այն տեղը, ուր գրած է՝ «պատեաց զնա պատառակալաւ» — կարդաց.

«. . . պատեաց զնա պատառակալաւ . . . պատեաց զնա պատառակալաւ . . . »:

* *

Կաթօլիկ քարոզիչը իւր փոքրաւորի հետ պտտվում էր գիւղէգիւղ և զմայլեցնում էր ջերմեռանդ գիւղացիներին իւր հոգեպարար քարոզներով:

Մի անգամ նա մի յետ ընկած գիւղում հիւր ընկաւ. տան տիկինը քարոզիչ հօր աչքին շատ «իւղոտ պատառ» երևաց. նա վճռեց անպատճառ կատարել իւր մտքի դրածը:

Այդ միևնույնը յղացել էր և փոքրաւորի մըտքում:

Տան տէրը, որ շատ լաւ էր ճանաչել այդ գաղի մարդորսներին, հենց որ ճրագը հանգաւ, նա մի ֆնտանոց կշռաքար մի պինդ թելով կապեց և բաւական երկար շառաւիղով սկսեց արագ արագ պըտրտցնել կնոջ անկողնի վրայ:

Քարոզիչը քիչ սպասելուց յետոյ ուղղուեց

կէտ նպատակին, բայց դեռ երկու քալ չէր արել, որ ֆնտանոցը վզակոթին թրեկաց:

«Ո՛հՖ.» . . սիրտը քամ զնալով շշնջաց քարոզիչը և յետ վազելով մտաւ տեղը:

Երբ որ մղկիտն անցաւ, նա նորից ուզեց փորձել, էլի նոյն օրին հասաւ և յոյսը կտրած մտաւ տեղն ու սկսեց ուռած տեղերը մերսել:

Այդ միջոցին փոքրաւորը արթնացաւ և վերկենալով՝ ուղղուեց դէպի քարոզիչ հօր ուխտատեղին. սակայն ֆնտանոցը իւր ուժը նրան էլ ցոյց տուեց. փոքրաւորը դունչ-մունչ, ատամ-մատամ ջարդուած՝ «վայ» կանչելով տեղն ու տեղը փլըշկուեց:

— Ջան, ջան, բալա ջան, ձայն տուեց քարոզիչը, էտ անտէր ֆնտանոցը դեռ պտտվում է. . .

* *

ԲՈԶԶՍԼՈՒԻ ԵՒ ԼՈՌՈՒԱՅ ԳԻՒՂԵՐԸ ԻՐԵՆՅ

ՀԱՄԱՆԻՇ ԲՆԱԽՈՐՈԹԻՒՆՆԵՐՈՎ.

Գինի խմող շուկաւերցիք, աւուկակեր ճոճկանեցիք,

Բաղարճ ուտող արճիշեցիք, կեռ-կեռ դիզան շնողնեցիք,

Փիչխուկներ¹⁾ հաղպատեցիք, պտըրաքի հաւրաթ ունակեցիք,

Հարսնասիրուռն սանահնեցիք, թուռդ մսակեր մաղանեցիք,

¹⁾ Մանրաձուկ ուտող:

Ղոնաղ զոան ²⁾ աքորվեցիք, փոսում թր⁷⁰² .
հազվըցիք,

Գոմշաբերան ամոջեցիք, քէօխվայ թակող ու-
ղունլարցիք,

Մատաղ ուտող արդուեցիք. ջրչոր էլած ալգե-
հատցիք,

Քարից թռած ծաթերեցիք, խլեզախորով զը-
չաղանցիք,

Ղուզղուն³⁾ ուտող կուրթանեցիք, սաթիւջամ
էլած ձորազեղցիք,

Գիլան խեղդող դսեղեցիք, մեղր ուտող քա-
րինջեցիք,

Տանձ ուտող մարցըցիք, տերև ուտող լորու-
տեցիք,

Փետաթակ արած շամուտեցիք, թուրքի սա-
նամէր աթանեցիք,

Թուրքի կնքաւոր ահնիգորցիք,

Զիզողանող-ատկաղ ըլող սադախուեցիք,

Կակալ ուտող-տենդախորով գիւլլուբաղցիք,

Հսրս ճղատող խժողունեցիք, պոպոք ուտող
խոխմեղեցիք,

Սոմի ուտող օփրէթեցիք, իշախառանչ ուտող
Չանաղչեցիք,

Թուրք սպանող աղքէօրփցիք, արաղ Էլգ⁴⁾
պրիվօլնեցիք,

²⁾ Հիւր սպանող:

³⁾ Բաղէի մեծ տեսակ:

Ուռքու կլեպ ուտող ուռուտեցիք, թարս բուն-
տովչի հայդարեբեցիք,

Բադի ծերտ ուտող ղարամամադցիք,

Թուրքի (թեջան⁴⁾) պատուող-տանող լեջանեցիք,

Մեղր ուտող, ծերպին թր⁷⁰² . ագարազցիք,

Զհասներ սիրող բերդըցիք,

Թանգ միկիտան, տրիցատկի տակը մոմ հա-
լող ջալալ-օղլեցիք,

Սալգաթ սիրող դեառգեառեցիք, բողկ ուտող
գիւլագարակցիք,

Տէրտէր կր⁷⁰² . հոբարձուեցիք, Պ. լոր ուտող
վարդաբլուրցիք,

Մեռել թուլ անող ղամշկուտեցիք, մեռել խա-
շող քոլագիրանցիք,

Ղաչաղ⁵⁾ պահող շահալուեցիք, քար-ղում
ուտող ալերեքսեցիք,

Արևի եփած, անձրևի թակած սըդըբէազդը-
ցիք:

⁴⁾ «Թեջան» ասում են ոչխարի ամբողջ մարմնը չինած այն
ամանին, որում աղաջուր արած պանիրը հաւաքում են մա-
թալ չինելու համար:

⁵⁾ Աւագակ:

„ԾԻԾԱՂԻ ՏՈՊՐԱԿ“

Բ. ՄԱՍՆ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԱՆԵԿԴՕՏՆԵՐ

Արիստիպոսը իւր խեղճ բարեկամի համար ողորմութիւն էր խնդրում սիրակուսացի բռնաւոր Դիոնէսիոսից, որի համար, մինչև անգամ ոտներն ընկաւ:

Երբ որ Արիստիպոսին նախատում էին այդ մասին, ասաց.

—Այդ արարքիս համար ինձ չպիտի նախատէք, այլ Դիոնէսիոսին, որի ականջները ոտների վրայ են:

* *

Մի ուրիշ անգամ էլ, երբ նա փող էր խընդրում նոյն Դիոնէսիոսից, վերջինս ասաց.

—Ես յիշում եմ, որ դու մի անգամ ասում էիր, թէ իմաստուն մարդիկ փողի կարօտութիւն չունեն:

—Դեռ փողը տուր, պատասխանեց Արիստիպոսը, ապա կ'պարզեմ այդ հարցը: Խնդիրը կատարուեց:

—Այժմ, ասաց փիլիսոփան փողերն առնելով, ես ոչ մի բանի կարօտութիւն չունեմ:

Փողոցում մէկը պատահելով ծանօթին, որը մի ինչ-որ ծածկած բան էր տանում, հարցրեց.

— Այդ թնչ է, որ ծածկած ես տանում:

— Հենց գիտութեամբ էլ ծածկած է, որ չիմանան:

* *

Մէկը նախատում էր Գիողիսէսին, որ նա փողոցում հաց է ուտում:

— Ես թնչ անեմ, պատասխանեց նա, որ հենց այդտեղ քաղցեցի:

* *

Մէկը հռոմայեցի ծաղրածու Գողբին խընդրեց, որ վերարկուն բան տայ:

— Եթէ չի անձրևում, ասաց Գողբին, թնչ հարկաւոր է քեզ, իսկ թէ անձրևում է, ուրեմն ինձ էլ կ'հարկաւորուի:

* *

Մի խօսակցութեան ժամանակ Գալբէլլան պնդում էր, որ իւր կինը 30 տարեկան է:

— Կասկած չկայ, վրայ բերեց Կիկերոնը, որովհետեւ 20 տարի է շարունակ նոյնն եմ լսում:

* *

Կիկերոնը տեսնելով իւր շատ կարճիկ փեսային, որը մի ահագին սուր էր կապել մէջքին, ձայն տուեց.

— Այս ո՞վ է իմ փեսին սրիցը կապել:

Հռոմայեցոց Օգոստոս կայսրը ոչ միայն սրախօս էր, այլ և ուրիշի սրախօսութեանցը համբերող:

Մի անգամ, երբ նա Հռոմումն էր, տեսաւ մի մարդ, որը շատ նման էր իրեն:

— Սիրելի պարոն, դարձաւ նրան կայսրը, մայրդ երբեք չե՞ եղել Հռոմում:

Ոչ, թագաւոր, պատասխանեց գաւառացին, մայրս չէ, բայց հայրս շատ անգամ է եղել:

* *

Գիողիսէսը իւր ճանապարհորդութեան ժամանակ տեսաւ մի փոքրիկ պարսպապատ քաղաք, որը շատ մեծ դռներ ունէր. նա աղաղակեց.

— Կողպեցեք դռները, թէ չէ քաղաքն իսկոյն դուրս կ'պրծնի:

* *

Բռնաւոր Դիոնէսիոսը իւր բանաստեղծութեանց քննադատ Փիլօքսէնին ուղարկեց պատժարան քարեր կոտրտելու: Մի քանի ժամանակից յետոյ կանչեց նրան պալատը և սկսեց մօտը կարդալ նոյն բանաստեղծութիւնները:

Փիլօքսէնը սկզբում ուշադրութեամբ լսում էր, բայց յետոյ յանկարծ վեր թռաւ և պատրաստուեց դուրս գնալու:

— Եդ ո՞ւր, հարցրեց բռնաւորը, սպասիր մինչև երջացվնեմ:

—Վերադառնում եմ պատժարան՝ քարեր կոտորտելու:

* *

—Դարձրէք վերարկուս, խնդրեմ, ասաց Դիոգինէսին իւր բարեկամը:

—Թէ որ ինձ ես նուիրել, պատասխանեց փիլիսոփան, ուրեմն իմ սեփականութիւնս է, իսկ թէ քան ես տուել—դեռ հարկաւոր է:

* *

Նոյն Դիոգինէսը տեսաւ, որ մի հասարակաց տան կնոջ զաւակ քարեր է նետում մի խումբ մարդկանց վրայ, ձայն տուեց.

—Ի՞նչ ես անում այ տղայ. եղաւ որ հօրդ գլուխին դիպցրի՞ր պատռեցի՞ր, յետո՞յ . . . :

* *

Օգոստոսը ամեն անգամ սլալատից դուրս գալիս պատահում էր մի յոյն բանաստեղծի, որը մօտ էր բերում՝ ի պատիւ կայսեր՝ իւր գրած ոտանաւորները:

Այդպէս արել էր մի քանի անգամ, բայց չէր հասել նպատակին, այսինքն, կայսրից ոչ մի պարգև չէր ստացել:

Մի անգամ էլ, երբ կայսրը տեսաւ բանաստեղծին, մի կտոր թղթի վրայ գրեց մի քանի տող յունարէն ոտանաւոր և տուեց նրան: Բանաստեղծը առաւ, կարդաց և սկսեց բարձրաձայն գովաբանել կայսեր. ապա մօտենալով՝ բաց արեց իւր փոքրիկ

քսակը, հանեց մանր փող և կայսեր տալով ասաց.

—Հաւատացէ՛ք, տէր, որ եթէ ունենայի, աւելի կտայի:

Բոլոր ներկայ եղողները սկսեցին ծիծաղել, և թագաւորը կանչելով իւր գանձապահին, հրամայեց տալ բանաստեղծին 1000 ուռըլի:

* *

—Խոստովանուիր, որդի և ասա այն ամենամեծ մեղքը, որ կեանքումդ գործել ես, ասաց խոստովանահայրը մի չարագործ մարդու:

— Եթ մեղքս ձեր հրամանով պիտի ասեմ, թէ Աստուծոյ:

Ի հարկէ Աստուած է հրամայում, որ ասէք, ասաց քահանան:

Շատ լաւ, տէր հայր, ուրեմն խնդրեմ մի քիչ հեռանաք, և երբ Աստուած հարցնի, ես կ'պատասխանեմ:

* *

Պուրլիոս օտտան իրեն երևելի օրէնսդէտի տեղ էր դնում, թէև այդ մասում բոլորովին բոբիկ էր: Մի անգամ Վիկերոնը կանչեց նրան դատարան՝ իբրեւ վկայ:

—Ինչ գիտես այս գործին վերաբերեալ, հարցրեց նրան:

Բոլորովին ոչինչ յայտնի չէ ինձ այդ գործից. ես ոչինչ չգիտեմ, պատասխանեց Պ. Կօտտան:

— Շատ կարելի է, վրայ բերեց Կիկերոնը, դու կարծում ես թէ օրէնքներէն է՞մ հարցնում:

Ադրիանոս կայսրը մի ալեոր մուրացկանի բոլորովին մերժեց, ոչինչ չտուեց:

Մի ուրիշ անգամ այդ միկենոյն մուրացկանը կրկնեց իւր խնդիրը, ողորմութիւն խնդրեց կայսրին, բայց այս անգամ մազերը ներկած էին սևաներկով:

— Ես արդէն մերժեցի քո հօրը, պատասխանեց նա՝ ճանաչելով ծեր մուրացկանին:

Սպան զինուորին սպառնաց.

«Ես կ'իսփեմ քո գլխին և յետոյ կ'բողոքեմ, որ քո գլուխը այնքան պինդ ու կոպիտ էր, որ ձեռքս ցաւացրեց»:

Մի պնդերես մարդ հարցրեց Կրասիոսին.

— Սրդեօք չե՞մ անհանգստացնում Զեզ՝ շարունակ առաւօտները այցելելով:

— Ամենևին ոչ, պատասխանեց Կրասիոսը:

— Ուրեմն, շարունակեց առաջինը, կ'հրամայէ՞ք, որ իմ եկած ժամանակ արթնացնեն Զեզ:

— Բայց կարծեմ դուք ինձ չէիք ուղղում անհանգստացնել:

Մի շատ թոյլ փաստաբանի Գրանիոսը խորհուրդ տուեց, որ նախ քան պաշտպանողական ճառի

կարդալը՝ զնայ տուն և ջրախառն սառցրած մեղր խմի:

— Բայց այդ դէպքում կարող եմ ձայնս կորցնել, ասաց փաստաբանը վախեցած:

— Սւելի լաւ է ձայնդ կորցնես, պատասխանեց Գրանիոսը, քան թէ խնամքիդ յանձնուած մարդուն:

Յուլիոս Կէսարի յաղթանակներից մինի տօնախմբութեան ժամանակ առջևից պատուաւոր կերպով տանում էին փղոսկրից շինած այն բոլոր քաղաքների մօդելները, որոնք խլուած էին մեծ աշխարհակալի ձեռքով:

Մի քանի ժամանա ից յետոյ Փաբիոս Մաքսիմիոսի յաղթանակին ժողովրդին ցոյց տուին նրա վերցրած քաղաքների մօդելները՝ բայց փայտից շինած:

Այդ ժամանակ Խրիզիպպոսը նկատեց.

«Փաբեան մօդելները ոչ այլ ինչ են, եթէ ոչ Յուլեան մօդելների պահարանները»:

Երբ Սկիպիոն կրտսերը օգնական ընտրուեց Յենզօր Աֆրիկանին, նրա ախոյեան Ապպիոս Կլաւդիոսը նկատեց, որ բոլոր քաղաքացիներին ինքը ճանաչում է լականէ յանուանէ, այն ինչ՝ Սկիպիոնը ոչ ոքի չէ ճանաչում:

— Շատ ճիշտ է, պատասխանեց Սկիպիոնը, ես

միշտ աշխատել եմ որ շատերն ինձ ճանաչեն, իսկ դուք—շատերին:

* *

Մի հռոմայեցու նախատում էին, որ բաժանուհի է իւր անմեղ, գեղեցիկ և հարուստ կնոջից:

—Ահա գեղեցիկ և բոլորովին նոր կօշիկ, պատասխանեց նա, բայց բացի ինձանից ոչ ոք չգիտէ, թէ ոտիս ինչ տեղին է սղմում:

* *

Բիոնը ասում է. «Այն մարդիկ, որոնք փիլիսոփայութիւնը ուսանում են և թողնում արվում են առօրեայ հոգսերին, նրանք նման են Պենելոպայի այն փեսացուներին, որոնք նրանից մերժուելով հետևեցին նրա աղախիններին»:

* *

Երբ Իստիմիսեան խաղերում մենամարտողներից մինը սաստիկ հարուած ստացաւ հակառակորդից, հանդիսականների մէջ մեծ աղմուկ բարձրացաւ, այդ ժամանակ Էսքիլոսն ասաց.

Ահա ձեզ սովորութեան ոյժը. —հանդիսականները աղաղակում են, իսկ վիրաւորուածը լռում է:

* *

Մի երիտասարդ կնոջ, որի ծննդական ցաւը բռնել էր, խորհուրդ տուին որ տեղաշարժում պառկի:

—Ի՞նչպէս կարող է տեղաշարժ աղատել ինձ այս ցաւից, պատասխանեց նա լալով, քանի որ պատճառը նոյն ինքն տեղաշարժն է:

Սպարտայում զինուորադրութեան ժամանակ նկատեցին, որ կանչուածներից Անդրիօլիդ անունով մէկը կաղ է՝ չընդունեցին:

Ես, ասաց կաղը, կարծում էի թէ ձեզ զինուորներ հարկաւոր են կռուելու համար. ինչպէս երեւում է, դուք ընտրում էք նրանց, որոնք կարող են լաւ փախչել:

* *

Սպարտայի թագաւոր Ագիսը, իւր տերութեան կողմից, իբրև դեսպան, մէնմէնակ առանց ուղեկիցների գնաց Փիլիպպոսի մօտ:

—Այդ ի՞նչպէս է, ասաց վերջինս զարմացած, մի՞թէ մէնակ էք:

—Ի հարկէ, պատասխանեց Ագիսը, մի՞թէ մէնակ Ձեզ չպիտի դիմէի:

* *

Մի սպարտացի—որին խնջոյքի կառավարը ցոյց տուեց սեղանի ամենավերջին տեղը—ասաց.

—Գեղեցիկ հնարագիտութիւն... ամենախելօք միջոցն է, որ այս տեղն էլ պատուաւոր դարձուի:

* *

Դիոգինէսին հարցրին.

—Ինչո՞ւ ոսկին դեղին գոյն ունի:

—Որովհետեւ հազարաւոր ձեռներ կան մէկնաձեռնան յափշտակելու:

* *

Մէկը Սպարտայում պարծենում էր, որ ինքը

երկար ժամանակ կարող է հատ ոտի վրայ կանգնած մնալ:

Մի անգամ նա ցոյց տուեց իւր այդ հմտութիւնը, և դարձաւ սպարտացիներից մէկին:

— Դու չե՞ս կարող այսպէս անել:

— Ոչ, պատասխանեց նա, բայց բոլոր հաւերը կարողանում են:

* *

Թաղէս փիլիսոփան ասում էր, որ կեանքի և մահուան մէջ ոչինչ զանազանութիւն չկայ:

— Հապա ինչո՞ւ սպանութեամբ կեանքիդ վերջ չես դնում, հարցրին նրան:

— Հենց նրա համար, որ ապրել թէ մեռնել միևնոյն է ինձ համար:

* *

Արիստիպոսին ծաղրում էր մէկը, որ նա մի լորի (թռչուն) տուել էր 50 դրախմ:

— Իսկ դու, ասաց Արիստիպոսը, չէիր գնիլ, եթէ արժենար մի օբօլ (փող է):

— Ի հարկէ կ'գնէի:

— Ուրեմն այդպէս, վրայ բերեց նա — ինձ համար 50 դրախմը միևնոյն է, ինչ որ քեզ համար մի օբօլը:

* *

Սիրակուսի բռնակալ Դիոնէսիոսը բժշկութեան աստուծոյ ոսկեալ մօրուսը պոկելով՝ ասաց.

— Քեզ բոլորովին չի վայելում մօրուս ունենալը:

քանի որ հայրդ՝ Ապոլլոնը աղուամազ էլ չունի:

* *

Պուլիկրատոսի սպարտացիներին յայտնած պատերազմի առթիւ Սամոսեան ղեսպանները մի շատ երկար ճառ ասացին սպարտացոյց Կլէօմէնում թագաւորի առաջ:

Կլէօմէնումը պատասխանեց.

— Ես արդէն մոռացայ ձեր ճառի սկիզբը, հետեւապէս և չեմ կարող հասկանալ մէջ տեղը. իսկ ինչ վերաբերում է վերջին՝ բոլորովին համաձայն չեմ:

* *

Պասսիոսի կին Դոմեցեան զանգատվում էր Իւնիոս Բասսոսի վրայ, որ նա իւր ժլատութիւնը երևան է հանել ասելով, թէ ինքը (Դոմեցեան) սովորութիւն ունի հին կօշիկներ ծախելու:

— Ոչ, պատասխանեց Բասսոսը, ես այդպէս չեմ ասել. ես ասել եմ, որ դու «սփառաբան» ես: Եւ ինչի համար:

* *

Վեսպասեանի որդի Տիտոսը ծաղրում էր հօրը, որ միգելու վրայ հարկ էր դրել:

Հայրը մի քանի օրից յետոյ մի դրամ մօտեցրեց որդու քթին և հարցրեց.

— Արդեօք վատ հոտ չե՞ս զգում այս փողից:

— Ոչ, հայր, պատասխանեց որդին:

— Զարմանալի բան, ասաց Հայրը, և այս փողը մէջի Հարկից է ստացուած:

* *

Նոյն Վեսպասեանին յայտնեցին, որ միտք ունին կենդանութեան ժամանակ իւր արձանը կանգնել, որը բաւական մեծ փող պիտի նստի:

Նա բանալով իւր ձեռքը ասաց.

— Ահա բոլորովին պատրաստ պատուանդան ձեր արձանի Համար:

* *

Մետտէլ Նէպօտը, որը մի թեթևասօլիկ մարդ էր, իւր ուսուցիչ Ֆիլագնէսին մեծ ծախսով թաղեց և արձան կանգնեց, որը ներկայացնում էր քարեայ ագռաւ: Կիկերոնը այդ տեսնելով՝ ասաց.

— Շատ սրամիտ է արածդ, որովհետեւ նա քեզ սովորեցրել է աւելի լիւր՝ քան զբաղուել դատարանական գործերով:

* *

Պոմպէյոսի չարաչար ջարդուելուց յետոյ Նոնիոսը սիրտ էր տալիս Կիկերոնին.

— Զպէտքէ բոլորովին յուսահատուիլ, որովհետեւ բանակում դեռ կան եօթն արծիւներ:

— Այո, չէի յուսահատուիլ, պատասխանեց Կիկերոնը, եթէ ագռաւների դէմ լինէինք պատերազմելիս:

* *

Բրուտոսը Ֆիլիպեան կղզիներում կորիզուե-

ջարդուելուց յետոյ վճռեց ինքնասպանութեամբ վերջ տալ կեանքին:

Այդ ժամանակ լսեց, որ բարեկամներն աղաղակում էին — «փախչէ՛ք, փախչէ՛ք . . . »

— Այո, փախչէ՛ք, ասաց նա դառնացած, բայց ոչ թէ ոտներով, այլ յեռերով:

* *

— Սերժանտ, սերժանտ, ես մի գերի եմ բռնել, լսուեց պատերազմի ժամանակ զինուորի ձայնը:

— Լաւ, բեր այստեղ, պատասխանեց սերժանտը:

— Ես չեմ կարող նրան ստիպել որ գայ, կըրկնեց ձայնը:

— Ուրեմն դ՛ու եկ:

— Բայց նա ինձ չի թողնում, սերժանտ . . . աղիւղորմ ձայնով գոռաց զինուորը:

* *

Հրէուհին պսակելու ժամանակ լաց էր լինում. մայրը մօտեցաւ մխիթարելու.

— Ի՞նչ ես լաց լինում, յիմար. չե՞ որ ես էլ եմ մարդու գնացել, բայց այդպէս լաց չեմ եղել:

— Ի հարկէ այդպէս կասես, պատասխանեց աղջիկն արտասուախառն, քեզ հայրիկին են տուել, իսկ ի՞նձ . . . մի օտար մարդու:

* *

Մի գեղեցիկ աղջիկ խօսում էր կայսերական տան ծաղրածու Կուլկովսկու հետ, և ի միջի այլոց ծիծաղեց բազմակնութեան վրայ:

— Ի հարկէ, ուրախութեամբ կ'բաւականանայի մէկով, պատասխանեց ծաղրածուն, եթէ բոլոր կանայք Ձեզ պէս լինէին:

* *

Փրանսիացի երևելի Վիլֆէն դերասանը մի անգամ բեմի վրայ շատ ցածր էր խօսում:

— «Բարձր» ձայն տուեց ժողովրդականներէից մինը:

— Իսկ դուք ցածր, պատասխանեց դերասանը հպարտութեամբ:

* *

Բրէնվելի ճակատամարտում անգլիական սպաներից մինը յարձակուեց Փրանսիայի կայսր Լիւդովիկոս հաստի վրայ, և ձիու սանձը բռնելով աղաղակեց.

— Կայսրը գիրի է:

Այդ իսկ միջոցին Լիւդովիկոսը սրով գետին տապալեց սպային՝ ասելով.

— Ձենդ պահիր, թշուառական. միթէ չգիտես, որ թագաւորներին չեն գերում մինչև իսկ շախմատումն անգամ:

* *

Մարեա Թերեզան պատուիրեց իշխան Կառտինցին — «ամենեւին չպարգևատրել և չբարձրացնել այն աստիճանաւորներին, որոնք կանայք շատ կ'սիրեն»:

— Ձերդ Մեծութիւն, պատասխանեց իշխանը, եթէ Ձեր լուսահոգի ծնողն էլ այդպէս մտածած լինէր, այժմ ես դեռ ենթասպայ կ'լինէի:

Անգլիացի դիտնական Գրանտը դէպի Իտալիա ճանապարհորդելիս անցաւ Փերնէյ քաղաքով և այցելելով Վօլտերին՝ հարցրեց.

— Ի՞նչ կ'կամենաք, որ Հռոմից բերեմ ձեզ համար:

— Բերէք ինձ համար մեծ ինկուիզաթօրի ակունջները:

Երբ որ ճանապարհորդը հասաւ Հռոմ և Գանգանելի պապի հետ խօսակցում էր, յայտնեց Փերնէյեան փրկսոփայի ցանկութիւնը:

— Ասացէք իմ կողմից ալ Վօլտերին, առաց սուրբ հայրը, որ մեծ ինկուիզաթօրը ոչ ականջներ ունի և ոչ աչքեր:

* *

Իենիս Դաւիդովը մի ճակատամարտում յայտնեց իշխան Բազրատիօնին.

— Դիտաւոր հրամանատարը պատուիրում է, որ քիչ յետ գնանք և կազմ ու պատրաստ կենանք, որովհետև թշնամին «քթներին տակն է»:

— Եթէ քո քթի տակն է, ասաց իշխանը, ուրեմն պետք է շուտ պատրաստութիւն տեսնել, իսկ թէ իմ*) — կ'ըշտանակի դեռ կարող եմք նախաճաշել և ապա գործի կենալ:

* *

Լիւդովիկոս XIV-ի թագաւորութեան վերջին տարիներում Վերսալի մէջ Սբբատ Բովէն մի քա-

*) Իշխանը շատ նշանաւոր քիթ ունէր:

ըղզով շատ թունդ պախարակեց մի քանի ծերերի անվայել վարք ու բարքը:

Թաղաւորը, որ ներկայ էր, չուզենալով իւր վրայ ընդունել, դարձաւ Ռիշելիօյին.

— Կարծեմ այս քարոզիչը բաւական մեծ քանակութեամբ քարեր նետեց ձեր պարտէզը:

— Այո, Զերդ Մեծութիւն, պատասխանեց Ռիշելիօն, — և նետեց այնպիսի մի ուժով, որ այդ քարերը իմ պարտէզին դիպչելով յետքստեմ վերստին պարտէզը:

* *

Վարսաւիրը խանութի ճակատին, իբրեւ յայտագիր (ВЫВѢСКА) նկարել էր տուել Աբիսողոմին՝ մաղերով ծառից կախուած, որի տակ մեծ տառերով գրած էր —

«Եթէ Աբիսողոմի գլխին իմ ձեռակերտ պարիկներէց լինէր, նրան այդ քամբադղութիւնը չէր պատահիլ»:

* *

Կինը արթնանալով դարձաւ ամուսնուն.

— Սիրելիս, ես երազումս տեսնում էի, որպէս թէ դու ինձ համար առնում էիր մի ոսկեայ ժամացոյց իւր ոսկեայ շղթայով:

Մթթէ . . . բաս էլի քնիր, ասաց ամուսինը, կարելի է տեսնես և այն փողի տեղը, որով ասածներդ առնելու եմ:

ՌԻՍՈՒՑԻԶԸ.— Ինչո՞ւ գրել էք «Աւրապա» և ոչ «Եւրոպա»:

ԱՇԱԿԵՐՏԸ.— Որովհետեւ բոլոր աշխարհամասերը սկսվում են «Ա» տառով, էլ ինչո՞ւ մեր երկրին նեղացնենք մի չնչին տառ փոխելով:

* *

— Այ կին, ախր քեզ ո՞վ ասաց, որ Մոսկուայից մօրդ էլ հետդ բերես, ասաց մարդը կնոջը:

— Հապա թնչ պիտի անէի, քանի որ դու հեռագրել էիր, պատասխանեց կինը զարմացած:

— Ե՞ս . . .

— Ի հարկէ. ահա հեռագիրը — „Не забудь драгоцѣнной тещи“.

— Տէր իմ Աստուած, վեր քաշուեց մարդը, հեռագիրս բոլորովին յեղաշրջել են. ես հեռագրել եմ «Не забудь драгоцѣнные вещи».

* *

— Դարվինը ապացուցանում է, որ դուք առաջացել էք կապիկներից, ասաց երկու խօսակիցներից մէկը միմեան:

— Ե՞ս . . . ամենևին, շատ պոչաւոր սուտ է այդ. հայրս պետական խորհրդական է, և ես կ'հաստատեմ . . . :

* *

Մի փիլիսոփայ հաւատացնում է. «առաջին անգամ խաբուողն ու մեղաց տակ ընկողը կին էր, որովհետեւ արգելուած պտուղն «փէլ» էր.

իսկ եթէ խօսէր — լինէր — անպատճառ խաբուողը մարդը կ'լինէր»:

* *

— Ուստայ, կարած կօշիկներդ անողորմ կերպով սղմում են ոտիս. ի սէր Աստուծոյ, մի ճար արէք, ասաց զնողը:

— Ես հենց գիտութեամբ եմ այդպէս արել, որ շուտ-շուտ միտներդ ընկնեմ, ասաց ուստայն:

— Բայց ինչո՞ւ, զարմացաւ նա:

— Որպէսզի մնացած փողը շատ չուշացնէք:

* *

Գիողինէսը մի մարդ տեսաւ, որը հրացանով նշանի էր խփում, բայց ոչ մի անգամ չէր լաջողեցնում տեղը գիպցնել:

Նա ժողովրդի միջից ելաւ և զնաց կանգնեց ուղիղ նշանի տեղը:

— Ինչո՞ւ ես այդտեղ կանգնում, հարցրին տեսնողները վախեցած:

— Ձեզ էլ խորհուրդ կ'ապի այտեղ կանգնել, որովհետեւ ինչպէս նկատում եմ պարոնի արձակելուց, այտեղ աւելի ապահով է, քան թէ այդտեղ, ուր դուք էք կանգնած:

* *

Սիբստոս V-ը մինչև իւր պապ ընտրուելը Հռոմի փողոցներում ման էր գալիս կեռացած. հենց որ պապ ընտրեցին, նա սկսեց ուղիղ մանգալ:

Երբ որ պատճառը հարցրին, նա պատասխանեց:

— Կարգինալ ժամանակս կեռացած էի մանգալիս արքայութեան բանալին գտնելու համար. իսկ այժմ որ արդէն ձեռքիս է, ինձ հաբկաւոր է միայն երկնքին նայել:

* *

Լիւդովիկոս XV-ը հիւանդութեան ժամանակ չէր ընդունում բժշկի տուած ղեղերը:

— Ես քեզ հրամայում եմ, որ խմես, ասաց բժիշկը:

Թագաւորը նայեց նրան զարմացմամբ:

— Այո տէր, շարունակեց բժիշկը, եթէ ես այսօր չհրամայեմ Ձեզ, վաղը չէք կարող Դուք ինձ հրամայել:

* *

Գրաֆ Եսսէքսը մի հոգևորականի սպառնաց.

— Ես ձեզ կ'ձգեմ Տեմզա գետը:

— Ձգեցէք, պատասխանեց հոգևորականը հանդարտութեամբ, ջրային ճանապարհը դէպի երկինք աւելի կարճ է, քան օդայինն ու ցամաքայինը:

* *

Մի քանի հոգի խօսում էին մի նոր գրքի առթիւ ասելով՝ որ շատ նոր և հետաքրքիր տեղեկութիւններ է պարունակում:

Լեսսինգը, որ լսում էր, ասաց.

— Ինչ որ այդ գրքում հետաքրքիր է — նոր չէ, իսկ ինչ որ նոր է — հետաքրքիր չէ:

Մի շատ տգեղ մարդ նկարել տուեց իւր պատկերն ամբողջ հասակով, և երբ պատկերը բոլորովին պատրաստ էր, չկամեցաւ խոստացած գինը տալ:

— Ինչ համար միւսնոյն է, ասաց նկարիչը, պատկերը կ'մնայ ինչ մօտ:

— Ինչնէրիդ է հարկաւոր:

— Այդ մասին միամիտ եղէք. ես ձեր պատկերի ետևում մի պոչ էլ կ'նկարեմ և կ'ծախեմ հագնուած կապիկի տեղ:

* *

Լակիդեմացի երիտասարդը մօր մօտ գանգատվում էր, որ իւր սուրը շատ կարճ է:

— Մօտեցիր աւելի թշնամուն, պատասխանեց մայրը, և դու կ'տեսնես, որ ասածիդ չափ կարճ չէ:

* *

Բժշկի մէկը սովորութիւն ունէր գրպանը պատրաստի դեղատոմսերով լցնել, և պատահող հիւանդը պէտք է հանէր գրպանից՝ ինչ բովանդակութեամբ էլ լինէր այն: Բժշկի կարծիքով այդպէս վիճակահանութեամբ վերցրած դեղատոմսը ամենալարմարն էր բոլորի համար, ինչ հիւանդութիւն էլ ունենային:

Մի անգամ մի հիւանդ կին, որ տանջվում էր բզուռուցով, եկաւ վերոյիշեալ բժշկի մօտ, որն իսկոյն պատուիրեց իւր գրպանից մի դեղատոմս հանի՝ որն էլ կուգի:

Կինը հանեց դեղատոմսը, որում գրած էր.

«Հօրն» (КЛИСТИРЪ) պիտի ընդհանայ. այս իմանալով՝ կինը այնպէս բարձրաձայն ծիծաղեց, որ բզի ուռոյցը բլեց, որից էլ առողջացաւ:

* *

Ականաւոր երգիծաբան Սաֆիրը միւսնոյնցիւների բնաւորութիւնը այսպէս է նկարագրում.

«Միւսնոյնցին առաւօտեան արթնանալիս գարեջրի տակառ է, իսկ երեկոյեան քնելիս՝ տակառ է գարեջրով»:

* *

Ֆրանցիսկոս I-ն կայսրը Լեոն X-ը պապին այցելած ժամանակ զարմացաւ նրա պճնասիրութեան վրայ և ասաց.

— Աստուածաշնչի ասելով հոգևոր հովիւները ապրում էին խեղճ և պարզ:

— Ճշմարիտ է, պատասխանեց պապը, բայց այդ այն ժամանակն էր, երբ թագաւորները ոչխար էին արածեցնում:

* *

Պիլիսոսնը մի շատ տգեղ մարդ էր:

Մի անգամ փողոցում պատահեց մի նկարչի, որը իւր առանձնասենեակը հրաւիրեց և դէմքի ընդհանուր գծերը նշանակելուց յետոյ շատ շնորհակալ եղաւ:

— Բայց այդ ինչ պատիւ էր, որ ինչ արիք, հարցրեց Պիլիսոսնը զարմացած:

— Եկեղեցու համար սատանայի պատկեր էին

պատուիրել, պատասխանեց նկարիչը, երկար ժամանակ ուրոնելուց յետոյ Զեզ գտալ ամենայարմար օրինակը. ուրիշ ոչինչ վատ բան չկարծէք, խընդրեմ:

* *

Մի շատ անշնորք վիպասան պատահելով մի երգիծաբանական թերթի խմբագրի, որը ժամանակակից բոլոր յայտնի գրական գործիչների պատկերները դուրս էր բերել իւր թերթում՝ ասաց.

— Իսկ ինչ մոռացել էք, պարոն խմբագիր, և ես շատ եմ նեղացած Զեզ վրայ:

— Շատ իզուր է ձեր նեղութիւնը, որովհետեւ դուք ևս կաք նրանց մէջ, պատասխանեց խմբագիրը:

— Բայց որտեղ է. ես ուշադրութեամբ նայել եմ բոլոր պատկերներին, որոնք վերջանում են ամպի փոնով:

— Ահա հենց այնտեղ, վրայ բերեց խմբագիրը, հենց այն ամպերի ետեւում որոնեցէք ձեզ:

* *

Ծովային աստիճանաւորի ծառան ամանները լուանալիս ոսկէ գդալը անզգուշութեամբ ձգեց ծովը և դարձաւ տիրոջը.

— Զերդ բարեծննդութիւն, արդեօք ճշմարիտ է, որ երբ յայտնի է առարկայի տեղը, նա կոբած չէ:

— Ի հարկէ, պատասխանեց աստիճանաւորը:

— Ես էլ հենց այդպէս եմ մտածում, ասաց ծառան. ինչ էլ կուզի լինի, ես ամենեւին կորած չեմ

համարում Զեր ոսկեայ գդալը, որը ծովումն է, այդ հաստատ գիտեմ:

Այս սրախօսութեան համար տէրը ներեց ծառային:

* *

Նուիրակը եկեղեցու շինութեան համար փող էր հաւաքում. նա բարձրացաւ մի հարուստ մարդու տուն:

Ծառան այդ մասին յայտնեց տիրոջը, որը բարկութեամբ մտաւ տուն, և հենց այդ միջոցին ետեւից «կրնգակոյ» ներս մտաւ նուիրակը:

Տան տէրը կոպտութեամբ մերժեց և մտաւ դահլիճը. նուիրակը հետեց նրան. նա այդտեղից մտաւ սեղանատուն, այնտեղից էլ իւր առանձնասենեակը և տեսնելով որ շարունակ հետևում է իրեն, սաստիկ կատաղած դարձաւ և մի լաւ ապտակ հասցրեց նուիրակին:

— Այդ ինչ, վրայ բերեց նուիրակը բոլորովին սառնութեամբ, իսկ եկեղեցու շինութեանը որքան էք մտադիր տալու:

Հարուստը զղջաց իւր արածի վրայ և տուեց 1000 դուրլի:

* *

Լօնդոնում նոր տարու երկրորդ օրը տպուած յայտարարութիւններ կայցրին, որոնցով յայտնում էին՝ «այս-ինչ փողոցում, այս-ինչ Ճեռում երեկոյեան ժամը 7-ից մինչև 10-ը կարելի է տես-

Նեւ մի կենդանի մարդ, որն այքան աչքեր ունի, որքան տարուայ մէջ օրեր կան:

Որոշուած ժամին այնքան հետաքրքիրներ հաւաքուեցին, որ հազիւ տեղաւորուեցին մի բաւական ընդարձակ դահլիճում:

Վարագոյրը բարձրացաւ և թնչ տեսան.—մի առօրեական մարդ՝ երկու աչքերով:

Հանդիսականները սաստիկ նեղացան և պահանջեցին, որ անպատճառ ցոյց տրուի յայտարարութեան մէջ յիշուած հազուագիւտ մարդը:

Օտարականը մօտեցաւ բազմութեանը և ասաց.

— Պատուելի հանդիսականք, ինչ որ խոստացել եմ յայտարարութեամբ, նոյնը կատարում եմ իսկութեամբ. դուք ցանկանում էիք տեսնել այն մարդուն, որը տարուայ օրերի չափ աչքեր ունի. իսկոյն—

— Այսօր Յունուարի 2-ն է, կ'նշանակի տարին այսօր երկու օր ունի.— ես էլ, լաւ նայեցէք, խնդրեմ, ոչ աւել, ոչ պակաս 2 աչք ունիմ: Վարագոյրն իջաւ:

* *

Նապոլէօնը ընթերցարանի բարձր տեղից ուզում էր մի գիրք վերցնել, բայց որովհետեւ չհասաւ, հրամայեց մի թոռ բերել:

— Ես կ'վերցնեմ, Զերդ Մեծութիւն, ասաց բարձրահասակ ընթերցարանապետը, ես Զեզանից բարձր եմ:

— Երևի ուզում էիք ասել Երկայն Էմ, նկատեց կայսրը:

* *

Ճաշի ժամանակ արգանակ (մսաջուր) մօտ բերին, որի մէջ մի քանի հատ մազ երևաց:

— Եթէ ես լինէի ձեր տեղը, նկատեց հիւրերից մինը տանտիկնոջ, կ'պատուիրէի որ մազը առանձին մատուցարանով մօտ բերէին, և այն ժամանակ ով կ'ցանկանար, կ'վերցնէր:

* *

Իսպանացի գիտնական Գրանտը կարդում էր «Բնութեան Գաղտնիք» անունով մի գիրք, ուր ի միջի այլոց կարդաց և «... Լայնափորս—մարդիկ աստիճանաբար լինում են յիմարներ... »:

Նա մօմը ձեռին մօտեցաւ հայելուն, որ նայի թէ իրենը խօ լայն չէ, — անզգուշութեամբ խանձեց մօրուսի կէսը և հանդարտութեամբ մօմը սեղանի վրայ դնելով, այն կտորին մօտ գրքի լուսանցքում աւելացրեց— «Իմարս—մարդ է»:

* *

Մի երիտասարդ հիանում էր Հենրիտա Չօնտա անունով մի գեղեցկուհու վրայ, որը նոր էր մտել դերասանական խումբը:

— Շատ էլ գեղեցիկ չի կարելի ասել, նկատեց լսողներից մինը, որովհետեւ նրա մի աչքը փոքր է միւսից:

— Կնշանակի դուք նրան չէք տեսել, վրայ բե-

րեց Չօնտայի երկրպագուն, ընդհակառակը, նա
 ինչպէս թէ է ինչ:

* *

Կաղերի ժամանակ պճնասէր օրիորդը դարձաւ
 պարբերներ ուսանողին՝

— Բայց դուք ձեռնոցներ չունիք:

— Այդ ոչինչ, պատասխանեց ուսանողը, պարե-
 լուց յետոյ ձեռներս պիտի լուանամ:

* *

Խաղամուկին 10 տարուայ աքսոր օրոշեցին.
 վճիռը լսելուց յետոյ նա դարձաւ դատաւորներին.

— Պարոնայք, «կօնտրա» խաղանք, — կամ կրկնա-
 պատիկ, կամ ոչինչ:

* *

Որդին տեսնելով որ հայրը ամեն օր մօրը ծե-
 ծում է. նա ընտանեկան անհրաժեշտ կարգերի
 թուին դասեց:

Մի անգամ հայրը բաւական ուշ վերադար-
 ձաւ տուն ու հարցրեց.

— Ինչ որ հարկաւոր է բոլորը կատարուած է:

— Ոչ, պատասխանեց որդին, մայրիկիս գեռ չես
 ծեծել:

* *

Զինուորի ոտը պատերազմում թնդանօթի
 ռումբը տարաւ. նրան ուղարկեցին հիւանդանոց:
 Այդ ժամանակ նա եղբօրից նամակ ստացաւ, որում

յայտնում էր իրենց հօր մահը: Զինուորը եղբօրը
 պատասխանեց.

Սիրելի եղբայր.

«Շնորհակալ եմ հօրս մահուան մասին յայտ-
 նելուդ համար: Ի՞նչ անենք, նման օրինակներն
 անխուսափելի են: Ես, փառք Աստուծոյ, առողջ
 եմ, միայն այժմ հիւանդանոցնումն եմ, որով-
 հետեւ պատերազմում թնդանօթի ռումբը ոտս
 տարաւ. լաւ է որ միւսն էլ տեղը մնաց, որով
 գրկում եմ քեզ».

Քո եղբայր.

* *

Մի կին այցելութեան գնաց ընկերուհուն,
 բայց նա տանը չէր: Այցելողը նկատեց որ կարա-
 սիքը շատ թոզոտ է, մատով սեղանի և այլ
 կարասեաց վրայ գրեց «խոզ» և դուրս ելաւ:

Միւս օրը կրկին այցելեց. այս անգամ տանն
 էր ընկերուհին:

— Ես երէկ էլ եկայ, բայց քեզ տանը չգտայ,
 ասաց այցելողը:

— Իսկօքն իմացայ, վրայ բերեց տան տիրու-
 հին, որ անպատճառ դու կլինիս «խոզ» կա-
 րասիքներիս վրայ:

* *

Չաշելուց յետոյ տան տէրը առաջարկեց ծխել
 իւր աջ կողմը նստողին:

— Շնորհակալ եմ, ես չեմ ծխում, ասաց նա: Նա
 դարձաւ ձախ կողմը նստողին:

— Շնորհակալ եմ, ես էլ չեմ ծխում:

Այդ ժամանակ կինը մօտեցաւ և ամուսնու
ականջին փսփսաց.

— Առաջարկիր ալ. Գ — ին էլ:

— Ի՞նչ ես ասում, ասաց մարդը վախենալով,
նա խօ կ'ծխի:

* *

Կլաւդիոսի գործի համար նշանակուած դատա-
ւորները սինօդից պահապաններ խնդրեցին:

Ձնայելով, որ Կլաւդիոսի մեղքը ակնյայտնի էր,
այնուամենայնիւ դատարանը նրան արդարացրեց:

Կատօլլոսը, որը սինօդի անդամներից մինն էր,
պատահելով դատաւորներից մէկին, ասաց.

— Ինչո՞ւ մեզանից պահապաններ էիք խնդրել.
վախում էիք Կլաւդիոսի տուած փողերը փախցը-
նեն հա՞. . . :

* *

Կրասսոսը պաշտպանում էր Ակուլէօ նի գործը.
սրան ընդդիմախօս էր նշանակուած անճոռնի Ե-
լիոս Լամիրոս փաստաբանը:

Դատարանում Կրասսոսը անվայել խօսքով
դարձաւ իւր հակառակորդին.

— Լսենք գեղեցկատեսիլ մարդուն:

— Ինձնից չի եղել կախուած դէմքիս գեղեցկա-
պէս ձեւակերպելը, միայն ես կարողացել եմ ձեւա-
կերպել ուղեղս:

— Լսենք ուրեմն ճարտարախօս մարդուն, վրա-
բերեց իւր հերթին Կրասսոսը:

* *

Պղատոնը ասում էր «մարդն անփետուր երկո-
տանի է»: Շատերը հաւանեցին այս սրամիտ համե-
մատութեանը:

Դիոգինէսը մի աքաղաղ թեփուահան արաւ և
ցոյց տալով իւր աշակերտներին, ասաց.

«Ահա ձեզ մարդ, ըստ Պղատոնի»:

Այն ժամանակ Պղատոնն աւելացրեց.

«Մարդն անփետուր երկոտանի է հարթ ու լայն
եղունգներով»:

* *

Երկու հիւպատոսներ* Գալբը և Աւրիլիոս Կոտ-
տան Վարիատտի դէմ բացուած պատերազմի հա-
մար վիճում էին սինօդում, թէ իրենցից որին
է արժան գնալու: Այդ պատճառաւ սինօդական-
ների մէջ շատ տաք վէճ բացուեց:

Երբ որ բոլորը դիմեցին Սկիպիոն Էմիլիոսին
և սրտատրոփ սպասում էին թէ յօգուտ որին
կ'ըօսի, նա ասաց.

— Ոչ մէկին և ոչ միւսին. որովհետեւ մէկը
«լինչ Կալիս, իսկ միւսը — Կալիս»:

* *

Մի փիլիսոփայի հարցերին.

Որպիսի նմանութիւն ունին լրագիրն ու հայելին:

— Շատ անգամ երկուսն էլ առարկաները գլխի-
վայր են ցոյց տալիս, պատասխանեց նա:

Մէկը մտաւ հասարակաց ընթերցարանը և մի հաստափոր գիրք խնդրեց:

— Ի՞նչ անուն ունի և քիչ ՆՁ հարցրեց գրադարանապետը:

— Միւսնոյն է, ինչ ՆՁ էլ կուզի լինի, միայն այս չափ հաստութիւն ունենայ, ցոյց տուեց նա գրկաչափը:

— Բայց ինչներթի է պէտք այդչափ մի հաստ գիրք, պարոն, հարցրեց գրադարանապետը զտրմացած:

— Վրէն պիտի նստեմ, ասաց նա, որովհետեւ, ինչպէս տեսնում էք, ես կարծահասակ եմ, իսկ ձեր գրասենյակները անչափ բարձր են:

* *

Բժիշկը խօսակցութեան ժամանակ դարձաւ մի պարոնի, որը խօսքով կպել էր իրեն.

— Դուք խօ հիւանդ չէք, պարոն:

— Ոչ պարոն բժիշկ, և այդ այն պատճառով, որ ձեր տուած խորհուրդներին ամենէին չեմ հետևում:

* *

Երաժշտական խումբը մի ճաշի ժամանակ այնպէս լաւ նուագեց, որ Օդոստոս կայսրը զգացուելով լաց եղաւ և երաժիշտներից իւրաքանչիւրին մի-մի չափ ցորեան ընծայեց՝ թէ և այդպիսի դէպքերում շատ անգամ փող էլ չէր խնայում:

Մի քանի ժամանակից լետոյ կայսրը մի ուրիշ հրաւերքում կրկին պահանջեց նոյն խումբը:

— Նրանք չեն կարող գալ, Զերդ Մեծութիւն, ասաց Տիրոնիոսը:

— Եւ ինչո՞ւ համար, զարմացաւ կայսրը:

— Որովհետեւ Զեր նուիրած ցորենը ջրադացում աղում են:

* *

— Գրիգոր, ձայն տուաւ տէրը ծառային:

— Հրամայեցէք, պարոն:

— Էգուց ինձ արթնացրու ժամը 4-ին, որովհետեւ ուղիղ 5-ին պիտի ճանապարհ ընկնեմ Մոսկուա:

— Շատ լաւ, պարոն, միայն դուք զանգահարեցէք և ես պատրաստ կ'լինեմ:

* *

Նոր դերասանը առաջին անգամ բեմ դուրս եկաւ, բայց յաջողութիւն չունեցաւ:

Ներկայացման վերջը յայտարարեց, որ բաղդ կ'ունենայ միւս օրն էլ ներկայացնելու, և եթէ դուր չի գալ հասարակութեանը, այն ժամանակ հրապարակաւ կ'այլի իւր հանդերձը:

Միւս օրուայ ներկայացմանը, երբ նա բեմի վրայ երևաց, հանդիսականները մի-մի փաթեթ լուցկի ընծայեցին:

* *

Երեկոյթում հրաւիրուած սպային կինը հարցրեց.

— Մթթէ նոր սուրդ չես կապում, սիրելիս:

— Ոչ, վախում եմ, պատասխանեց նա. ախր 50 էկու եմ տուել, քիչ փող է:

— Բայց ինչո՞ւ, ինչի՞ց ես վախում:

— Ինչո՞ւ, հարցնում ես. միթէ չգիտես, որ գիշերով ուշ կ'վերադառնանք և ճանապարհին կարող են խլել:

* *

Քահանան կռուող ամուսիններին խրատում էր.

— Դուք շատ սիրով պիտի ապրէք, որովհետեւ երկուսդ մի մարմին էք կազմում:

— Մենք մի մարմին . . . վրայ բերեց մարդը, եթէ դուք նեղութիւն կրէիք գիշերով անցնել մեր պատուհանի մօտով, այն ժամանակ կ'ասէիք, որ ոչ թէ մէկ — այլ առնուազը քսան հոգի են խօսողները:

* *

Բժիշկը ծանօթին պատահելով՝

— Բարեւ, այդ թնչ է պատահել:

— Ոչինչ, պատասխանեց նա զարմանալով:

— Իսկոյն արիւն թողնել տուէք:

— Ի՞նչ էք հրամայում, պարոն բժիշկ, ես ինձ բոլորովին առողջ եմ զգում:

— ձգարթտ էք ասում:

— Հսւտացէք:

— Սյո, այո, ուղիղ էք ասում, ներողութիւն — ուշքի եկաւ բժիշկը — ես ձեզ բոլորովին ուրիշի տեղ ընդունեցի:

* *

ձաշի ժամանակ բոլոր տնեցիք ժողովուած

սպասում էին հիւրին, որը քնած էր առանձին սենեակում: Տանտիկինը աղախնուն ուղարկեց արթնացնելու. աղախինը գնաց տեսաւ որ հիւրը հայելու առաջ կանգնած տտամները սրբում է:

— Ի՞նչ եղաւ, հարցրեց տանտիկինը վերադարձող աղախնուն, շո՛ւտ կ'գայ ճաշելու:

— Իսկոյն, տիկին, պատասխանեց նա — ատամներն արդէն «յո»-ձ էր:

* *

Անգլիական յայտնի քաղաքագէտ Ռոբերտ Պիլը և երևելի բանաստեղծ լորդ Բայրօնը մանկութեան հասակում միևնոյն ուսումնարանումն էին սովորում ու շատ էլ սիրում էին իրար:

Բարձր դասատան աշակերտներից մինը մի բան ասաց Պիլին, որը չկամեցաւ կատարել. զայրացաւ աշակերտը և սկսեց խփել Պիլի ձեռներին և որպէսզի աւելի սաստկացնի ցաւը, նա ոլորեց խեղճի կուռը:

Մանուկ Պիլը սկսեց բարձր ձայնով լալ և գանգատուել, որի տանջանքին ներկայ էր փոքրիկ Բայրօնը:

Բայց թնչ անէր, ինչպէս օգնէր իւր թոյլ տեղովը սիրելի ընկերին: Նա առանց երկար մտածելու մօտեցաւ ծեծող աշակերտին և զայրացած դէմքով ու դողդոջուն ձայնով հարցրեց, թէ էլի քանի զարկ պիտի տայ իւր սիրելի ընկերին:

— Քեզ թնչ, հարցրեց ծեծողը. ինչո՞ւ ես հարցնում:

— Ուզում եմ զարկերի կէսը իմ վրայ առնել, պատասխանեց փոքրիկ Բայրօնը մորմոքուած:

* *

Դօկտոր Նունգը մի անգամ երկու կանանց ընկերակցութեամբ Տեմզա գետի վրայ նաւակով զբօսնելիս ֆլէյտ էր ածում: Նա նկատեց և մի ուրիշ նաւակ, որի մէջ նստած էին մի խումբ կանայք մի քանի աստիճանաւորներ ի հետ, որոնք անդադար հետեւում էին իրենց, — ֆլէյտը ծալեց, զրպանը դրեց:

— Ինչո՞ւ չես ածում, հարցրեց սպաներից մինը յանդգնաբար:

— Որովհետեւ ես այսպէս կամեցայ, պատասխանեց դօկտորը:

— Ես ոչինչ չգիտեմ, կրկնեց սպան, շարունակեցէք նուագել, ապա թէ ոչ այս ընդէին կ'ըջունեմ և նաւից դուրս կ'ձգեմ ձեզ:

Նունգը որ լողալ չգիտէր, ճարակտուր կրկին ձեռնառաւ ֆլէյտը և մինչև նաւահանգիստ հասնելը շարունակ նուագեց: Երբ ափը դուրս եկաւ, նա մօտեցաւ աստիճանաւորին և մի կողմը տանելով ասաց:

— Որպէսզի իմ և ձեր ընկերուհիներին չվախացնէի, ես կատարեցի ձեր յանդուժն պահանջը. իսկ այժմ դուք պարտական էք ինձ գոհացումն տալ: Եթէ դուք ցած ու վախկոտ չէք, եկէք վաղն այս ինչ տեղը և մենք սրերով կ'որոշենք գործը. բայց

բանը պէտք է մեր մէջ մնայ, ուստի կարիք չկայ վկաների:

Աստիճանաւորը համաձայնեց առաջարկուած պայմաններին և միւս օրը որոշեալ ժամին գնաց նշանակած տեղը:

Սակայն որքան մեծ եղաւ նրա զարմանքը, երբ դօկտորը, որ արդէն սպասում էր իրեն, յանկարծ զրպանից հանեց ատրճանակը և ուղղակի սպայի ճակատին նշան բռնեց:

— Ի՞նչ էք անում, գոռաց սարսափած սպան, չէ՞ որ մենք պայմանաւորուեցինք սրերով կռուել:

— Այո, սրերով, վրայ բերեց դօկտորը հանդարտութեամբ, բայց մենամարտից առաջ ես ուզում եմ փոքր ինչ զուարճանալ: Դուք այնքան բարի կ'լինէք, որ կ'կատարէք իմ այս փոքրիկ խնդիրը. այն է՝ ես կ'նուագեմ ֆլէյտի վրայ և դուք կ'պարէք, եթէ դրա փոխարէն գնդակի հարուածը ձեր ճակատին չէք գերադասում . . . :

— Բայց դա ամօթալի դաւ է, դա սպանութեան փորձ է:

— Ես ոչինչ չգիտեմ, սպանաց Նունգը, պէտք է պարես, ապա թէ ոչ — գանգո խախալ կ'շինեմ ատրճանակի գնդակներով:

Հարկաւոր էր կամ պարել և կամ հրաժեշտ տալ կեանքին: Ճար չկար, սպան նախադասեց երկուսից առաջինը. նա սկսեց պարել մօտ կէս ժամ: Այդ ժամանակ դօկտորը ֆլէյտը ծալեց դրեց գրը-

պանը և դարձաւ պարողին.

— Այժմ, պարոն, «քվիթ». մենք միմեանց ոչինչ պարտական չմնացինք:

Դուք երէկ ինձ ստիպեցիք հակառակ իմ կամքի ֆլէյտ ածել, ես էլ այսօր ձեզ ստիպեցի հակառակ ձեր կամքի պարել:

Այս բոլորից լետոյ եթէ էլի ցանկութիւն ունիք մենամարտելու, — ես Ձեր խոնարհ ծառան եմ, միայն այդ ժամանակ վկաների ներկայութեամբ կըլինի մենամարտութիւնը: Ուրեմն ցտեսութիւն:

Սպան վիզը քորելով հեռացաւ խայտառակուած:

* *

— Խնդրեմ, դիմեցէք գրաֆ Ն-ին. նա մեծ ազդեցութիւն կարող է ունենալ իմ ցանկացած տեղը յաջողեցնելու, ասաց մի տեղից զրկուած պաշտօնաւոր իւր ընկերին:

— Մեծաւ ուրախութեամբ, ասաց ընկերը, ամեն հնար գործ կ'դնեմ, բայց ճշմարիտ չգիտեմ . . . :

— Բոլորովին միամիտ եղէք այդ մասին, դուք միայն անունս յիշեցէք և բաւական է:

— Ծշմարէտ, ուրեմն գրաֆը ձեզ լաւ է ճանաչում:

— Ի հարկէ, ես նրան այնպիսի մի ծառայութիւն եմ արել, որ նա ինձ իւր բարերարների ցուցակն անցրած կլինի:

— Մթթէ. ուրեմն դուք նրան ազատել էք մի որևէ փորձանքից:

— Այո, ինչպէս չէ. ես նրան ազատեցի իմ սարսափելի կնոջից, որի վրայ նա նշանուած էր առաջուց:

* *

Գործակատարը, որ ուղարկուած էր քաղաք առուտուրի, զրեց տիրոջը հետեւեալ նամակը. —

«Ողորմած տէր! մոխրագոյն մատակը, Իվան Ի-«վանովիչ! սատկեց. Ձեր իշխանական կաշին ես վա-«ճառեցի և ստացած փողին առայ ձիու լծելու «սարգ ու կարգ (խամուտ) Ողորմածութեանդ հա-«մար:

«Անցեալ կիւրակի այստեղ խոզերի ցուցահան-«դէս էր. շատ կային Ձեր տեսակից, բայց ափսոս որ «ինքներդ այստեղ չէիք»:

Ձեր խոնարհ ծառայ և գերի Իվան:

* *

Կարդինալ Ֆլերին ՉՕ տարեկան էր, երբ մի երիտասարդ հոգևորական իւր եղբորորդոց նրա հովանաւորութեանը յանձնեց:

— Հանգիստ եղէք, ասաց Ֆլերին, եթէ նրանք ձեզ կորցնելու անբաղդութիւնը կ'ուենան, ես կըլինեմ նրանց հօրեղբայր:

— Ուրեմն, Ձերդ սրբազնութիւն, ասաց հոգևորականը, ես յանձնում եմ սրանց Ձերդ յաւիտեան համար:

* *

Գիւղացու կինը պարտեղի տանձի ծառից կա-

խուելով խեղդուեց, որի համար ամուսինը շատ էր մտածում:

— Մի՞թէ չես ամաչում, միտարում էր նրան հարեանը, որ դրա համար տխրում ես. տուր ինձ այդ ծառի ճիւղից՝ այգումս պատուաստելու համար, որ եթէ նոյն պտուղն ինձ էլ տայ, ոտներդ կը համբուրեմ:

* *

Նիկոլայ Պավլովիչը հեծելագորքին այցելած ժամանակ տեսաւ մի կապիտանի, որի կուրծքը շքանշաններով լիքն էր:

Կայսրը այն կարծիքին էր, որ շատ շքանշաններ ունենում են նրանք, որոնք մի որևէ բարձրաստիճան անձի մօտ «ադիւտանտ»-ի պաշտօն են վարել, այդ պատճառաւ էլ դարձաւ նրան.

— Ո՞ւմ մօտ էք ադիւտանտ եղել:

— Այ՛, ընդհանրի՛ մօտ, Զերդ Մեծուծիւն, պատասխանեց կապիտանը պարզօրէն:

* *

1812 թուին տեղի ունեցած պատերազմում մի աննշան գեներալ թշնամու թողած թնդանօթներից մի քանիսը պատահմամբ գերեց և այդ քաջութեան համար կառավարութիւնից պարգև խընդրեց:

Այս դէպքից յետոյ քաջագործ գեներալը պատահելով պաշտօնակից Իսկենսկուն, որը շատ զուարճախօս ու կատակասէր մարդ էր, կամեցաւ

գրկախառնուել, բայց վերջինս յետ փախաւ ասելով:

— Զերդ գերագանցութիւն, երևի ինձ էլ անպաշտպան թնդանօթների տեղ ընդունեցիք:

* *

Սարատովեցի մի հարուստ կալուածատէր շատ սրտով ցանկացաւ տեսնել Նիկոլայ Պավլովիչին և առանց երկար ու բարակ մտածելու ուղևորուեց Պետերբուրգ:

Նա ամբողջ օրերով պտտվում էր ձմերային պալատի շուրջը, որպէսզի պատահմամբ հանդիպի կայսրին:

Մի անգամ նա տեսաւ սպայական համազգեստով ու թիկնոցով մի պարթևահասակ աստիճանաւոր և ընդունելով նրան պալատականներից մինի տեղ, հարցրեց, թէ ինչպէս կարող է թագաւորին տեսնել:

— Արդեօք ունի՞ք մի որևէ խնդիր կայսեր մօտ հարցրեց անծանօթը:

— Պարզամիտ երեսայ, բացագանչեց կալուածատէրը ծիծաղելով, ես ոչ մի բանի պակասութիւն չունեմ և եկել եմ միայն թագաւորին տեսնելու համար: Բայց ասացէք խնդրեմ, դուք ո՞վ էք:

— Ես Ռուսիայի թագաւորն եմ, պատասխանեց անծանօթը ծիծաղելով, որ ինքն Նիկոլայ Պավլովիչն էր:

— Օհ, հեգնեց կալուածատէրը հռհռալով, եթէ

դու Ռուսիայի—բայ ես էլ պէտք է Ձինաստանի կայսրը լինիմ... Հանաքը մի կողմը թողնենք, կարճ առա ինձ, ո՞վ ես դու, և թագաւորին տեսնելու մի ճար սովորեցրու, խնդրեմ:

—Հանաք արի, պատասխանեց կայսրը. ես կայսեր «Փլիգել-ադիւտանտն» եմ և կ'օգնեմ քեզ այդ գործում:

—Դէ վաղ էդպէս կասէիր է՛... մի քիչ երկիւղալի է ինձ հետ հանաք անելը, սիրելի պարոն. ձեզ լաւ յայտնի լինի, որ նահանգապետի պէս ծանօթներ ունեմ, ինձ հասարակ մարդկանցից չկարծէք... :

Թագաւորը խոստացաւ միւս օրը իւր ընկերին ուղարկել, որը կալուածատիրոջ կ'ներկայացնի կայսեր:

Միւս օրը, խոստման համեմատ, եկաւ կայսեր Փլիգել-ադիւտանտը և կալուածատիրոջ հրաւիրեց պալատը, իբր իւր (ադիւտանտի) ընկերոջ հետ խորհրդակցելու:

—Ի՞նչպէս կարելի է գնալ նրա մօտ, ասաց կալուածատէրը, քանի որ ես նրա անունն էլ չգիտեմ:

—Այդ ոչինչ, պատասխանեց ուղեկիցը, գնա ուղղակի պալատը և հենց առաջին հարցին պատասխանիր. «ես Ձինացոց թագաւորն եմ»:

Կալուածատէրը մի կուշտ ծիծաղեց և որպէս պատուիրել էր ադիւտանտը, միւս օրը գնաց պալատ: Դրսի պահապանը տեսնելուն պէս թմբկա-

հարելով ընդառաջ եկաւ և արքայավայել պատիւ տուեց:

Կալուածատիրոջ թուք ու մուքը սառաւ, մընաց շուլարած կանգնած. սպասաւորները, որոնց առաջուց պատուիրուած էր, ուժով տարան նորան կայսերական ընդունարանը:

—Այս քնչ արիք, ասաց նա սարսափած, դուք գիտե՞ք որ այս տեսակ հանաքի համար ձեզ էլ ու ինձ ել Սիբիր կ'քշեն և ես կ'զրկուեմ կայսրին տեսնելուց:

Այդ միջոցին ներս մտաւ կայսրը թագաւորական զորդարուն զգեստով և կալուածատիրոջը կայսրուհուն ներկայացնելով՝ ասաց.

—Սաշա, խնդրեմ ծանօթանաք Նորին Մեծութեան «Ձինական կայսեր» հետ:

—Այսքան տարեկան մարդ եմ—բացառանչեց կալուածատէրը ծիծաղելով—և այսպիսի մի հանաքչի մարդու չեմ պատահել:

Նա շատ ուրախ տրամադրութեան տակ լինելով, բաւական երկար զրուցեց կայսեր և կայսրուհու հետ՝ իւր հարեաններից, բարեկամներից, իւր կարողութիւնից և այլն:

Մօտ բերին նախաճաշը, որը շատ զուարթ անցաւ: Նախաճաշի վերջը մի սպասաւոր թագաւորի հարցմանը պատասխանեց.

«Կատարուած է, Ձերդ Կայսերական Մեծութիւն»:

Այդ ժամանակ միայն գլխի ընկաւ կալուածատէրը և ծուռնկ չոքելով սկսեց ներուժն խնդրել:

— Ոչ միայն չեմ նեղանում, ասաց կայսրը, այլ շատ ուրախ եմ. նստիր նախաճաշդ վերջացրու և երբ կ'գնաս, կ'ասես բարեկամներդ, որ ոչ միայն տեսար Ռուսիոյ թագաւորին, այլ և պատիւ ունեցար նախաճաշելու իւր և ընտանիքի հետ:

* *

Օրիորդական ուսումնարանի քննութեան ժամանակ ֆիզիքայի ուսուցիչը դարձաւ մեկին.

— Օր. Դանիէլեանց, պատմեցէք խնդրեմ, թէ քննչ գիտէք առհասարակ գագերի յատկութեան վերաբերեալ:

— Նա... ինչ... ի վան Վասիլիչ, ամաչում եմ, ամօթ է, ասաց օրիորդը կարմրելով:

— Այդ քննչ նորութիւն է, պատմիր կարգին:

— Նա... նա շատ վատ հոտ ունի:

— Ես ձեզ վառուող գազի մասին չեմ հարցնում, այլ առհասարակ: Օր. Դալօյեան, դուք պատմեցէք, խնդրեմ:

— Գազը առհասարակ շատ անպէտք կտոր է. նա շատ շուտ է մաշվում, բացի դրանից, փիս ծալծլորվում ու պատռտվում է: Քրոջս համար կարեցինք, բայց...

— Դուք միայն շորերի վրայ էք մտածում, ընդհատեց ֆիզիքոսը բարկանալով. օր. Ենիչարեան, գոնէ դուք մի կարգին պատմեցէք:

— Գազը թեթեւ է օդից, սրտալի պատասխանեց Ենիչարեանը:

— Այդպէս, լաւ, թեթեւ է օդից և այդ պատճառաւ...

— Եւ այդ պատճառաւ, շարունակեց օրիորդը, երբ որ զովացուցիչ խմիչքների հետ գործ են ածում, այն ժամանակ գազը խփում է քթին և մարդը—ներեցէք ասել—զկուտում է:

* *

Երկու գերմանացի ճաշարանում նստած սիգար էին ծխում և անդադար խօսում, այն էլ ռուսաց լեզուով:

Երբ որ մէկի սիգարը հանգաւ, նա դարձաւ ընկերին.

— Կոխարսի Կոխարսի, ա-գա-ս-րիցա:

— Նէ-ս, պի-ս-ի, պատասխանեց ընկերը:

— Ա հալ ճի միշնո հաքարիսի փօր-ս-ս-ի. նէ պի-ս-ի, ա պի-ս-ի, ա-գի-ց ա-ս-ի-ց:

* *

Զինուորական ուսումնարանում ռուսաստանցի ուսուցիչը զայրացաւ մի բլթամիտ զինուորի վրայ՝ ասելով—

— Յիմմա՛ր, բոլորովին ուղտ ես, միայն պողերդ է պակասում:

* *

Սմուսինը մի ինչ-որ բանի համար բարկացաւ կնոջ վրայ—

— Ես ամենևին քեզ թոյլ չեմ տալ . . . :

— Դու թոյլ չես տալ . . . հեգնեց կինը, բայց ես ոչ մի ժամանակ քեզ թոյլ չեմ տալ, որ դու թոյլ տաս քեզ՝ ինձ թոյլ տալու:

* *

— Դու դեռ երկար պիտի նստես, հարցրեց երեսխան պնդերես այցելուին:

— Ինչո՞ւ համար ես հարցնում, սիրելիս, հետաքրքրուեց այցելուին:

— Նրա համար որ քաղցած եմ, և մայրիկս ասաց, հենց որ այդ «զահլաքուշտ» մարդը դուրս կորչի, իսկոյն ճաշի կ'նստենք:

* *

Ուսուցիչը բացատրեց —

«Եթէ մարդու մի որևէ զգայարանը փչացած է կամ լաւ չէ զարգացած, այն ժամանակ միւս զգայարանքերը զօրեղանում են»:

— Հասկա, մի օրինակ ասացէք, դարձաւ նա աշակերտներին:

— Օրինակ, պատասխանեց մէկը, չալիսի մի «որ» կարճ է լինում, մի «ը» երկար է:

* *

Երկու երեսայ խօսում էին:

— Մայրիկս ինձ համար նոր խաղալիք առաւ . . . ասաց մէկը «ճլվիշտ տալով» (պարծենալով):

— Իմ մայրիկն էլ առաւ, ասաց միւսը, չուզենալով յետ մնալ:

— Նոր շորեր էլ առաւ մայրիկը:

— Ինձ համար էլ առաւ մայրիկս:

— Բաս որ իմ մայրիկը լաւն է քո մայրիկիցը:

— Հազիր իմ մայրիկն է լաւը . . . :

— Սուտ ես ասում, քու մայրիկի ատամները ամեն իրիգուն քու հայրիկը ջարդում է:

— Ձէ, դու ես սուտ ասում, հայրիկս չի կարող ջարդի:

— Ինչի՞ չի կարող որ . . . :

— Նրա համար, որ իմ մայրիկը քու մայրիկից խելօք է. նա ամեն իրիգուն, դեռ հայրս չեկած, իրան ատամները հանում է, ձեռնարկում պահում:

* *

— Ե՛լ, պարօն, ձեր անցաթուղթը կեղծ է, ասաց ոստիկանը օտարականին:

— Ընդհակառակ, արդարացաւ նա, անցաթուղթս իսկական է, ես եմ կեղծ:

* *

Բէն-Սեդիմ խալիֆան հիւանդանալով՝ կանչեց ծառային և հրամայեց.

— Շուտ գնա բժշկի մօտ և դեղ բեր ինձ համար:

— Իսկ եթէ բժիշկը տանը չլինի, հարցրեց ծառան:

— Սյն ժամանակ անցիր մի ուրիշի մօտ:

— Իսկ եթէ տանը լինի և դեղ չտալ . . . :

— Կտայ, ասաց խալիֆան, տալով նրան մի ոսկի:

— Շատ լաւ, ասենք թէ տուեց. բայց որ հիւանդուլթեանդ չօգնէ . . . :

— Տօ հարամադադա, բարկացաւ խալիֆան, ինչքու գործն է՝ կ'տայ թէ չէ. կատարէր իսկոյն ինչ որ հրամայուի եմ քեզ:

— Անգին տէրս, ասաց ծառան շատ քաղցրութեամբ, ասենք թէ դեղնօգնեց, — ինչ դուրս եկաւ դրանից. բոլորս էլ պետք է մեռնենք եթէ ոչ այսօր, անկասկած էգուց, միւս օրը . . . ուրեմն միւսնոյն չէ . . . :

— Ճշմարիտ է ասածդ, կակղեց խալիֆան, ալլա մի գնալ:

* *

Մի երիտասարդ լսելով որ այսօրինչ հարուստ վաճառականը իւր աղջկանը ահագին քանակութեամբ փող ու բաժինք է խոստացել, գլխապատառ վազեց նրա մօտ.

— Ասացէք խնդրեմ, յարգելի պարոն, արդեօք ազատ է Ձեր աղջկայ ձեռքը:

— Իսկ ձերն ազատ է, հարցրեց վաճառականը:

— Դժը՞ ի հարկէ ազատ է, պատասխանեց երիտասարդը ձեռները տրորելով:

— Ուրեմն ինչո՞ւ չեմ ուզում ձեր քիթը սրբելով ձեռներս կեղտոտել:

* *

Ընտանեկան տուր ու թմփոցի ժամանակ վախլուկ մարդը փախաւ մտաւ մահճակալի տակ: Կինը մի փայտ ձեռին մօտ վազեց աղաղակելով.

— Դուրս արի, մի դուրս արի, տես թնչ եմ բերում գլուխդ:

— Դուրս չեմ գալ, պատասխանեց մարդը:

— Ինչպէս թէ «դուրս չեմ գալ», բարձրաձէնեց կինը կատաղած, դուրս արի, ես քեզ հրամայում եմ:

— Չեմ դուրս գալ և էլ կ'հաստատեմ, որ տան գլուխը ես եմ, ոչ թէ դու:

* *

Գերմանացի դերձակը բռնութեամբ տալով աշակերտին, հրամայեց մօտիկ խանութից բռնութի բերել:

— Իսկ փողը, հարցրեց աշակերտը:

— Փողով խօ ես էլ կ'բերեմ, ասաց դերձակը, բանն էն է, որ առանց փողի բերես:

Աշակերտը դուրս ելաւ և մի քանի բոլբոլից յետոյ վերադառնալով՝ դատարկ բռնութեամբ դրեց ուստի առաջ:

— Ո՞ւր է բռնութիւն, հարցրեց դերձակը բարկացած:

— Էտա է՛, վրալ բերեց աշակերտը, բանն էն է դարդակ բռնութեամբից քաշես, թէ չէ լիք բռնութեամբից ով ասեօ, կ'քաշի:

* *

— Դուք երբ և իցէ չորսէլ է . . . հարցրեց դատաւորը մեղադրեալին:

— Ի հարկէ, կտրեց խօսքը մեղադրեալը, միշտ խօ չի կարելի կանգնած մնալ,

Կողոպտուողը բռնեց գրպանահատի ձեռքը հենց այն միջոցին, երբ նա դուրս էր քաշում փողի քսակը:

— Կաց, անպիտան, ես քեզ ցոյց կ'տամ թէ ինչպէս կ'գողանան:

— Մի էդպէս լաւութիւն արա, ի սէր Աստուծոյ, վրայ բերեց գողը, որովհետեւ ահա չորրորդ անգամն է, որ խայտառակ կերպով բռնվում եմ:

* *

— Իբր թէ հայրդ քեզ համար ոտնամաններ առաւ. այնքան մանր են, որ ոչ թէ ոտդ—այլ քիթդ էլ չի մտնիլ. անմեղ փողեր է փչացնում էլի—ասաց մայրը ութ տարեկան աղջկան:

— Մի նեղանալ, մայրիկ, հանգստացրեց աղջիկը, այդ փողերը կորած մի համարիլ. եթէ ինձ չի հարկաւորուիլ, կ'պահեմ որդոցս համար:

* *

Մի շատ պահանջող փաստաբան պիտի պաշտպանէր մէկի, որը մեղադրվում էր ժամացոյց գողանալում:

— Դուք կ'վճարէք ինձ, եթէ ես ձեզ պաշտպանեմ, հարցրեց փաստաբանը մեղադրեալին:

— Բայց ես ոչ մի կոպէկ չունեմ:

Եթէ այդպէս է, ասաց փաստաբանը, «—է» ինչ Գողացած Ժամացոյցը, կ'պաշտպանեմ:

* *

Քիմիայի ուսուցիչը մի լուցկի առնելով ձեռքը,

մի առ մի ցոյց տուեց աշակերտաց և հարցրեց.

— Պարոնայք, ո՞վ կարող է ասել, թէ այս լուցկին բնութեան ո՞ր թազաւորութիւններն է ներկայացնում: Աշակերտներից մէկը պատրաստուեց վեր կենալու:

— Ասա տեսնեմ, նկատեց ուսուցիչը վերկացողին:

— Փայտը, որից շինուած է դրա կոթը, պատկանում է բուսական թազաւորութեանը,— բացատրեց աշակերտը, ծծումբը—հանքաբանական, իսկ ձեռքը որ բռնած է դրան, «անհասկանալի»:

* *

Խնջոյքում հրաւիրուածներից մէկը դարձաւ մօտը նստողին.

— Ասացէք խնդրեմ, ո՞վ է այն հրէշը, որ մեր դէմուդէմը նստած է զինուորականի աջ կողմը:

— Նա կիսու է, պատասխանեց ամուսինը կարմրատակելով:

— Ախ, հազար ներողութիւն, ես ուզում էի հարցնել՝ ո՞վ է նրա ձախ կողմը նստող ալլանդակը:

— Նա էլ աղջիկս է, ասաց հայրը բոլորովին իրեն կորցնելով:

* *

Ականաւոր երաժշտապետ Մօցարդը մտաւ մի աւետարանական եկեղեցի, ուր դաշնամուրի վրայ ժամասացութեանը ձայնակցում էր մի շատ անշնորհ երաժիշտ:

Մօցարդը չկարողացաւ համբերել այդ աններ-

դաշնակ խաօսին և դուրս եկաւ ու գաւթում ըզբօսնում էր:

Երբ որ ժամասացութիւնը վերջացաւ, քահանան մօտեցաւ մեծ երաժշտապետին ու հարցրեց.

— Ի՞նչպէս հաւանեցիք մեր երաժշտին, գեղեցիկ է նուագում:

— Շատ հրաշալի է. ճիշտ աւետարանական հոգով է ածում:

— Ի՞նչպէս, խնդրեմ բացատրեցէք, շարունակեք քահանան ուրախանալով:

— Ոչ գիտէ՞ յըն, զիսկ ասէ յաւատաստանեց Մօցարդը:

* *

Հրէուհին մտաւ շորեղէնի խանութը:

— Ի՞նչ արժէ այս ժապաւէնի արշինը, հարցրեց նա:

— Ձեզ կարելի է տալ 15 կոպէկով:

Հրէուհին հաշուեց ինքն իրեն՝

«Նա ասում է 15 կոպ. կ'նշանակէ միտք ունի 12-ով տալու. 10 կոպէկով խօ կտայ ու կտայ: Ժապաւէնի արշինն իսկապէս արժէ 8 կոպէկ, ուրեմն կարելի է 6-ով առնել. բայց դեռ կ'առաջարկեմ 4 կոպէկ, թէ չէ ու 6-ով աղաչանք էլ կ'անի»:

* *

Ամուսինները կռվում էին. իւրաքանչիւրը նշանցից ուզում էր սրախօսութեամբ դադել միւսին:

— Ես հաւատացած եմ, որ ոչ թէ Եւան—այլ

Ադամը մեղանչեց ասաց կինը. ուրիշ կերպ էլ չէր կարող լինել, որովհետեւ կանայք՝ մարդկանց հետ համեմատաբար՝ հրեշտակներ են:

— Ես էլ այդպէս եմ մտածում, որ Ադամը մեղանչեց խռովինը, պատասխանեց մարդն առանց շփոթուելու, թէ չէ Աստուած ինչո՞ւ պիտի պատժէր նրան Եւայի պէս մի կին պարգևելով:

* *

Մէկին դատում էին երկու կին ուղեւու համար:

— Ի՞նչ ունէք ձեզ արդարացնելու համար ասելու, դարձաւ դատաւորը մեղադրուածին:

— Երկրորդ կնոջ վրայ ինքնապաշտպանութեան համար պսակուեցի, պատասխանեց նա:

— Ի՞նչ էք ուզում ասել դրանով:

— Առաջին կինս շատ անպիտանն էր, հանգիստ չունէի նրանից. կռիւ, զալմաղալ սովորական էին մեր տանը. մինչև անգամ ծեծում էր ինձ: Երբ ամուսնացայ երկրորդի վրայ, դրութիւնս դէպի լաւը փոխուեց, որովհետեւ ինձ հանգիստ թողնելով՝ երկուսն իրար ձեռք առան:

* *

— Դուք շատ նման էք ձեր եղբօրը, ասաց մէկին իւր ընկերը:

— Ուղիղ ես նկատել, շատ նման ենք, այնքան, որ շատ անգամ «փոխան» ենք ընկնում (իրար խառնում ենք): Մեր դերձակի մօտ մի քիչ մնացած

Հաշիւ կայ, և մինչև այսօր չգիտեմ ես եմ պարտ,
թէ եղբայրս:

* *

—Ասացէք խնդրեմ, ինչո՞ւ Համար ես Հեռագ-
րական սիւնների վրայ բաժակներ ամրացրած,
հարցրեց երիտասարդ կինը ճանապարհորդակցին:

—Նրա համար, որ Հեռագիրներն անձրևային
եղանակին պահուեն նրանց մէջ, չթրջուեն:

—Ըմ—մատը կծեց առաջինը—Ես ասեմ, թէ ին-
չու երբեմն Հեռագիրներն ուշ են տեղ հասնում:

* *

—Ուշում եմ Ապօլլոնին նկարեմ, ասաց նկա-
րիչն ընկերին, բայց չգիտեմ ինչպիսի շրջանակով
փակեմ:

—Ի՞նչ կայ այդտեղ չգիտնալու. նկարիր նը-
րան ժամանակակից բանաստեղծներով բոլորուած՝
գլխակոր կանգնած, և իւրաքանչիւրի ձեռը տուր մի-
մի խարազան:

* *

—Զինուորական ուսումնարանում ուսուցիչը մի
գինուորի հարցրեց.

—Ասա՛ ինձ, թէ ինչո՞ւ ռումբը տրաքվում է:

—Որովհետեւ դատարկ է:

—Իսկ ինչո՞ւ քո գլուխը չի տրաքվում:

—Զգիտեմ, Զերդ գերազնուութիւն:

—Լաւ, բայց ինչո՞ւ օդաձիգ փամփուշտը բարձ-
րանում է վերև:

—Որովհետեւ պոչ ունի, Զերդ գերազնուութիւն:

—Ուրեմն քո խելքով կ'նշանակի կովն էլ վեր
կ'բարձրանայ . . . :

—Ինչո՞ւ չէ, Զերդ գերազնուութիւն, է՛նէ պա-
հէնայ, ի հարկէ նա էլ կ'բարձրանայ:

* *

—Զեղ մեղադրում են, որ դուք փողոցում մի
կին էք ջարդել, ասաց դատաւորը կառապանին:

—Ես չեմ ջարդել, պ. դատաւոր, այլ ջարդել
են տիրոջս ձիաները:

—Բայց դուք ինչո՞ւ չէիք աղաղակում:

—Ինչո՞ւ Համար պիտի աղաղակէի, վրայ բե-
րեց կառապանը սառնութեամբ, թող նա՛ աղաղա-
կէր, ով որ ջարդվում էր:

* *

Յովսէփ II-ի մօտ մի կին եկաւ և խնդրեց
որ իւր մարդուց բաժանի, ասելով՝ որ շատ կուպիտ
և անմարդավարի է վարվում հետը:

—Շատ ցաւում եմ, ասաց թագաւորը, բայց այդ
իմ գործը չէ:

—Նա շատ անգամ Զեր հասցէին էլ է ուղղել
կեղտոտ խօսքեր, թագաւոր, աւելացրեց կինը:

—Շատ ցաւում եմ, վրայ բերեց կայսրը, բայց
այդ էլ ձեր գործը չէ:

* *

—Ես ընդունում եմ Զեր առաջարկութիւնը, աս-
աց աղջկայ հայրը փեսացուին, և տալիս եմ աղջ-
կանս իբրև օժիտ՝ 30 հազար ռ. միանուագ, կամ երկ-

երկուհազար ռուբ. իւրաքանչիւր տարի. էլ Բնչկ' ուղէք սրանից լաւ:

— Ես միայն մի շատ թեթեւ բան կ'ուզէի, պատասխանեց փեսացուն, այն է՝ «ԿՍՄ» շաղկապը փոխէիք «ԵԻ» ի, որը շատ հեշտ է Ձեզ համար, մանաւանդ, որ երեք տառի տեղ մինն եմ ուզում:

* *

— Տէր, տունն այրվում է—ասաց լեզապատառ մօտ վաղելով ծառան—խոհանոցում ամեն ինչ...:

— Լաւ, լաւ խօսքը կտրեց տան տէրը, մանրամասնութիւններն էգուց լրագրներումն էլ կարող եմ կարդալ:

* *

— Դու սատանի փայ դառնալու էլ չես արժանի, ասաց մարդը կնոջ հետ կռուելիս:

— Կներես, պատասխանեց կինը, ես աւելի եմ արժանի քան թէ դու:

* *

Սանդեբսօնը չնայելով որ կոյր էր, այնուամենայնիւ մաթէմատիկայի դասախօս էր Կեմբրիջեան համալսարանում: Մի բազմամարդ ընկերութեան մէջ նա մի կնոջ ետեւից բացագանչեց.

«Որքան հրաշալի ատամներ ունի»:

Որովհետեւ կոյր սրախօսի նկատողութիւնը ճիշտ էր, մի քանի հետաքրքիրներ հարցրին.

— Ի՞նչպէս իմացաք, բացատրեցէք, խնդրում ենք:

— Որովհետեւ այդ կինը շարունակ ծիծաղում էր ամեն մի դատարկ բանի վրայ, պատասխանեց Սանդեբսօնը, ես եզրակացրի, որ նա այդ անում է իւր ատամները ցոյց տալու համար:

* *

Քարոզի ժամանակ ունկնդիրների մէջ քչփըջոց ընկաւ և քարոզիչը յայտնեց իւր անբաւականութիւնն այդ անկարգութեան համար:

Կանանցից մինը կամենալով իւր սեռին պաշտպանել, ձայն տուեց.

— Կարող եմ հաւատացնել, որ այդ աղմուկը կանանց դասից չէ:

— Աւելի լաւ—վրայ բերեց քարոզիչը—շուտ կը վերջանայ:

* *

«Կոյս աղջկայ վրայ—ասում է աւղանական առածը—կարելի է պսակուել գիշերով՝ առանց մանրամասն զննողութեան, այլիի վրայ—ցերեկով՝ միայն լաւ զննելուց յետոյ, իսկ մարդաթող արած կնոջ վրայ... սրա համար ոչ օրուայ և ոչ գիշերուայ մէջ չկայ մի յարմարաւոր պսակուելու ժամ»:

* *

— Ինչնեղ է ցաւում, հարցրեց բժիշկը հիւանդին:

— Ես ինքս էլ չեմ հասկանում, պ. բժիշկ, պատասխանեց հիւանդը, սա մի ուրիշ տեսակ բան է. աշխատում եմ—եղան պէս, խժռում եմ—գալի պէս,

յօզնուամ եմ—շան պէս, իսկ քնել ամենևին չեմ կարողանում:

— Եթէ այդպէս է, ասաց բժիշկը վեր կենալով տեղից, ես ձեզ խորհուրդ կ'տամ դիմել Կոմիտէ:

* *

Մէկը խնդրեց նկարչին կնոջ պատկերը նկարել,—բայց որքան կարելի է, ասաց նա, բնականին նման. ոչ աւելացրէք, ոչ պակսացրէք:

— Շատ լաւ, պատասխանեց նկարիչը, կ'նկարեմ այնպէս, ինչպէս ուզում էք:

— Բայց նա համր է, կ'ուզէի որ այդպէս էլ երևար պատկերի վրայ:

— Միամիտ եղէք, դրա հնարն էլ գիտենք:

Նշանակած օրը նկարիչը յանձնեց պատուիրողին կնոջ պատկերը, որի շրթունքները միացրած էին մի ահագին կողպէքով:

* *

Հենրիկոս IV Յրանսիայի կայսրը մի պառաւած օրիորդի տեսնելով՝ ասաց.

— Արդեօք շատ վաղ է, որ դուք «մնաս բարև» էք ասել Գեղեցիկ-Նեան Կոմիտէին:

— Ձերդ Մեծութիւն, պատասխանեց աղջիկն առանց քաշուելու, ճիշտ չեմ յիշում, բայց մօտաւորապէս այն ժամանակն էր, երբ դուք «մնաս բարև» ասացիք Կոմիտէին:

Հարաւային Գերմանիայում մեռաւ մի ուսուցիչ, որը իւր ամբողջ ուսուցչական կեանքը (51 տարի 7 ամիս) գրի էր անցրել:

Մանկավարժ-ուսուցիչը չէր մոռացել և այն բոլոր պատիժները, որ մատակարարել էր իւր սաներին: Այդ «մանկավարժական ամենաանհրաժեշտ տարրական մասը» նա յիշում է իւր օրագրութեան մէջ մի առ մի, այն է —

1572 անգամ քանոնի հարուածներ եմ տուել:

124,100 » ողորդել » » »

20,989 հոգու ատամներ եմ ջարդել:

137,716 » վզակոթից բռնելով դուրս եմ շարտել:

790 » ապտակել եմ:

1,115,800 » գլուխ եմ պատռել:

22,763 » հանդիմանել, հայհոյել եմ և այլն ըստ կարգին:

Բացի սրանից, 770 անգամ սաներիս չոքացրել եմ ծեծած աղիւսի վրայ:

5001 աշակերտի պատժել եմ՝ գլխներին կաւիճով զանազան բաներ նկարելով, և

1707 հոգու մի քանի օրով նստացրել եմ մուրժ սենեակում:

* *

— Ուղի՞ղ է, որ դուք կամեցել էք այս պարոնի գրպանից փողի քսակը դուրս քաշել, հարցրեց դատաւորը բռնուած գրպանահատին:

— Ամենևին ոչ, պարոն դատաւոր, արդարացաւ

նա, ես ինքս այդ ժամանակ փողով լի քսակս կորցրել էի, և այդ պատճառաւ ամեն մի կասկածաւոր տեղ որոնում էի . . . :

* *

Երիտասարդը պարծենում էր աչքադրած օրինորդի մօտ, որի հայրը հակառակ էր իւր առաջարկութեանը:—

— Սիրելիս, ասում էր նա, հայրդ չհասկանալով՝ բոլորովին աւելորդ տեղն է քրթմնջում իմ հաւատարմութեան գործունէութեան վրայ. որպէսզի ես նրան բաւականացնեմ, շուտով քննութիւն կ'տամ հայրսէրական ուսումնարանում և ըստ նոր կանոնադրութեան մի անգամից կըստանամ համալսական հարցաւորի պաշտօն՝ այսինքն — էջնասիր:

* *

Ամուսինը վերադարձաւ տուն լուսաբացին — ժամը 5-ին և սլառկելու ժամանակ անզգուշաբար կնոջը դիպաւ, արթնացրեց:

— Ախ, հոգիս . . . ասաց կինն աչքերը ճմռթորեւով, միթէ այսպէս վաղ ես ուզում վերկենալ աշխատելու. խնայիր առողջութեանդ, սիրելիս, ախր դեռ շատ վաղ է:

— ձիշտ է նկատողութիւնդ, այ կին. բաս կ'պառկեմ մի երկու ժամ էլ կ'քնեմ:

* *

— Ի՞նչ զանազանութիւն կայ հրացանի և կրնկայ մէջ, հարցրեց մէկը մի կնկանից դաղուածի:

— Այն զանազանութիւնը կայ, որ հրացանը խփում է միայն գնդակով, իսկ կինը — ինչ որ ձեռն է ընկնում՝ փայտով, ոտնամանով, աթոռով և այլն:

* *

— Հայրիկին ես շատ սիրում, թէ մայրիկին, հարցրին փոքրիկ երեխային:

— Ի հարկէ հայրիկիս, պատասխանեց նա:

— Բայց ինչո՞ւ:

— Որովհետեւ հայրիկս սիրում է ծծմօրս, իսկ մայրիկս ատում է:

* *

— Ուրեմն դու որք ես, հարցրեց գաւառապետը՝ զանգատաւոր երիտասարդին:

— Այո, Զերդ պայծառափայլութիւն, մի եղբայր և մի քոյր ունեմ միայն:

— Բայց այդ ծիծաղալի է, զարմացաւ գաւառապետը, երէկ այդ միւսնոյն գործի համար եկաւ քոյրդ և ասաց, որ երկու եղբայր ունի, այժմ դու . . . :

* *

— Որսորդը պատմում է ընկերին.

— Դիտե՛ս, ես ինչպէս եմ նապաստակներ որսում:

— Ի՞նչպէս:

— Մի մեծ քար եմ գտնում և վրան դնում եմ մի կաղամբի տերև՝ վրէն բռնոթի ցանած: Նապաստակը գալիս է ուտում — փռշտում,

փռշտում—գլուխը քարին խփում, փռշտում—քարին խփում, քարին խփում—փռշտում և այսպիսով ինքն իրեն սպանում է:

* *

— Ուրեմն այդպէս. ես քեզ համար նոր շրջագետ չեմ կարող առնել... ասաց մարդը կնոջը-
երկար վիճելուց յետոյ:

— Եթէ դու չես կարող, ամենայն ուրախութեամբ կ'կատարի իմ խնդիրը Ա. Մա-ն:

— Զի համար ձագուռի, շան պէս կ'սպանեմ:

— Շատ մի պարծենալ լիւ... մէկը չի ու երկուսը չի, ո՞ր մէկին սպանես:

* *

Օտարականը մօտենալով հարցրեց հիւրանոցի ծառային.

— 14 Ձ-ն ազատ է:

— Ազատ է, պարոն, ներս հրամեցէք:

— Ախ, հառաչեց օտարականը ներս մտնելով սենեակը, այս Ձ-ը շատ թանգագին յիշատակներ է զարթեցնում իմ մէջ:

Առաւօտեան ներկայացրին հաշիւը, ուր ի միջի այլոց, գրած էր՝

«Թանգագին յիշողութեանց համար — 1 ուրբ»:

* *

Նոր նշանուածը միշտ քաղցրեղէն էր տա-

նում հարսնացուի համար, մինչդեռ վերջինս սպանում էր ոսկէ ընծաների:

— Ելի քաղցրեղէն, վերջապէս բարկացաւ հարսնացուն համբերութիւնը հատած:

— Լաւ, էլ ո՛ւր ես նեղանում, միւս անգամ էլ քաղցրեղէն չեմ բերիլ...:

Հարսնացուն ուրախացաւ, որ հազիւ հազկարողացաւ հասկացնել նրան իր սխալը:

Հետեւեալ օրը փեսացուն բերաւ երկու կախան կարմիր պղպեղ և երեք փաթեթ թուռնդ մանանեխ:

* *

«Երեք բան ամենից շատ են մաքրվում—սում է մի փիլիսոփայ—հագած, ճանճը եւ կնիւր:

Առաջինը կեղծ է, երկրորդն ազատ—խսկ երրորդը—այն էլ, այն էլ, դեռ մի բան էլ աւել»:

* *

Վօլտեր—Սկօտը մի անգամ զբօսնելիս պատահեց մի աղքատի, որն առաջ գալով ողորմութիւն խնդրեց: Պօէտը ձեռք գրպանը տարաւ, բայց տեսաւ որ մանր փող չունի:

— Բարեկամ, ասաց նա աղքատին, ահա քեզ մի շիլլինգ, բայց տե՛ս, ինձ վեց պենս պարտ կ'մնաս:

— Թող Աստուած օրհնէ Զեր ողորմածութեանը, ասաց աղքատը, և թող Տէրն այնքան կեանք պարգևէ Զեզ, մինչև որ կարողանամ իմ այդ պարտքը վճարել:

Գողն ամարանոցում մէկի պատժգամբի վա-
րագոյրները գողացել էր:

— Ինչի՞դ էր հարկաւոր, հարցրեց դատաւորը,
Քնչն ստիպեց քեզ, որ անպէտք վարագոյրները
գողացար:

— Անհրաժեշտութիւնը, պ. դատաւոր:

— Ի՞նչ անհրաժեշտութիւն, շարունակեց դա-
տաւորը:

— Հարեան տնից իրեղէններ ունէի գողացած,
բայց փաթաթելու բան չկար:

* *

Ամարանոցում երկու պարոններ զբօսնում էին:

— Բնակարանդ յարմարութիւններ ունի՞, հարց-
րեց մէկը միւսին:

— Ամեն յարմարութիւն, պատասխանեց նա.
կողքիս սենեակում ապրում են մի բժիշկ և մի դե-
ղավաճառ, դէմ ու դէմս— դագաղագործ, իսկ տա-
նըս ետեւը գերեզմանատունն է:

— Մի՞թէ . . . :

— Սպասիր, դեռ չեմ պրծել. վերեւը բնակվում է
մի մանկաբարձուհի, ներքեւ— կոտրած ոսկուրի ուղ-
ղող և հենց միւս փողոցումն էլ— ձրի հիւանդանոց:

— Ուրեմն լաւ տունն է երևում:

— Լաւ է, ամեն բան պատրաստ է, միայն դժ-
բաղդաբար այս մի մեծ պակասութիւնն ունի, որ
մօտերքում ջուր չկայ խեղդուելու:

* *

Որբեայրին գնաց լուսանկարչի մօտ և խընդ-

րեց, որ իւր հանգուցեալ ամուսնու պատկերը
նկարի:

— Ունի՞ք նրա պատկերը ձեզ մօտ, հարցրեց լուսա-
նկարիչը:

— Ել գլուր կ'գայի ձեզ մօտ, եթէ ունենայի, պա-
տասխանեց այրին զարմացած:

— Բայց ես թիւսկալեմ կարող եմ նկարել նրա պատ-
կերը, քանի որ ինքը մեռած է, դուք էլ պատ-
կերը չունիք:

— Եթէ բանը դրան է մնում, ուրեմն հեշտ է.
ես ձեզ կտամ իւր անցաթուղթը, որի մէջ նշա-
նակուած է հասակը, տարիքը և դէմքի գծա-
գրութեան յատուկ նշանները: Տեսնա՞ք որ դրա
ճարն էլ կայ, ասաց այրին ուրախանալով:

* *

Մի պարոն պատահեց իւր դերձակին և տե-
սաւ, որ ետեւից մի փոքր երեխայ է գնում:

— Երեւում է, որ ձեր որդին է, ասաց պարոնը:

— Այո, պատասխանեց դերձակը:

— Ես նմանութիւնը հենց առաջին հայեացքից
նկատեցի:

— Բայց բոլորովին ինձ չի նմանվում, վրայ բե-
րեց դերձակը, որովհետեւ խորդ որդիս է:

— Ի հարկէ ես ձեզ չնմանեցրի. ես զարմանալի
նմանութիւն գտայ երեխայի բլիւզի և իմ վերջին
անգամ ձեզ կարել տուած վերարկուիս կտորի մէջ,

որի համար, իշոււմ էք, բաւականին շատ կտոր
գնաց...:

* *

Մի կին գանգատուեց զօրքի հրամանատարին,
թէ զինուորները իւր տուներ կոչուպտեցին:

— Բոլորը տարան, հարցրեց նա կնոջը:

— Շատ քիչ բան թողին:

— Ուրեմն դրանք իմ զօրքերից չեն եղել, ասաց
հրամանատարը, եթէ իմից լինէին. ոչ մի բան
չէին թողնիլ:

* *

Գրաֆ Բէռուսի Բաբօտէնը կամենալով հասկա-
ցողութիւն տալ մի շատ մաքրասէր կնոջ մասին,
ասաց.

— Այն օդը, որ նա արտաշնչում է, աւելի մա-
քուր է, քան այն — որ ներս է շնչում:

* *

Լօնդոնում մի աղախին մեղադրվում էր մի
զոյգ մետաքսէ գուլպայ գողանալու համար:

Դատաւորն արդարացրեց, որովհետեւ նա գո-
ղացել էր ոչ թէ զոյգ, այլ երկու զանազան հա-
տեր:

* *

Բենեդիկտոս XIV պապը Հռոմի փողոցների
մաքրութեան վերահսկողութիւնը յանձնել էր եպիս-
կոպոսներից մէկին, բայց վերջինս չափազանց ան-
հոգ էր դէպի իւր պարտականութիւնը:

Մի անգամ պապն իմանալով, որ եպիսկո-
պոսը կարգինալներից մէկին այցելելու համար ամե-
նացեխոտ փողոցով պիտի անցնի, ինքն էլ անմիջա-
պէս ուղևորուեց այնտեղ՝ նոյն փողոցով:

Հռոմի սովորութեան համեմատ՝ թէ կարգի-
նալ, թէ եպիսկոպոս բաց կառքում նստած ժա-
մանակ եթէ պատահէր եկեղեցու գլխին — պապին,
իսկոյն պիտի իջնէր կառքից և ծնկաչոք մօտ գը-
նալով սրբազնագոյն հօր օրհնութիւնն առնէր:

Չաղլիկ եպիսկոպոսը պապին տեսաւ թէ չէ,
ցած իջաւ կառքից, չոքեց ծնկաչափ ցեխոտ փողո-
ցում և այդպէս առաջ գնաց մինչև պապի կառքը,
որ բաւական հեռու էր: Պապն օրհնեց նրան և մի
քանի րոպէ ողորմածաբար սկսեց խօսել զանազան
բաների վրայ. ապա բարեկամաբար գլուխ տուաւ
և շարունակեց ճանապարհը:

Նոյն օրն իրիկնագէմին այնպէս մաքրուած ու
յստակուած էր այն փողոցը, որ դժուար թէ ճա-
նաչուէր:

* *

Մի անգամ թատրոնում Շէկսպիրի «Իլլարդ
III»-ը ներկայացնելու միջոցին, Շէկսպիրը նկատեց,
որ դերասաններից մէկը մի ինչ-որ խորհրդաւոր
կերպով խօսակցում է մի չափազանց գեղեցիկ կնոջ
հետ: Հռչակաւոր դրամատուրգը յաջողեցրեց ան-
նկատելի կերպով մօտենալ և լսել նրանց բոլոր խօ-
սակցութիւնը:

Գեղեցկուհին ասում էր դերասանին, որ նա ժամը 10-ին գալ իւր պատուհանը բաղխի և «ով է» հարցմանը պատասխանի «Ի՛նչարդ III-րդ»:

Շէկսպիրը սիրում էր կանանց վրայ յաղթանակ տանելը, և հենց այս անգամ էլ որոշեց օգտուել իւր լսած գաղտուկ խօսակցութիւնից:

Որոշեալ ժամանակից $\frac{1}{4}$ ժամ առաջ նա մօտեցաւ գեղեցկուհու պատուհանին և բաղխեց:

— Ո՞վ է, հարցրեց գեղեցկուհին:

— Ի՛նչարդ III-րդ, բաւական ցած ձայնով պատասխանեց Շէկսպիրը:

Գեղեցկուհին բաց արաւ դուռը, ներս թողեց և յանկարծ իւր առաջ տեսնելով մի ուրիշ մարդու, շփոթուեց. սակայն վաղուց ճանաչելով այդ չարաճճիին, նրա գալուց ամենևին չվերաւորուեց էլ:

Ուղիղ ժամը 10-ին պատուհանը բաղխեցին:

— Ո՞վ է, ցած ձայնով հարցրեց Շէկսպիրը:

— Ի՛նչարդ III-րդ, պատասխանեց դերասանը:

— Ափսոս, վրայ բերեց մեծ հեղինակը, Ի՛նչարդ III-րդ փոքր ինչ ուշացաւ և Վիլլեամ Յաղթողն արդէն յաղթել է Բերրիին: Եւ ճշմարիտ. Շէկսպիրն այս անգամ տիրեց գեղեցկուհու հոգուն:

* *

Մի եւրոպացի մտնելով Զիկաբօյի (Ամերիկայում) ոստիկանատուն՝ յայտնեց, որ պիտի բողոքի իւր կրած վնասն ստանալու համար:

— Ի՞նչ է ձեր վնասը, հարցրեց ծառայողը:

— Երկաթուղու գնացքին պատահած դժբաղդութեան ժամանակ կողքի երկու ոսկուը կտրուեց:

— Ի՞նչպէս էք ուղում մի չնչին բանի համար բողոքել, պարոն, — ասաց խօսակիցը, — քանի որ նորերումս այստեղ թափուած 32 բոլորովին ջարդ ու խուրդ եղած մեռեալներ ունէինք, բայց նրանցից ոչ մէկի մօքովն էլ չանցաւ երկաթուղու վարչութեան դէմ բողոքել:

* *

Գերմանական րայխստագի վերջին նիստում պատգամաւոր Վիլհմանը ստուգում էր պատգամաւորական ժողովի անդամների ցուցակը: Նա կարգում էր անունները և անուան տէրը պատասխանում էր «այստեղ էմ»: Վիլհմանը հասնելով իւր անունը, կարգաց և ի հարկէ պատասխան չստացաւ:

Այն ժամանակ նա կրկնեց նոյնը, միայն այս անգամ ձայնը մի քիչ բարձրացնելով:

Ընդհանուրի ծիծաղը նրան սթափեցրեց ինքնամոռացութիւնից. նա երրորդ անգամ աւելի ևս բարձր արտասանեց.

— Պատգամաւոր Վիլհման, և ծիծաղելով պատասխանեց.

— Այստեղ եմ:

* *

— Ես, ասում էր վարսավիրը, բիրժայից վերա-

դարձող մարդկանց երեսը վեր անելիս կրկնապատիկ վճար եմ պահանջում:

— Ինչո՞ւ, հարցրին նրան:

— Որովհետեւ այնտեղից բոլոր վերադարձողներին երեսները սովորականից երկու անգամ աւելի մեծացած ու ձգուած են լինում

* *

1866 թ. ֆրանսիական կայսրը բացէ ի բաց մերժեց աւստրիացիներից առաջարկուած դաշնադրութիւնն՝ ասելով.

— Ես չեմ կարող դաշն կապել լիւրի հետ:

Իսկ 1870 թ. ֆրանսիական զեսպանի առաջարկին՝ որ աւստրիացիք դաշն կապեն ֆրանսիացոց հետ, — աւստրիական արքունական կանցլերը պատասխանեց.

— Ես չեմ կարող դաշն կապել Գալիի հետ:

* *

Պրուսացոց Ֆրիդրիխ-Վիլհելմ III-ը կայսրը մի անգամ գնացել էր թատրոն, ուր այդ օրը ներկայացնում էին վաղուց մոռացուած «Կասսանդրա» պիեսը:

Ներկայացումն այնքան վատ անցաւ և այնպէս զզուացրեց կայսրին, որ նա հենց առաջին գործողութիւնից յետոյ դուրս եկաւ և տեսաւ, որ ուղեկցող ծառան խոր քնած է:

Կայսերական ադիւտանտը նկատելով այս, բարկացած վազեց դէպի քնող ծառան, որ արթնացնի:

Կայսրը լետ կանչեց նրան՝ ասելով.

— Թող քնի, թող. երեւի խեղճը պիտեսպին լսելիս է եղել:

* *

— Զարմանալի բան, — ասաց տան տիրուհին նոր ստացած նամակի ծրարը բանալով, — իմ Վալդեան այնպէս է գրում, ինչպէս Պետրոսը:

— Բոլորովին ուղիղ է, տիկին, վրայ բերեց աղախինն աչքի պոչով նամակին նայելով. այս վեցերորդ անգամն է, որ զանազան տեղերից և զանազան պարոններից նամակներ են գալիս, և ո՞վ զարմանք, բոլորը միևնույն պոչերով:

* *

— Ինչպէս որ պատուիրեցի, վանաներն ընդունում էք, հարցրեց բժիշկը հիւանդին:

— Այո, պ. բժիշկ, բայց մի բան խնդրեմ. դուք ինձ ասացիք՝ 40 վաննա ընդունեմ 25° տաքութեամբ. արդեօք չե՞ կարելի, ժամանակ վաստակելու համար, 20 վաննա ընդունեմ 50 աստիճան տաքութեամբ:

* *

Ամուսինները երգուեցին, որ ով իրենցից սուտ խօսի, միւսն իրաւունք ունենայ ստախօսին այս հարցը տալու — «Ինչպէս ես սիրում ինձ», և նա պարտաւորուած, առանց ոչինչ ծածկելու, պարզ խոստովանուի, թէ ինչպէս է սիրում: Մի անգամ մարդու կին հրաւիրուած էին մի տեղ. Ամուսինը հենց

նոր էր վերկացել թղթաղախի սեղանից՝ կինը մօտեցաւ.

— Շատ տարուեցիք, սիրելիս:

— Ենպէս . . . դատարկ բան:

— Ի՞նչպէս ես սիրում ինձ, հարցրեց կինը:

— Երեք ուրբալի եօթանասուն և հինգ կոպէկ, շտապով պատասխանեց մարդը:

ձաշելուց յետոյ կինը նորից մօտեցաւ.

— Կարծեմ շատ խմեցիր:

— Մի բաժակ մադեր, սիրելիս ուրիշ ոչինչ:

— Ի՞նչպէս ես սիրում ինձ:

— Հինգ բաժակ՝ կոնեակ, հինգ բաժակ՝ սլօրտեր և հինգ բաժակ մադեր, շտապով ուղղեց նա սխալը:

* *

— Լիդեա, ինչո՞ւ դուք խլում էք ձեր ձեռքը, երբ ես համբուրում եմ, — չէ՞ որ դա ընդունուած կարգ է, գանգատուեց տարիքն անցրած պարոնը նորատի գեղեցիկ օրիորդին:

— Որովհետեւ դուք ուսիցս շատ մօտիկ էք համբուրում:

— Ե՛. . . միևնոյն չէ. նա էլ ձեռք է, միայն հակառակ ծալրից:

Մէկին համրի դեր էին տուել կատարելու, որին երկար ու բարակ բացատրելուց յետոյ հարցրին.

— Հասկացա՞ր անելիքդ:

— Այ՛ մարդ, երեխայ խօ չեմ, ի հարկէ հասկացայ. դու միայն այս ասա ինձ, թէ Ի՞նչ պէ՛տ է Խօսե՛մ:

* *

Ժլատը եղբօրից նամակ ստացաւ, որով իրենից խնդրում էր 100 մանէթ. նա պատասխանեց.

«Սիրելի եղբայր, քո այն նամակը, որով «խնդրում ես 100 մանէթ ուղարկել, չեմ ստացել. «ուրեմն շատ պարզ է, թէ ինչու չեմ ուղարկում»:

Յմահ քո սրտացաւ Օհանէս:

* *

Որսորդին պատահեց անտառի պահապանը:

— Ձեզ ո՞վ թոյլ տուեց այստեղ որսալու:

— Ինքն անտառի տէրը, պատասխանեց որսորդը:

— Տեսնեմ թոյլտուութեան տոմսակը:

— Բայց նա բերանացի թոյլ տուեց:

— «Բերանացին» լինի, ցոյց տուր, շատ մի խօսիր, բարկացաւ պահապանը:

* *

Հարուստ գիւղացու վրայ դաշտում լարձակուեց աւազակը և ուզում էր կողոպտել:

— Լսիր, ասաց գիւղացին լրջօրէն, փողիս քսակը ես կ'տամ քեզ, միայն այն երկու ընկերներիդ ասա, որ ինձ ձեռք չտան:

Աւագակը զարմացաւ թէ ինչ երկու ընկեր-
ներ են դրանք, և յետ նայեց: Այդ յարմար ըոպէից
օգտուեց գիւղացին և ձեռի կոմբալազլուխ «Թլա-
մազով» մի լո՛ւ քու հաւանած թլամագեց, պարան
գցեց աւագակին և հանգիստ շարունակեց ճանա-
պարհը:

* *

Կինը վրայ հասաւ մարդուն հենց այն միջո-
ցին, երբ նա համբուրում էր աղախնուն:

— Վլադիմիր, ինչ է նշանակում այդ. դու համ-
բուրեցի՞ր նրան... Տէր իմ Աստուած... մի՞թէ այդ
ուղիղ է, ասաց կինը հազիւ ոտի վրայ կանգնե-
լով:

— Դժբաղդաբար այժ, պատասխանեց նա փիլի-
սոփայօրէն, և գիտես ինչո՞ւ. եթէ ես այդ ինքս
անձամբ չանէի, կարծում եմ, որ ամենեւին չէի
հաւտալ այդ մասին ինչ բամբաստողներին:

* *

— Զարմանալի բան, — ասաց թատրոնական կառա-
վարիչը կուլիսներում մօտը կանգնող դերասա-
նին, — այնքան անշնորհք է այս պարոնը, որ ինչքան
էլ լաւ դեր ենք տալիս, ոչ մի անգամ դուրս չի
կանչվում:

— Երևակայեցէք, մի անգամ կանչեցին, ասաց
խօսակից դերասանը:

— Մի՞թէ... ինչ դերում:

— Այնքան էլ լաւ չեմ լիշում, բայց կարծեմ
հարբածի դերում էր, և այնքան բնական խաղաց,
որ միւս օրը կանչեցին «սպիանա»:

Ա.Ռ.ԱՋԻՆ ԳՐԳԻ ՎԵՐՋԸ:



*
— Վերադառնալով ինչ մի շարժիչ կազմով
— Որ Եւրոպայի մէջ — (պարտաւոր)
*

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր .

ԵՐԵՍ.	ՏՈՂ.	ՏՊՈԽԱԾ Է.	ՊԷՏԻ Է ԼԻՆԻ.
9	8 վերևից	Շ-ր-ր	Շ-ր-ր-ի
11	3 —	քիչի:	քիչի*):
12	5 ներքևից	Իսկոյն	Իսկոյն,- Կըր-
		կնուած է մի քանի տեղ:	
27	1 վեր.	ուղղ	ուղղտ,- Կըր-
		կնուած է մինչև 134 եր. մի քանի տեղ:	
37	13 ներք.	կիւրի.	կիւրի:
41	12 վեր.	Տունդ	— Տունդ, Կըր-
		կնուած է մի քանի տեղ:	
65	2 —	գրուած	սուտ
—	5 —	լ նէր	լինէր
83	5 —	գողացել երևինց	գողացել է երևինց
84	7 ներք.	լօռ	լօխ
86	1 վեր.	էր	էր
89	6 —	էո	էս
90	10 ներք.	ուշուց	ուշունց
102	3 վեր.	սայլը	սայլը
109	10 —	հարմարցնելով:	յարմարց- նելով:
110	8 ներք.	հա-ճախ	յա-ճախ
111	7 վ. Не даешь, не даешь - Не даешь, не даешь		
122	13 ներք.	խայքը	երկխայքը
131	11 վեր.	— Եղնատէրը	Եղնատէրը
149	1 ներք.	երջացնում	վերջացնում
153	14 —	ժամանա ից	ժամանակից
158	6 վեր.	նեկ,	նեկ,
160	14 ներք.	գիրի է:	գերի է:
161	1 վեր.	գիտնական Գրոնտը Դէպի	գիտնականը Դէպի

CONTENTS

1. The Nature of the Problem	1
2. The Scope of the Problem	2
3. The Method of the Problem	3
4. The Results of the Problem	4
5. The Conclusions of the Problem	5
6. The Appendixes of the Problem	6
7. The Bibliography of the Problem	7
8. The Index of the Problem	8
9. The List of the Problem	9
10. The Table of the Problem	10
11. The Figure of the Problem	11
12. The Map of the Problem	12
13. The Photograph of the Problem	13
14. The Drawing of the Problem	14
15. The Model of the Problem	15
16. The Experiment of the Problem	16
17. The Calculation of the Problem	17
18. The Computation of the Problem	18
19. The Estimation of the Problem	19
20. The Measurement of the Problem	20
21. The Observation of the Problem	21
22. The Collection of the Problem	22
23. The Analysis of the Problem	23
24. The Synthesis of the Problem	24
25. The Evaluation of the Problem	25
26. The Interpretation of the Problem	26
27. The Application of the Problem	27
28. The Extension of the Problem	28
29. The Limitation of the Problem	29
30. The Generalization of the Problem	30
31. The Specialization of the Problem	31
32. The Abstraction of the Problem	32
33. The Concretization of the Problem	33
34. The Idealization of the Problem	34
35. The Realization of the Problem	35
36. The Actualization of the Problem	36
37. The Objectivation of the Problem	37
38. The Subjectivation of the Problem	38
39. The Externalization of the Problem	39
40. The Internalization of the Problem	40
41. The Objectification of the Problem	41
42. The Subjectification of the Problem	42
43. The Externalization of the Problem	43
44. The Internalization of the Problem	44
45. The Objectification of the Problem	45
46. The Subjectification of the Problem	46
47. The Externalization of the Problem	47
48. The Internalization of the Problem	48
49. The Objectification of the Problem	49
50. The Subjectification of the Problem	50

20 u.

2013

2338

« Ազգային գրադարան



NL0057255

